



21-րդ դար

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԱՆԴԵՍ

3 (25)

ԵՐԵՎԱՆ

2009

21-րդ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից

3 (25), 2009

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սպարտակ Սեյրանյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Գագիկ Հարությունյան (координатор)
Տիգրան Տարսիսյան
Մուշեղ Լալայան
Սևակ Տարսիսյան
Սերգեյ Գրինյան
Տիգրան Տարսիսյան

РЕДАКЦИЯ

Գագիկ Հարությունյան (главный редактор)
Սևակ Տարսիսյան
(заместитель гл. редактора)
Լուսինե Բաղրամյան
(ответственный секретарь)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան
Քոնարիկ Կարաուղլանյան
(ответственный редактор)
Էդուարդ Դանիելյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրաչ Քայադյան

Նոր տեղեկատվամիջոցներ և տեղեկատվական
հասարակություն 3

Ալեք Էպտեյն

Ժողովուրդը որպես տրանսկոնտինենտալ
քաղաքակրթություն. հրեությունը, Իսրայել
պետությունը և արդի սփյուռքը
սեկուլյարացման դարաշրջանում 22

Տիգրան Սարգսյան

Ազգային բրենդի կարևորությունը 41

Սերոբ Սուջյան

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
ժողովրդագրական իրավիճակը 49

Վաչե Քալաշյան

Պետական կառավարում. միջազգային փորձը
և ՀՀ առկա իրողությունները 67

Լիլիթ Սովսիսյան

Լեզվաքաղաքականությունը ժամանակակից
Ադրբեջանում 86

Լևոն Հովսեփյան

Թուրքիայի հակաօդային և հակահրթիռային
համակարգերը 99

Հուշագիր հեղինակին 114

ՆՈՐ ՏԵՂԵԿԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրաչ Բայադյան

Հոդվածում ամփոփված են նոր տեղեկատվամիջոցներին (նոր մեդիա) և տեղեկատվական հասարակությանը նվիրված ընթացիկ քննարկումները, որոնցում վերանայվում են լայն տարածում գտած այդ տերմինների իմաստային փոփոխությունները և դրանց հետ կապվող հասարակական ակնկալիքները: Վերջին բաժնում համառոտ դիտարկվում են Հայաստանում տեղեկատվական հասարակության կառուցման նախադրյալները:

Վերջին տարիների գլոբալ զարգացումները կարող էին եթե ոչ սասանել, ապա շոշափելիորեն չափավորել հավատարմ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ)՝ արմատական ու սրընթաց տնտեսական և սոցիալական փոփոխություններ հարուցելու կարողության նկատմամբ: Խոսքը մասնավորապես 1990-ականների վերջի այսպես կոչված «dotcom»-ային բումի տխուր և սթափեցնող ավարտի մասին է, որը զգալիորեն մեղմեց համատարած «տեխնոլոգիական ոգևորությունը»: Բայցևայնպես, նոր հասարակության առաջացման՝ տեխնոլոգիական զարգացումներով առաջնորդվող մոդելն այսօր էլ մնում է ամենազանգվածայինն ու ամենաազդեցիկը, և առավելապես այս հանդերձանքով է գալիք աշխարհի պատկերը ներկայացվում ու մատուցվում նաև ոչ արևմտյան հասարակություններին: Եվրահանձնաժողովի հաղորդագրությունը (29 սեպտեմբերի, 2008թ.) մեջբերում է «Տեղեկատվական հասարակության և մեդիայի» ծրագրերի պատասխանատու Վիվիան Ռեդինգի պնդումը. «Ապագայի ինտերնետը արմատապես կփոխի մեր հասարակությունը...»: Խոսքը այսպես կոչված *Web 3.0*-ի մասին է. հաղորդակցության աննախադեպ արագություն, բջջային կապի հնարավորությունների ընդլայնում և այլն:

Միաժամանակ, ինչպես արձանագրում է բրիտանացի տեսաբան Նիկոլաս Գարնհամը, «տեղեկատվական հասարակություն» (ՏՀ) անունը «աշխարհում դարձել է տիրապետող տերմին ծրագրային քաղաքականության դիսկուրսի մեջ. ոչ միայն հաղորդակցությունների և մշակութային, այլև տնտեսական և սոցիալական քաղաքականության ամբողջ տիրույթում: Բացի այդ, ակադեմիական դիսկուրսում այն դարձել է առավել սիրված տերմինը՝ նկա-

րագրելու, թե որոնք են ժամանակակից տնտեսական, սոցիալական և մշակութային գլխավոր միտումները»: Այդուհանդերձ, էական տարաձայնություններ կան տերմինի բովանդակության վերաբերյալ: «ՏՀ-ի շուրջ շարունակվող բանավեճերն այսօր ավելի շատ այն մասին են, թե իրարից ինչով են տարբերվում ՏՀ զանազան տարբերակները, ինչպես են դրանք սահմանում սոցիալական կառույցի և զարգացման խնդիրները, ինչն են համարում տնտեսական և սոցիալական փոփոխության գլխավոր շարժիչ և դրանից ծրագրային քաղաքականության ինչ հանձնարարականներ են հետևում» [1, p. 287]:

Մի քանի տարվա համեմատական անդորրից հետո ՀՀ-ում վերստին հրատապություն ստացավ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հարցը: 2008-ին հրապարակ հանվեց տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) զարգացման նոր հայեցակարգ, որտեղ դիտարկվում է նաև Հայաստանում տեղեկատվական հասարակության (ՏՀ) կառուցման հարցը: Այս փաստաթղթում, թեև զսպված ձևով, թարմացվում է մեր «մեծ ներուժի» և խոստումնալից ապագայի թեման, թեև ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի տվյալների՝ վերջին մի քանի տարում ՀՀ-ի դիրքերն այս ասպարեզում անշեղորեն վատանում են:

Տարիների փորձը ցույց է տալիս, որ մեզնում նույնպես տարիներ շարունակ իշխել են տեխնոլոգիական լավատեսությունը և տեխնոլոգիաների փոխակերպող ուժի նկատմամբ դյուրահավատությունը, որ, քննադատական մեկնաբանական կարողության և տեսական գիտելիքի անբավարարության պայմաններում, իրենց ցայտուն արտահայտությունն են գտել տարատեսակ հայեցակարգերում և ծրագրային փաստաթղթերում: Մա վերաբերում է նաև ՏՀ-ի մասին կատարվող պնդումներին, ինչպես նաև այդ տերմինի անշրջահայաց օգտագործմանը:

Հոդվածի առաջին երկու բաժիններում ներկայացվում են նոր տեղեկատվամիջոցների և ՏՀ-ի՝ փոխկապակցված և փոխլրացնող թեմաները, դրանց ընթացիկ քննարկումները, իսկ երրորդ բաժինը նվիրված է ՀՀ-ում ՏՀ հեռանկարի քննությանը:

1. Նոր և հին «նոր մեղիս»

«Տեղեկատվական դարաշրջան», «տեղեկատվական հասարակություն» և լայն տարածում ստացած այլ հասկացություններից մեկն է «նոր մեղիս»-ն (ի հակադրություն «հին» կամ զանգվածային մեղիայի), որը կոչված է անվանելու և շեշտելու այն սկզբունքային փոխակերպումը, որ, ինչպես ենթադրվում է, տեղի է ունեցել տեղեկատվամիջոցների ոլորտում: Ենթադրվում է նաև, որ այս տեխնոլոգիական փոփոխությունները հարուցում են համապատասխան սոցիալական, մշակութային և այլ փոփոխություններ: Սակայն վերջին տարի-

ների զարգացումները բնավ չեն խոսում այս «տեխնոլոգիական լավատեսության» օգտին: Ոչ միայն նվազում է նոր տեխնոլոգիաների՝ արմատական և սրբնթաց տնտեսական ու սոցիալական փոփոխություններ հարուցելու կարողության նկատմամբ ոգևորությունը, այլև ավելանում են հին և նոր տեխնոլոգիաների փոխհարաբերությունները վերագնահատող և զարգացման նոր՝ նվազ հեղափոխական հեռանկարներ ուրվագծող ուսումնասիրությունները:

Հակառակ SՏՏ-ին և մասնավորապես՝ ինտերնետին վերագրվող աննախադեպ, հեղափոխական նշանակությանը, վերջին տասնամյակների դրանց զարգացման և տարածման պատմությունը, ինչպես նշում են մի շարք տեսաբաններ, լիովին տեղավորվում է տնտեսական և սոցիալական առաջընթացի և դրանում տեխնոլոգիաների՝ որպես վճռական գործոնի, արևմտյան գաղափարաբանության շրջանակում: Նախորդ դարի 60-ականներին արևմտյան հասարակություններում կատարված սոցիալական և մշակութային բեկումը, ի թիվս այլ բաների, տեղ բացեց նաև ժամանակակից տեխնոլոգիաների քննադատական ընկալման համար: Ընկալում, որը, դուրս գալով քննադատական տեսության շրջանակից, հասարակության մեջ դրսևորվեց բնապահպանական գիտակցության ձևավորման և շարժումների տեսքով: Մթափության մյուս ազդակը նույն տարիներին այսպես կոչված զարգացող երկրներում արևմտյան տեխնոլոգիաների տարածման տխուր արդյունքներն էին:

Այդուհանդերձ, համակարգչային տեխնոլոգիաների արագ զարգացումը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միավորումը 1980-ականներին ձևավորեցին նոր սպասելիքներ: Այժմ արդեն հասարակական բարեշրջման, սոցիալական փոփոխությունների ընթացքը պետք է առաջ մղվեր SՏՏ-ով: Շարունակելով համեմատությունը՝ նշենք, որ այս փոփոխությունը վերաբերում է նաև ոչ արևմտյան հասարակություններին, որտեղ զարգացման գաղափարաբանությունը և ռազմավարություններն աստիճանաբար վերահաստատվեցին և վերաձևակերպվեցին «SՏՏ և զարգացում» լեզվով:

Ք.Ռոբինսոնը և Ֆ.Վեբսթերն իրենց քննադատական վերլուծության մեջ առանձնացնում են վերոհիշյալ գաղափարաբանության մի քանի կարևոր ասպեկտներ: Այստեղ առաջին անբացահայտ ենթադրությունն այն է, որ տեխնոլոգիան բարեբեր է, որ այն հասարակության մեջ հարուցում է փոփոխություններ, և այդ փոփոխությունները դրական են: Երկրորդ բնութագրական ասպեկտը տեխնոլոգիայի ապասոցիալականացումն է, երբ դրա ստեղծման ընթացքն անտեսվում է, դուրս թողնվում պատմությունից. «տեխնոլոգիան մուտք է գործում հասարակություն միանգամայն անսպասելի ձևով, թեև պետք է ունենա հսկայական ազդեցություն»: Իրականում, ընդունված հոետորության շրջանակում հնարավոր էլ չէ այդ պատմությունն անել, իսկ պատմելու դեպքում, տեխնոլոգիայի ծագումն անխուսափելիորեն առասպելականացվում է: Վեր-

ջապես, թեև տեխնոլոգիան ներկայացվում է որպես մի բան, որն անհատին և հասարակությանը տարբեր ընտրանքների հնարավորություն է ընձեռում, այդուհանդերձ, դրանց հիմքում ընկած է անխուսափելիությունը: Այսինքն՝ տեխնոլոգիան ինքը այլընտրանք չունի. «Համատարած համաձայնություն կա առ այն, որ նոր տեխնոլոգիաները պետք է որդեգրվեն, և որքան շուտ՝ այնքան լավ» [2, p. 68-69]:

Եվ ահա, ինչպես եզրակացնում են Ք.Ռոբինսը և Ֆ.Վեբսթերը, «Այսօրվա տեխնոլոգիայի ուղադրության կենտրոնում են այնպիսի բաներ, ինչպիսիք են «վիրտուալ իրականությունը», «տեղեկատվական հասարակության» առաջացումը, կյանքը «կիրեռտարածության» մեջ, ինտերնետի կարողությունը՝ նպաստելու տեղեկատվության փոխանակմանը և վիրտուալ համայնքների առաջացմանը...» [2, p. 66]:

Այսպիսով՝ ՏՀՏ-ի կամ նոր մեդիայի (ՆՄ) հարուցած տևական ոգևորությունը զգալիորեն պայմանավորված էր այն գաղափարաբանական լիցքով, որով առհասարակ հագեցած են Արևմուտքում առաջընթացի հոետորության մաս կազմող տեխնոլոգիաները: Մյուս կողմից՝ այս ոգևորությունն առնչվում է 1980-ականներին ձևավորվող նոր հասարակական իրադրությանը, որը գուգորդվում է հենց համակարգչային տեխնոլոգիաների, մեդիայի և հաղորդակցության ասպարեզում ի հայտ եկած նոր իրողությունների հետ, ինչպես նաև «ընդհանրապես 1960-ականներին հաջորդող ժամանակաշրջանի աշխարհի հետ, որը բնութագրվում էր գլոբալացման սաստկացող ընթացքով, անցմամբ արդիությունից դեպի հետարդիություն... և արդյունաբերական դարաշրջանից դեպի այսպես կոչված տեղեկատվական դարաշրջան» [3, p. 237]:

Իսկապես, որոշակի մշակութային տեղաշարժերին և տեխնոլոգիական նորարարություններին զուգահեռ, փոխկապակցված ընթացքը նոր մեդիայի տեխնոլոգիաների համար խոստումնալից հեռանկար էր ստեղծում: Պատահական չէ, որ «1990-ականներին տեխնոլոգիայի մի շարք տեսաբաններ, ոգևորված «նոր տնտեսության» խոստումով, որն առաջ էր մղվում արագորեն ընդարձակվող ինտերնետով, պնդում էին, թե վերջին հաշվով «թվանշային աշխարհի» հոսքային և ճկուն բնույթը թույլ կտա գերազանցել ավանդական մեդիայի բիզնեսի մոդելները և արդյունաբերական կառուցվածքները» [4, p. 275]: Նկարագրվում էին նաև արմատական հասարակական փոփոխություններ հարուցելու նոր տեխնոլոգիաների կարողությունները. «Տեղաշարժելով իշխանությունը (իրավասությունը) էլիտաներից և էսթաբլիշմենթներից՝ նոր տեխնոլոգիաները կտրուկ ձևով փոխում են իշխանության մշակութային ավասարակշռությունը...» [4, p. 276]: Այս առումով, 2000-ականները թե՛ մեծապես մեղմեցին այս ոգևորությունը, թե՛ փոխեցին այն հեռանկարը, որտեղ զետեղվում և ըստ այդմ՝ ուսումնասիրվում և գնահատվում էին նոր տեղեկատվամիջոցները: Խիստ համառոտ ձևով հետևենք այս ընթացքին:

Սովորաբար ՆՄ-ն ընդհանրապես և հին մեդիայի նկատմամբ այս տեխնոլոգիաների առավելությունները (ասենք՝ ինտերնետի՝ որպես հաղորդակցության միջոցի մրցակցային գերազանցությունը և հեղափոխական հնարավորությունները) նկարագրվում են ՆՄ-ի համար բնութագրական մի խումբ հատկանիշների լեզվով, որոնք հաճախ անվանվում են «սկզբունքներ», «էական առանձնահատկություններ» կամ «ընդհանուր միտումներ» [4, p. 276-277]: Ահա դրանցից մի քանիսը՝ փոխազդունություն (ինտերակտիվություն), հիպերտեքստ կամ հիպերմեդիա, (տեքստի) ոչ գծայնություն և պատումի կառուցման նոր ռազմավարություններ, վիրտուալություն, թվանշայնություն, անհատականացում կամ ապագանգվածայնացում, հարամիտում և այլն: Հասկանալի է, որ այս առանձնահատկությունները փոխկապակցված են:

Փոխազդունությունը կամ ինտերակտիվությունը հաճախ ներկայացվում է որպես ՆՄ-ի (ի տարբերություն զանգվածային տեղեկատվամիջոցների, որոնց լսարանը դատապարտված է պասիվության) հիմնական հատկանիշը, թեև թվանշային տեխնոլոգիաները թույլ են տվել ստեղծել նաև ինտերակտիվ հեռուստատեսություն, որը դիտողին ընձեռում է առաջարկվող ցանկում առկա տեսանյութեր ընտրելու և դիտելու հնարավորություն: Ինտերակտիվությունն ամենապարզ ձևով կարելի է սահմանել որպես համակարգչով միջնորդված համակարգում օգտագործողի վերահսկողությամբ իրականացվող տեղեկատվության փոխանակում:

Հիպերտեքստը կազմակերպման հիմնական սկզբունքն է, որի վրա հիմնված է Համաշխարհային ուստը (*WWW*): Սա տեքստ է, որը գծային չէ և պարունակում է ուրիշ էջեր կամ փաստաթղթեր տանող կապեր (հղումներ): Կառուցման այս եղանակը թույլատրում է կարդալ տարբեր ուղիների ընտրություն (որոնք ոչ հաջորդական, ոչ գծային են), մի էջից մյուսը, մի գրությունից մյուսը ցատկելու հնարավորություն՝ իհարկե, միայն հիպերտեքստը ստեղծողների նախատեսած կապերի օգնությամբ: Հիպերմեդիան հիպերտեքստ է, որը կարող է պարունակել նաև պատկերներ, ձայնային և վիդեոբաղադրիչներ:

Այդուհանդերձ, նոր մեդիայի տեխնոլոգիաների համար իրոք բնութագրական այս միտումների և գործընթացների, իսկ ավելի ճիշտ՝ նոր մեդիան այդպիսի «որոշիչ բնութագրիչների» օգնությամբ սահմանելու մեջ, ինչպես ընդգծում են որոշ տեսաբաններ, առկա են խնդրահարույց կողմեր: Նախ՝ ընդհանուր առմամբ, սա տեխնոլոգիական դետերմինիզմին բնորոշ մոտեցում է, «որտեղ մեդիա տեխնոլոգիաների իրական գործածումները դուրս են բերվում դրանց տեխնոլոգիական կարողություններից՝ անտեսելով մշակույթի, տնտեսության և իշխանության հարցերը» [4, p. 278]: Բացի այդ, ընդգծվում է, օրինակ, որ այդ բնութագրիչներն անհրաժեշտաբար նոր չեն և նման հատկություններ կարելի է գտնել նաև հին մեդիայի տեխնոլոգիաների մոտ: Միևնույն ժամանակ, այդ միտումները շատ հեռու են հստակ, թափանցիկ լինելուց և

կարիք ունեն քննության՝ ի հայտ բերելու համար դրանց խորքում ընկած իմաստը: Մա վերաբերում է, օրինակ, հարամիտմանը (*convergence*): Այստեղ այն հասկացվում է որպես հաղորդակցության, հեռարձակման և համակարգչային սեկտորների (կամ, սարքերի լեզվով ասած, հեռախոսի, հեռուստացույցի և համակարգչի)՝ տարբեր մակարդակներում կատարվող մերձեցում, որը հանգեցնում է հարամիտող տեխնոլոգիաների ձևափոխության, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների ստեղծման: Տեսաբաններից և փորձագետներից շատերն արձանագրում են, որ հարամիտումը սպասվածի պես արագ չի կատարվում և միաժամանակ հակված է արդարացնելու որոշակի կորպորատիվ գործարքներ, որոնց օրինակն է տեղեկատվական հսկա ընկերությունների՝ մենաշնորհային նպատակներ հետապնդող միաձուլումը: Այսինքն՝ ՆՄ-ի հոեոորությունն այս դեպքում ոչ միայն կանխատեսում է տեխնոլոգիական զարգացումները, այլև փորձում բացատրել կամ նույնիսկ արդարացնել ինչ-ինչ իրողություններ:

ՆՄ նշանավոր տեսաբաններից մեկը՝ Լև Մանովիչն ընդգծում է, որ ինքը խուսափում է օգտագործել *digital* (թվանշային) և *interactive* (փոխազդուն) բառերը, քանի որ, ըստ նրա, այդ հասկացությունները չափազանց լայն և ընդգրկուն են, որպեսզի լինեն օգտակար: Մասնավորապես համակարգչային հիմքով մեդիայի դեպքում նա ինտերակտիվություն տերմինը համարում է տավտոլոգիա. ժամանակակից մարդ-համակարգիչ ինտերֆեյսը ինտերակտիվ է ըստ սահմանման, քանի որ օգտվողին թույլ է տալիս վերահսկել համակարգիչը և մանիպուլացնել պաստառին ցուցադրվող տեղեկատվությունը: Փոխազդունության օրինակի վրա տեսնենք, թե Մանովիչն ինչպես է, զետեղելով ՆՄ-ն պատմական-մշակութային համատեքստում, վերագնահատում դրանց վերագրվող «առանձնահատկությունների» բացառիկ կամ աննախադեպ լինելու հանգամանքը:

Հասկանալի է, որ ներկայացման (պատկերման) ցանկացած եղանակ լսարանի համար բաց տեղեր է թողնում, որոնք պետք է լրացվեն սեփական գիտելիքի, երևակայության օգնությամբ: Բայց, ինչպես ընդգծում է տեսաբանը, սկսած 1920-ականներից, տեսողական նոր մշակույթին բնորոշ ներկայացման նոր կիսավերացական ոճը դիտողից պահանջում էր նվազագույն միջոցների օգնությամբ վերստանալ, վերակառուցել ներկայացվող առարկան: Ասենք՝ կինոմոնտաժը՝ որպես տեսողական պատումի ստեղծման միջոց, դիտողին ստիպում էր մտովի արագորեն լրացնել իրար անմիջականորեն չկապակցված պատկերների միջև առկա խզումը, ազատորեն տեղափոխվել մի մասից մյուսը և այլն: Վերջապես, 1960-ականներին, շարունակելով Ֆուտուրիզմի և Դադայի կիսատ թողածը, արվեստի նոր ձևերը՝ հեփենինգները, փերֆորմանսները և ինստալացիան, արվեստին հաղորդեցին բացահայտորեն մասնակցային բնույթ: Մա մի փոխակերպում էր, որը, ըստ մի շարք տեսաբանների, հող նա-

խապատրաստեց 1980-ականների փոխազդուն համակարգչային ինստալացիաների համար:

Այսպիսով՝ Մանովիչը եզրակացնում է. «Երբ «փոխազդուն մեդիա» հասկացությունը օգտագործում ենք բացառապես համակարգչային հիմքով մեդիայի նկատմամբ, ապա վտանգ կա, որ մենք փոխազդունությունը կմեկնաբանենք բացառապես՝ այն հավասարեցնելով օգտվողի և մեդիա առարկայի միջև ֆիզիկական փոխազդեցությանը (սեղմել կոճակը, ընտրել կապը (*link*), շարժել առարկան)՝ ի հաշիվ հոգեբանական փոխազդեցության: Բաց տեղերը լրացնելու, վարկածներ ձևավորելու, վերհիշելու և ճանաչելու հոգեբանական գործընթացները, որոնք մեզ պետք են ցանկացած տեքստ կամ պատկեր ըմբռնելու համար, սխալմամբ նույնացվում են փոխազդունության կապերի օբյեկտիվորեն գոյություն ունեցող կառուցվածքի հետ» [5, p. 18-61]:

Մյուս նկատվող տեղաշարժը ինտերնետի զարգացման տեմպերի և հարուցած փոխակերպումների և դրանց հետագա ընթացքի վերագնահատումը և ըստ այդմ՝ հին մեդիա-նոր մեդիա փոխհարաբերությունների վերանայումն է: Որպես հաղորդակցության և տեղեկատվության միջոց՝ ինտերնետն իսկապես շատ բան է տվել: Այն նշանակալի ազդեցություն է թողել ավանդական մեդիայի վրա՝ էական փոփոխություններ հարուցելով, օրինակ, երաժշտական ձայնագրության և հրատարակչության տիրույթներում: Հասարակության տարբեր խավերի, ինչպես նաև անհատներին ինտերնետը ինքնարտահայտման, շփման և ստեղծագործական աշխատանքի իրական հնարավորություններ է տվել:

Այդուհանդերձ, թվում է, թե այժմ արդեն բավարար հիմքեր կան՝ եզրակացնելու, որ ինտերնետը չդարձավ այնպիսի փոխակերպիչ ուժ, ինչպես կանխատեսում էին շատ վերլուծաբաններ: Առաջին պատճառը նրա անկարողությունն է՝ ծնելու մեծածավալ շահույթ, որն իր մասշտաբներով համեմատելի կլիներ, ասենք, հեռուստատեսության շահութաբերության հետ: Ուստի, ինտերնետի հետագա զարգացումն ապահովելու համար առաջարկվում է մշակել շահույթի պատշաճ մոդել, որը թույլ կտա ավելի արդյունավետորեն շահագործել ինտերնետի առավելությունները: Երկրորդը ցանցի թողունակության և հաղորդակցության արագության, ինչպես նաև մուտքի կամ մատչելիության հետ կապված խնդիրներն են: Որոշ ավանդական տեղեկատվամիջոցներ օնլայն դարձնելու համար պահանջվում է ցանցի ավելի մեծ թողունակություն, հաղորդակցության ավելի մեծ արագություն: Խոսքն առաջին հերթին հեռուստատեսության և կինոյի, սրանց՝ դեպի ինտերնետ տեղաշարժի լուրջ դժվարության մասին է: Միայն այդ տեխնիկական պայմաններն ապահովելուց հետո ինտերնետը կդառնա համագրավ տեղեկատվամիջոց, իսկ ինտերնետային հաղորդակցությունը՝ տիրապետող մեդիայի ձև: Իհարկե, նույնիսկ այս դեպքում վճարովի մատչելիությունը կշարունակի մնալ խանգարող գործոն:

Այսպիսով, հակառակ ինտերնետի տպավորիչ աճին, տարածման բարձր տեմպերին և շարունակվող կատարելագործմանը, առայժմ չի սպասվում, թե առաջիկայում այն իր եկամուտներով կարող է համեմատվել հեռարձակվող հեռուստատեսության հետ: Եթե ՆՄ առավել ընդգծվող առավելությունը փոխազդու հաղորդակցությունն է, ապա հին տեղեկատվամիջոցները պահպանում են զանգվածային լինելու առավելությունը, որը ձեռնտու է գովազդատուներին. հեռուստատեսային գովազդը առայժմ մնում է ամենագրավիչը և ամենաթանկը [4]:

Շարունակելով համեմատությունը՝ վերլուծաբաններն ուշադրություն են հրավիրում այն բանի վրա, որ այսօր էլ հեռուստատեսությունը մնում է նորությունների գլխավոր աղբյուրը: Ճիշտ է, նորությունների ասպարեզում ինտերնետը կարևոր ներդրում է կատարել՝ էապես ընդլայնելով մատչելի աղբյուրների քանակը, շարունակ թարմացնելով մատուցվող տեղեկատվությունը և տարբեր տեսակի փոքրամասնությունների այլընտրական տեղեկատվության մատչելիության պատեհություն ընձեռնելով, բայց ինտերնետի նորությունների մեծ մասը, որպես կանոն, վերցվում է ավանդական աղբյուրներից... Ուրեմն, ինտերնետը ոչ այնքան փոխարինում, որքան լրացնում է հին տեղեկատվամիջոցներին... Հին տեղեկատվամիջոցները դեռևս իշխում են լսարանին [4]:

Սպառողների մեծամասնությունը հակված չէ օգտագործել տեղեկատվական ցանցի տրամադրած ողջ բազմազանությունը, այլ գերադասում է այցելել ոստկայքերի նեղ շրջանակ: Ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել. «Ինչպես ինտերնետը չքանդեց ավանդական մեդիա արդյունաբերությունները, այդպես էլ ինտերնետի կանոնավոր գործածումը չփոխարինեց ուրիշ մեդիայի ձևերի սպառումը... Շատերն օգտագործում են մեդիայի տարբեր ձևեր միաժամանակ... Սա մուլտիմեդիայի հարամիտումը չէ, որ վաղուց ի վեր կանխատեսել են տեխնոլոգները և ապագայագետները, այլ տեղեկատվամիջոցների մրցունակության դրսևորում, որը մատնանշում է նոր, փոփոխվող և բարդ մեդիա-միջավայրերի ի հայտ գալը (օֆլայն և օնլայն, շարժուն և սևեռված, տեսողական և տեքստի վրա հիմնված տեխնոլոգիաներ)... Ուստի, կարող ենք եզրակացնել, որ նույնիսկ մի դարաշրջանում, երբ ինտերնետը նշանակալի ազդեցություն է թողել գոյություն ունեցող մեդիայի վրա, հնի և նորի փոխհարաբերության բնույթը հեռու է լինելուց պարզ, կանխատեսելի և անշրջելի» [4, p. 288]:

Հաղորդակցության տեսաբան, սոցիոլոգ Դեյվիդ Հոլմսը ՆՄ հարցին մոտենում է առաջին և երկրորդ մեդիայի դարաշրջանների պատմական տարբերակման տեսանկյունից: Նա նկատում է, որ երկու տեսակի դարաշրջանների միջև տարբերության տեսական ձևակերպման ջանքերը գազաթնակետին հասան 1990-ականների սկզբին, ինտերնետի՝ սպառողների տներ մտնելու

ալիքի վրա, իսկ ՆՄ-ի մասին մտածողության մեջ երկրորդ մեղիայի դարաշրջանի վերաբերյալ թեզը հաստատվեց 1990-ականների վերջին: Երկրորդ մեղիայի դարաշրջանի մասին այնպիսի մտածողներ, ինչպիսիք են Մ.Փոսթերը, Ջ.Ջիլդերը, Ն.Նեգրոպոնտեն և Պ.Լևին, հետևողականորեն պնդում էին, թե ինտերնետը և առհասարակ փոխազդու տեխնոլոգիաները սոցիալական կապակցության նախկին ձևերից հեռանալու սկզբունքային հնարավորություն են տալիս: Այն մարդկանց ազատագրում է տեղեկատվության կենտրոնացված ապարատներից՝ պետական թե կորպորատիվ վերահսկողությամբ, ինչի օրինակը հեռուստատեսությունն է: Դ.Հոլման ամփոփում է. «Այս պատմական տիպաբանության մեջ ժամանակաշրջանների դասակարգումը՝ ինտերակտիվության դար կամ ժամանակաշրջան, թվանշային դարաշրջան, ինտերնետի դարաշրջան կամ երկրորդ մեղիայի դարաշրջան, համարյա միշտ հակադրվում է զանգվածային մեղիայի «խավար» դարաշրջանին: Սա տեխնոլոգիայի մասին դիսկուրսի մի մասնավոր արտահայտություն է, որը ֆետիշացնում է նորը և շեշտում ցանկացած հնարավոր տարբերություն հնից» [6, p. 13]:

Հոլմանը անդրադառնում է և այն հանգամանքին, որ երկրորդ մեղիայի դարաշրջանի տեսաբանները ոչ միայն անտեսում են մեղիայի երկու դարաշրջանների միջև առկա շարունակականությունը, ինչպես նաև S2S մակաբուծական կախվածությունը հեռարձակումից, այլև տուրք են տալիս տեխնոլոգիական դետերմինիզմին, երբ երկու դարաշրջանները հավասարեցնում են համապատասխան կոթողային տեխնոլոգիական մշակումներին: Այս դեպքում հաղորդակցության տարբեր հնարավորությունները որոշադրվում են ավելի շատ տեխնոլոգիաների կողմից, «քան տեխնիկական, քաղաքական, սոցիալական և տնտեսական միջավայրերի միջև ռեկուրսիվ հարաբերություններով»: Ուստի, անհրաժեշտ է համարում «տարբերել հաղորդակցության միջավայրերի կառուցվածքը (ապակենտրոն, կենտրոնացված, մեկից շատերին, շատերից շատերին) այն տեխնիկական ձևերից, որոնցով այդ կառուցվածքն իրականացված է» [6, p. 1-19]:

2. Տեղեկատվական հասարակության տեսությունները և ընթացիկ քննարկումները

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առավել զարգացած երկրներում ձևավորվող հասարակությունը նկարագրել են բազմաթիվ ակնառու տեսաբաններ՝ Դանիել Բելլը, Էնթոնի Գիդդենսը, Յուրգեն Հաբերմասը, Միշել Ֆուկոն, Ժան Բոդրիյարը, Ժան-Ֆրանսուա Լիոտարը, Հերբերտ Շիլլերը, Մանուել Կաստելսը և այլք՝ առաջարկելով տարբեր անուններ՝ հետադարձաբարձրական հասարակություն, տեղեկատվական հասարակություն, ցանցային հասարակություն և այլն:

«Տեղեկատվական հասարակության տեսություններ» գրքի հեղինակ Ֆրենկ Վեբսթերը առանձնացնում է հինգ չափանիշներ, որոնցից յուրաքանչյուրով տվյալ տեսության մեջ բնութագրվում է նոր հասարակությունը. տեխնոլոգիական, տնտեսական, զբաղվածության ոլորտին վերաբերող, տարածական և մշակութային: Նա նոր հասարակության տեսաբաններին (և տեսությունները) բաժանում է երկու խմբի: Մի խմբում նրանք են, ովքեր ապացուցում են, որ ներկա դարաշրջանն արմատապես տարբերվում է նախորդից՝ դառնալով սոցիալական զարգացման շրջադարձային կետ: Մյուս կողմում այն գիտնականներն են, ովքեր, ընդունելով, որ ժամանակակից աշխարհում տեղեկատվությունն ստացել է առանձնահատուկ նշանակություն, այդուհանդերձ, պնդում են անցյալի և ներկայի միջև առկա շարունակականությունը: Վեբսթերի գրքի օգնությամբ համառոտ ձևով կանդրադառնամ երկու տեսական ուղղությունների, որոնք, թվում է, առավել տեղին են հայաստանյան իրադրությունը հասկանալու համար: Եթե ապագայագիտական (ֆուտուրոլոգիական) հռետորության տարրերը հաճախ հանդիպում են Հայաստանում տեղի ունեցող քննարկումներում և մշակվող փաստաթղթերում, ապա քաղաքատնտեսական ուղղությունը հենց այն է, ինչ ամենից շատ պակասում է հայաստանյան մտեցումներին:

Նման քննարկումներում սովորաբար առաջինը հիշատակվում է ամերիկացի տեսաբան Դանիել Բելլի անունը, որը նոր՝ հետարդյունաբերական հասարակության մասին գրում էր արդեն 1950-ականների վերջին (թեև 1980-ականների սկզբին միայն սկսեց օգտագործել «տեղեկություն» և «գիտելիք» տերմինները): Անդրադառնալով Դ.Բելլի տեսության խոցելի տեղերին՝ Վեբսթերը մասնավորապես ընդգծում է նրա էվոլյուցիոնիստական մոտեցման երկու փոխկապակցված կողմերը՝ հիստորիցիզմը (հնարավոր է որոշել պատմության հիմնական օրենքները և այդպիսով կանխատեսել ապագան) և թելեոլոգիականությունը (փոփոխվելով՝ հասարակություններն ընթանում են դեպի մի ինչ-որ վերջնական նպատակ): Մրանից հետևում է, որ պատմությունն ունի հստակ արտահայտված զարգացման միտումներ և ընթանում է այն ուղղությամբ, որով գնում են առաջատար հասարակությունները (Եվրոպա, ԱՄՆ, Ճապոնիա), որ այդ ընթացքն անխուսափելի է, և մնացած երկրներին մնում է միայն հաշտվել այդ իրողության հետ և բռնել նույն ճամփան:

Դ.Բելլի գաղափարներն արձագանք գտան մի խումբ ապագայագետների աշխատանքներում: Ըստ Վեբսթերի՝ նրանց բեսթսելլերները, որոնցում տեղ գտած զանազան «հորինվածքներից» լայն զանգվածներն իմանում են «տեղեկատվական հեղափոխության» մասին, «մտավոր առումով՝ հյուծված և երկրորդային, վերլուծական առումով՝ անօգնական և գրեթե բոլոր առումներով՝ պարզունակ գրքեր են» [7, p. 32-59]: Իրականում ՏՀ-ի մասին մարդկանց

մեծամասնության պատկերացումները սահմանափակվում են մի քանի տպավորիչ փոխաբերություններով՝ «երրորդ ալիք» (Ալվին Թոֆլեր), «տեղեկատվական գերայրուղի» (Ալբերտ Գոր), «կիրեռեղավոխություն» և այլն: Ապագայագետների (Ալվին Թոֆլեր, Ջոն Նեսբիթ, Նիկոլաս Նեգրոպոնտե և ուրիշներ) առանցքային գաղափարներից մեկը խզումն է, իսկ փոխակերպման հիմնական ազենտը՝ նոր տեխնոլոգիան: Տեխնոլոգիական փոխակերպումն ունի հեղափոխական բնույթ և կհանգեցնի արմատական փոխակերպման. «Ապագան նման չի լինի անցյալին: Մա մեծ հեղափոխություն է»:

Քնին Ռոբինսը և Ֆրենկ Վեբսթերը, նկատելով, որ բազմաթիվ պատճառներ կան, որպեսզի հոռետես լինենք այս տեխնո-տեսանողների հեշտաբուխ խոստումների և փուչ մարգարեությունների (որոնք հաճախ ընդամենը գովազդային գործակալությունների մարգարեություններ են) նկատմամբ, եզրակացնում են. «Ձևակերպելով իրենց էպիկական կանխատեսումները, տեսլականներն ու կարգախոսները՝ Ալվին և Հեյդի Թոֆլերներն իրենց պահում են լավ, պրոֆեսիոնալ ապագայագետների պես: Նրանք անում են հենց այն, ինչի համար ապագայագետները վճարվում են (նրանց դեպքում՝ շատ)՝ տալիս են լավ խոստումներ: Նրանց առևտրային (կոմերցիոն) երազներում ոչ մի նոր բան չկա: Իրականում, միակ փոփոխությունը, որով նրանք իսկապես շահագրգռված են, շուկայի փոփոխությունն է: Ինչ որ նրանց հիացնում է պատճառում, այն վիթխարի առևտրային հնարավորություններն են, որ թաքնված են նոր տեխնոլոգիական արտադրանքի մեջ՝ ինտերնետը, թվանշային հեռարձակումը կամ վիրտուալ իրականության խաղերը: Բայց երբ հերթը հասնում է նոր գլոբալ կարգին պատշաճող նոր սոցիալական ու քաղաքական ձևերին, նրանք ոչինչ չեն առաջարկում, բացի ինտերակտիվ սպառումից և վիրտուալ հանրությունից» [2, p. 233-234]:

ՏՀ մեկնաբանների հակադիր բնեռում (մարքսիստական կողմնորոշում ունեցող) արմատական քննադատների խումբն է՝ Միգ Համելինկ, Արման Մաթթելար և ուրիշներ, որի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը Հերբերտ Շիլլերն է: Նա առաջիններից մեկն էր, որ ուշադրություն դարձրեց հասարակության անապահով խավերի, ինչպես նաև ոչ արևմտյան հասարակությունների ճակատագրին և կարևոր դեր խաղաց տեղեկատվության և հաղորդակցության ուսումնասիրության այն ուղղության զարգացման համար, որը ստացել է քաղաքատնտեսական մոտեցում անունը:

Շիլլերը հավատացած է, որ տեղեկատվության և հաղորդակցության ոլորտում կատարվող բոլոր նորարարությունների առնչությամբ վճռական է դառնում շուկայի դերը. այդ ամենը պետք է գնել և վաճառել, պետք է առևտուր անես, որպեսզի շահույթ ստանաս: Այսինքն՝ զարգացման կարևորագույն ուղղությունները թելադրում է շուկան: Այնուհետև, տեղեկատվության տա-

րածման, մատչելիության և ստեղծելու իրավունքի վրա ազդող հիմնական գործոնը դասակարգային անհավասարությունն է: Դասակարգային պատկանելությունը որոշում է, թե ինչ տեղեկատվություն ես ստանում և ինչ տեղեկատվություն ես թույլատրում ստանալ ուրիշներին: Ուստի՝ շահել էք «տեղեկատվական հեղափոխությունից», թե կորցրել, կախված է նրանից, թե ինչ տեղ էք զբաղեցնում սոցիալական աստիճանակարգում:

Շիլլերն էական է համարում այն հանգամանքը, որ հասարակությունը, որտեղ այսպիսի կարևոր փոփոխություններ են կատարվում տեղեկատվության և հաղորդակցության ոլորտում, գտնվում է կորպորատիվ կապիտալիզմի հատուկ փուլում: Ժամանակակից կապիտալիզմի բնույթը որոշում են կորպորացիաները, ընդ որում՝ հատուկ տեսակի կորպորացիաները: Այսօր դրանց բնորոշ է կապիտալի վիթխարի կենտրոնացում, որը թույլ է տալիս սեփական շահերը պարտադրել պետություններին և միջազգային հանրությանը: Շիլլերը համարում է, որ տեղեկատվության ոլորտի զարգացումը ենթարկվում է կորպորացիաների պահանջներին, որ տեղեկատվական հոսքերի կառուցվածքը տարածաշրջանների մեջ և նրանց միջև արտացոլում է կորպորացիաների կարիքները: Ցանցերի տեղաբաշխումը, տվյալների փոխանակման ընդունված ստանդարտները, ծառայությունների գները և ցանցերի մատչելիության հնարավորություններն ավելի նախընտրելի վիճակ են ապահովում կորպորատիվ այցելուների համար՝ ի հաշիվ հասարակական շահի:

Այսպիսով, մի կողմից՝ ՏՀ-ը կապիտալիստական հասարակության հրամայականների արտացոլումն է, ուստի կորպորատիվ և դասակարգային շահերը և շուկայի նախապատվությունները վճռական ազդեցություն են թողնում նոր համակարգչային տեխնոլոգիաների զարգացման վրա: Մյուս կողմից՝ տեղեկատվության զարգացումը թույլ է տալիս պահպանել և ամրապնդել կապիտալիստական հարաբերությունների համակարգը [7, p. 124-160]:

ՏՀ թեմայի նկատմամբ հետազոտական և գործնական հետաքրքրությունը ոչ միայն չի նվազում, այլև տարեցտարի ավելանում է: Ամփոփելով ՏՀ հղացքի (կոնցեպտի) ժամանակակից քննարկումները՝ Ն.Գարնհամը նկատում է, որ այն դարձել է գաղափարաբանական երկու իմաստով: Առաջին՝ ակադեմիական դիսկուրսում և ծրագրային քաղաքականությանը վերաբերող վերլուծության մեջ շարունակական գործածմամբ այն վերածվել է մի անունի, որը կեղծ միասնություն է հաղորդել տարբեր հնարավոր բացատրություններ և հետևանքներ ունեցող մի խումբ տեսանելի միտումների, ինչպես նաև տարբեր մտածողական արմատներ ունեցող և էմպիրիկական վկայությամբ օժանդակվող տեսաբանական վերլուծությունների, որոնք որոշ դեպքերում փոխբացատրող էին: Երկրորդ՝ այս հղացական խառնաշփոթը թույլ տվեց, որպեսզի տերմինը գործի որպես մի շարք տարբեր, հաճախ պոտենցիալորեն հակամարտ

տնտեսական և քաղաքական շահեր միավորող կարգախոս: Ուստի, նշում է նա, չենք կարող վստահ լինել, թե բոլոր ՏՀ տերմինն օգտագործողներն առաջնորդվում են սոցիալական կառույցի և փոփոխության նույն վերլուծությամբ կամ ապավինում են էմպիրիկական տվյալների նույն բազմությանը:

Ըստ Գարնհամի՝ այս տարբերությունները բռնված են «ՏՀ» ընդարձակ հովանու ներքո գործող մի շարք տարբեր տերմիններով. ա) գիտելիքի տնտեսություն/հասարակություն, որը շեշտը դնում է մարդկային կապիտալի, գիտության և տեխնոլոգիայի վրա, բ) թվանշային տնտեսություն/հասարակություն, որը շեշտը դնում է հաղորդակցության ցանցերի և ՏՀՏ կենտրոնականության վրա, գ) տնտեսություն/հասարակություն, որը կենտրոնանում է ինտերնետի՝ որպես հեղափոխական փոփոխության, ազենտի վրա, դ) ստեղծագործական կամ ժամանցային տնտեսություն/հասարակություն, որը պնդում է, թե կենտրոնականը մեդիայի և (խորհրդա)նշանային ապրանքների (*symbolic goods*) և ծառայությունների արտադրության և շրջանառության աճն է:

Այսպիսով՝ «ՏՀ հղացքի հետ կապված գլխավոր խնդիրը, անկախ նրանից, օգտագործվում է տեսական վերլուծության, թե ծրագրային քաղաքականության դիսկուրսում, հետևյալն է. այն չի հղում առկա տնտեսական, սոցիալական և մշակութային փոփոխությունների միակ տեսական բացատրության, ոչ էլ էմպիրիկորեն ստուգելի երևույթների որոշակի սահմանափակ խմբի: Այն առնում է իր մեջ մի շարք տարբեր տեսական վերլուծություններ, որոնք իրենց շեշտը դնում են տարբեր երևույթների վրա, ուստի և ենթակա են տարբեր էմպիրիկական փորձերի ու ստուգումների: Ծրագրային քաղաքականության մակարդակում սա կարող է հանգեցնել կարևոր հակասությունների և՛ քաղաքականության միջոցների, և՛ նպատակների միջև, որոնք բոլորն էլ հավակնում են արդարացվելու «ՏՀ» հասկացությամբ» [1, p. 287-289]:

3. Տեղեկատվական հասարակության ապագան Հայաստանում

Լավ հայտնի է, որ 1990-ականները նշանավորվեցին ՏՀ զարգացման արևմտյան ծրագրերով: Առաջինը ԱՄՆ ծրագիրն էր՝ «Ազգային տեղեկատվական ենթակառույցը» (1993թ.): Տեղեկատվական հասարակության կառուցման եվրոպական ծրագրի սկիզբը կապվում է «Բանգեմանի զեկույցի» հետ, որին հաջորդեց բուն ծրագիրը՝ «Եվրոպայի ուղին դեպի Տեղեկատվական հասարակություն. գործողությունների պլան» (1994թ.): Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ երկրների Միասնական տեղեկատվական տարածության մասին հայեցակարգի հաստատումը (1995թ.) այս իրադարձությունների արձագանքն էր:

Դեռևս 1950-ականներին Արևմուտքի (առաջին հերթին՝ ԱՄՆ-ի) նախաձեռնած՝ Երրորդ աշխարհի երկրների զարգացման նախագծում հիդրոէլեկտ-

րակայանների, երկաթուղիների, հանքարդյունաբերության և արդիականացման այլ բաղադրիչների հետ միասին կարևորվում էին նաև զանգվածային տեղեկատվամիջոցները: Ընդունված է այդ ընթացքը բաժանել երեք՝ զանգվածային տեղեկատվամիջոցների (1950-ականներից մինչև 1970-ականներ), արբանյակային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների (1970-ականներից մինչև 1990-ականներ) և ինտերնետի (1990-ականներից այս կողմ) փուլերի: Վերջին փուլում, երբ Արևմուտքում մշակվում և իրականացվում էին ՏՀ ծրագրեր, զարգացող և թերզարգացած երկրներում արևմտյան տեխնոլոգիաների տարածման թեման քննարկվում էր «ՏՀՏ և զարգացում» խորագրի ներքո:

Այս ընթացքն ուղեկցվում էր թե՛ արևմտյան, թե՛ տեղական մասնագետների ուսումնասիրություններով, ձեռք բերվող փորձառության քննադատական վերլուծությամբ, որ օգնում էր ինստրումենտալ մտածողությունը և «տեխնոլոգիաները՝ որպես բոլոր սոցիալ-տնտեսական խնդիրների համադարման» ընկալումը (քննադատական միջազգային կազմակերպությունների և տեղական իշխանությունների համար) հավասարակշռել սթափ գնահատականներով ու հարցադրումներով: Օրինակ՝ աստիճանաբար հասկանալի դարձավ, որ իշխանության կառույցները կարող են լուրջ խոչընդոտ դառնալ նոր տեխնոլոգիաների յուրացման համար, որ արբանյակային հաղորդակցության տարածման ծրագրերի մեծ մասի շարժիչը եղել է շահույթը, այլ ոչ թե զարգացման նպատակները, իսկ առաջնորդող սկզբունքը՝ տեխնոլոգիական դետերմինիզմը: Մինևույն ժամանակ, միջազգային մակարդակի վրա արմատական քննադատությունը ուշադրություն էր հրավիրում տեղեկատվական հոսքերի գլոբալ անհավասարության և ահագնացող հաղորդակցական անդունդի (*communication gap*) վրա՝ մարտահրավեր նետելով այն տարածված պատկերացմանը, թե տեխնոլոգիաների նվազող գները և գլոբալացումը կհանգեցնեն սովորական մարդկանց կյանքի բարելավմանը, ցույց տալով, որ կորպորացիաների կողմից թվանշային ցանցերի վերահսկողությունը և դրանք ժամանցային ծառայություններով հեղեղելն անհամատեղելի են տեխնոլոգիաների տարածմանն ուղեկցող ունիվերսալիստական իդեալների և էմանսիպացման խոստումների հետ [8, p. 189-207]:

Տեխնոլոգիական լավատեսության և արմատական քննադատության միջև գաղափարաբանորեն միջանկյալ (այսպես կոչված «գործնական ազատական», *practical liberal*) դիրքորոշում կարելի է գտնել Ռոբին Մանսելի և Ութա Ուեհնի «Գիտելիքի հասարակություն. տեղեկատվական տեխնոլոգիան կայուն զարգացման համար» գրքում [9]:

Եթե համեմատենք Երրորդ աշխարհի կամ զարգացող երկրների փորձառության ուսումնասիրության ձևավորված ավանդության հետ, ապա պիտի արձանագրենք, որ ՏՀՏ տարածման փորձը շատ քիչ է ուսումնասիրված ոչ

միայն Հայաստանում, այլև հետխորհրդային հասարակությունների մեծ մասում: Այստեղ դեր են խաղում մեդիայի և հաղորդակցությունների ուսումնասիրությունների ավանդության բացակայությունը, տեսական և մեթոդաբանական բնույթի բազմաթիվ անպատասխան հարցերի գոյությունը:

Վերջին տարիներին ոչ արևմտյան հասարակությունների տեղեկատվական ապագայի մասին մտածելու առավել տարածված մոդելը ձևակերպվում է «թվանշային բաժանման» և այն «կամրջելու», տեղեկատվական «ունևորների» և «չունևորների» միջև ահագնացող խզումը մեղմելու անհրաժեշտության լեզվով: Սա վերաբերում է նաև Տեղեկատվական հասարակության հարցերին նվիրված համաշխարհային գագաթաժողովին, որը տեղի ունեցավ 2003 թվականի դեկտեմբերի 10-12-ը, Ժնևում (երկրորդ փուլը՝ Թունիսում, 2005-ին)¹:

Վերը հիշատակված ԱՊՀ հայեցակարգը՝ գործողությունների «Հեռանկարային պլանով» հանդերձ, փաստորեն, եղել է տեղեկատվայնացման առաջին ծրագիրը, որին առնչվել է ՀՀ-ն: Գրեթե տասը տարի անց Հայաստանը պաշտոնապես ստանձնեց նոր պարտավորություններ՝ միանալով ՏՀ գլոբալ նախաձեռնությանը (Ժնև, 2003): Եվ սա մի տեղ էր, ուր միանգամայն խորհրդանշական ձևով խաչվեցին թերգարգացած և մի խումբ հետխորհրդային երկրների ճանապարհները: Ժնևի գագաթաժողովին մասնակցությունը ենթադրում էր պատշաճ ազգային ռազմավարության, ինչպես նաև համապատասխան ծրագրային քաղաքականությունների մշակում և իրականացում: Առաջարկվում էին անելիքների մանրամասն պլան, աշխատանքների ընթացքի վերահսկողության և արդյունքների գնահատման մեխանիզմներ...

Եվ ահա 2008 թվականի գարնանը ազդարարվում է ՏՏ ոլորտի զարգացման նոր հայեցակարգի մասին, որտեղ քննարկվում է նաև ՀՀ-ում ՏՀ կառուցման հարցը: Կարելի էր սպասել, որ այս հայեցակարգը հիմնված կլինի ներկա իրադրության (գլոբալ և տեղական) բազմակողմանի ուսումնասիրության վրա, կփորձի բացատրել, օրինակ, թե ինչու տարածաշրջանային առաջատարի հավակնություններ ունեցող Հայաստանը, համաձայն Համաշխարհային տնտեսական ֆորումի Տեղեկատվական տեխնոլոգիաների գլոբալ զեկույցի, վերջին տարիներին ՏՀՏ տարածման և օգտագործման ասպարեզում նկատելիորեն զիջում է իր հարևաններին: Կարելի էր կարծել, թե այն որևէ ձևով կանդրադառնա Հայաստանի ժնևյան պարտավորություններին, վերջին 7-8 տարիների ընթացքում տարբեր գերատեսչությունների մշակված այլ ռազմավարական փաստաթղթերի, կամփոփի և կգնահատի դրանց իրականացման արդյունքները: Սակայն...

¹ Այս և հարակից այլ հարցերի մանրամասն քննարկումը կարելի է գտնել հետևյալ գրքում՝ Հրաչ Բայադյան, Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների տարածումը և զարգացումը Հայաստանում, Երևան, «Նորավանք», 2005:

Հասկանալի է, ուրեմն, թե ինչու փաստաթղթում չկա ՏՀ-ին վերաբերող որևէ հայեցակարգային պնդում, որևէ բացատրություն, թե ՏՀ ասելով ինչ են հասկանում: Տեսական գիտելիքի բացակայությունը լիակատար է, իսկ ընդհանուր մոտեցումը տեղավորվում է տեխնոլոգիական լավատեսության և ինստրումենտալության շրջանակում: Իրականում այդ փաստաթուղթը ոչ միայն ՏՀ, այլ անգամ ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգ չէ: Այստեղ ընթերցողը գտնում է միայն չհիմնավորվող գործողությունների ծրագիր:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ առայժմ մենք չունենք ոչ միայն ՏՀ նախադրյալների ստեղծման, այլև ՏՀՏ տարածման և զարգացման պատշաճ ռազմավարություն կամ գոնե հիմնական սկզբունքների մի խումբ՝ արձանագրված և ամենայն պատասխանատվությամբ ստանձնված երկրի կառավարության կողմից: Մա անհնար է դարձնում ՀՀ իրական մասնակցությունը միջազգային նախաձեռնություններին, այդ թվում՝ ՏՀ-ին վերաբերող եվրոպական համագործակցության ծրագրերին: Այս առումով, հարկ է ընդգծել ՏՀ-ի հետ կապված հիմնական հարցերի և խնդիրների չգիտակցվածությունը նաև հասարակության կողմից: Այո՛, երկրում չկան անհրաժեշտ հետազոտական և փորձագիտական կարողություններ, բայց չկան նաև պատշաճ հասարակական քննարկումներ, որ նշանակում է, թե այս հարցերը գրեթե ամբողջովին դուրս են հայաստանյան հասարակության օրակարգից:

Հասարակության տեղեկատվական և հաղորդակցական կարողությունների ու կարիքների կառուցվածքի մասին կարելի է որոշ պատկերացում կազմել ըստ երկրում իրականացվող ծրագրերի (և դրանց արդյունավետության չափի), օգտագործվող տեղեկատվամիջոցների, օգտագործման ձևերի և ծավալների:

Հայտնի է, որ ՏՀՏ ոլորտի՝ ՀՀ-ում իրականացվող բոլոր լայնածավալ ծրագրերը արդյունք են միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների նախաձեռնությունների: Ըստ էության՝ նրանց իրավասության շրջանակում է նաև այդ ծրագրերի արդյունավետության գնահատման հարցը: Մյուս կողմից՝ երկրի ուժերը և պաշարները կենտրոնացված են ՏՏ արտահանման արդյունաբերության վրա՝ նվազագույնի հասցնելով ներքին շուկան զարգացնելու, ՏՀՏ-ը տեղական սոցիալական և մշակութային նպատակներին ծառայեցնելու հնարավորությունները:

Մյուս կողմից՝ Հայաստանում արդեն ձևավորվում են Ինտերնետի տարբերակված մատչելիության մակարդակներ, և ժամանակի ընթացքում այդ միտումն էլ ավելի կընդգծվի: Ակներև է, որ մեծանում է խզումը հասարակության մի ստվար զանգվածի և ժամանակակից ՏՀՏ-ի միջև: «Դիջիթեք 2008»-ում նույնպես այս միտումը նկատելի էր. եթե բիզնեսի ասպարեզում կարելի էր տեսնել ինչ-որ հաջողություններ, ապա, օրինակ, կրթական և էլեկտրոնային

կառավարման ոլորտներում ամեն բան շատ ավելի դանդաղ է փոխվում: Ըստ իսկարելի է նույն տրամաբանությունը գտնել նաև ինտերնետի և բջջային հեռախոսի՝ որպես երկու փոխկապակցված տեխնոլոգիաների փոխհարաբերություններում: Տարիներ շարունակ խոսվում է Հայաստանում ինտերնետի զարգացման ռազմավարություն մշակելու, կառավարման, կրթության և այլ ասպարեզներում ինտերնետի օգտագործմանն օժանդակելու անհրաժեշտության մասին: Բայց բջջային կապի ոլորտի ազատականացումը և երկրորդ օպերատորի՝ ՎիվաՍելի մուտքը շուկա (այժմ արդեն սպասում ենք երրորդ օպերատորի գործողություններին), դրան հետևած բջջային հեռախոսների բումը բոլորովին երկրորդ պլան մղեց ինտերնետի զարգացման խնդիրը: Եվ դա միանգամայն հասկանալի է: Բջջային կապի բարձր շահութաբերությունը բացատրում է ամեն ինչ: Փոխարենը, ՏՀՏ ներդրմամբ կրթության ոլորտի արդիականացումը պահանջում է վիթխարի ծախսեր և ոչ մեկին անմիջական շահույթ չի խոստանում...

Բարձր տեխնոլոգիաների ոլորտի հայկական երկրորդ համաժողովում («ԱրմԹեք» կոնգրես), որն այս անգամ անցկացվեց Երևանում (4-5 հոկտեմբերի, 2008թ.) ներկայացված զեկույցներից մի քանիսն օգտակար նյութ են տրամադրում՝ ճշգրտելու Հայաստանի ՏՀՏ ոլորտի մասին մեր ունեցած պատկերացումները: «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Ռիչ Գոլդմանն անդրադարձավ ՏՀՏ ոլորտի զարգացման մի քանի խոչընդոտներին: Առաջինը ինտերնետի մատչելիությունն է՝ ծառայությունների բարձր գները, կապի ցածր որակը և ընդհանուր անվստահելիությունը (Հայաստանը լուսաթելային կապով գլոբալ ցանցին միանում է Վրաստանի տարածքով, ուստի, տրանսպորտային կապի նման, ինտերնետային հաղորդակցությունը ևս կախված է տարածաշրջանային անկայուն իրադրությունից): Եզրակացությունը Հայաստանին պետք է անհամեմատ էժան և որակյալ կապ, որը կախված չի լինի հարևան երկրներում կատարվող իրադարձություններից:

Ներդրումների համար անբերանպաստ և համաշխարհային առաջատար ընկերությունների մուտքը խոչընդոտող մյուս հանգամանքը Հայաստանի հարկային և մաքսային համակարգերն են՝ անկատար օրենսդրությունը և համապատասխան ծառայությունների ոչ թափանցիկ գործունեությունը: Ըստ պարոն Գոլդմանի՝ այս իրավիճակի պատճառով Հայաստանը կորցրել է շատ ներդրումներ, որոնք ուղղվել են այլ տեղեր, մեծապես պակասել է երկրում գործարարության հաջողության նկատմամբ վստահությունը: Բարձր տեխնոլոգիաների ասպարեզում հաջողության մյուս խոչընդոտը «կառավարություն-բիզնես-գիտություն-կրթություն» համագործակցության անկատարությունն է:

Հայաստանի գիտության և կրթության ոլորտի խնդիրներին էր նվիրված ՀՀ գիտության և կրթության փոխնախարարի զեկույցումը. գիտության և կրթու-

թյան խորհրդային համակարգից մնացած ժառանգության ոչ ադեկվատությունը ներկա իրողություններին, գրադարանային և լաբորատոր սահմանափակ հնարավորությունները, գիտության և կրթության համակարգերի թույլ կապը բիզնեսի և արդյունաբերության հետ, երիտասարդ և արդիական գիտելիքներով զինված դասախոսների և հետազոտողների սակավությունը, գիտության կարիքների համար հատկացվող պետական միջոցների խիստ սահմանափակությունը... Հստակ տպավորությունն այն էր, որ առաջարկվող բարեփոխումները (հետևողական քաղաքականություն իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և թարմացման ուղղությամբ, կրթության համակարգում ներդնել ժամանակակից ՏՀՏ, մշակել բուհական, ակադեմիական և ճյուղային գիտության նոր ռազմավարություն և այլն), էթե նույնիսկ արդյունավետ լինեն, չեն կարող շոշափելի բարելավումների հանգեցնել առաջիկա տարիներին:

Համաժողովում տարբեր առիթներով հիշատակվեց «Մինոփսիս Արմենիա» ընկերության հաջող գործունեությունը հետազոտության, կրթության և բիզնեսի տիրույթներում: Այն ամերիկյան ընկերության մասնաճյուղ է, որը հիմնվել է 2004 թվականին և կրթական-հետազոտական ասպարեզում համագործակցում է տեղական համալսարանների հետ: Այդ նպատակով ընկերության կազմում ստեղծվել են ժամանակակից տեխնոլոգիաներով կահավորված լսարաններ ու լաբորատորիաներ: Բայց հասկանալի է, որ այս մոդելը արդյունավետ է միայն իր նեղ շրջանակում. որոշակի բիզնես, որոշակի կրթական ծրագրեր և գիտական մշակումներ, որոնք ըստ էության նախատեսվում են տվյալ ընկերության նպատակներին ծառայելու համար:

Նույնը կարելի է ասել ոլորտի համար կադրերի պատրաստման նպատակով ՏՏ արդյունաբերության և համալսարանական համակարգի միջև միջանկյալ օղակի՝ կրթական կոնսորցիումի ստեղծման նախաձեռնության մասին: Այս ծրագիրն ավելի ընդարձակ շրջանակ ունի, բայց դարձյալ ծառայում է ՏՏ ոլորտի համար աշխատակիցներ պատրաստելուն: Սա դարձյալ խոսում է Հայաստանի կրթության համակարգում առկա լուրջ խնդիրների մասին, որոնց մասնակի լուծումը միայն կարելի է ակնկալել ՏՏ ձեռնարկություններից:

Ընդ որում՝ հատկանշական է, որ զեկուցողները պետական մարմինների, ՏՏ ընկերությունների կամ հարակից կառույցների և ծրագրերի ղեկավարներ կամ աշխատակիցներ էին: Սա նույնպես կրթության ոլորտի խնդիրներից է և խոսում է Հայաստանում հետազոտական կարողությունների և հետազոտական ծրագրերի բացակայության մասին:

Ապրիլ, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Garnham N.*, 'The Information Society Debate Revisited' in *James Curran and Michael Gurevitch (eds.), Mass Media and Society, 4th edition*, London: Hodder Arnold, 2005.
2. *Robins K. and Webster F.*, *Times of the Technoculture: From the Information Society to the Virtual Life*, Routledge, London and New York, 1999.
3. *Kember S.*, 'Doing Technoscience as ('New') Media' in *James Curran, David Morley (eds), Media and Cultural Theory*, Routledge, London and New York, 2006.
4. *Des Freedman*, *Internet Transformations: 'Old' Media Resilience in the 'New Media' Revolution* in *James Curran, David Morley (eds), Media and Cultural Theory*, Routledge, London and New York, 2006.
5. *Manovich L.*, *The Language of New Media*, The MIT Press, Massachusetts, 2001.
6. *Holmes D.*, *Communication Theory: Media, Technology and Society*, SAGE Publications, London, 2005.
7. *Webster F.*, *Theories of Information Society*, Second edition, London: Routledge, 2002.
8. *Singh J.P.*, 'Communication Technology and Development: Instrumental, Institutional, Participatory, and Strategic Approaches' in *Bella Mody (ed.), International and Development Communication: A 21st- Century Perspective*, London: SAGE Publications, 2003.
9. *Mansell R. and When U.* (eds.), *Knowledge Societies: Information technology for Sustainable Development*, Oxford: Oxford University Press, 1998.

НОВЫЕ МЕДИА И ИНФОРМАЦИОННОЕ ОБЩЕСТВО

Греч Баядян

Резюме

За последние десять лет заметно поубавилась вера в способность информационно-коммуникационных технологий индуцировать быстрые социальные изменения. С этой точки зрения были пересмотрены взаимоотношения масс-медиа/новые медиа, и сейчас исследователи говорят скорее об их сосуществовании, чем о вытеснении старых технологий новыми. Тем не менее, «технологический детерминизм» как модель объяснения возникновения нового (информационного) общества все еще остается очень распространенным. С другой стороны, термин «информационное общество» стал господствующим в самых различных (экономических, социальных, культурных и т.д.) сферах, хотя вокруг его смысла нет единогласия. В статье рассмотрены основные заключения обсуждений последних лет, посвященных новым медиа и информационному обществу. Тема последнего раздела – предпосылки построения информационного общества в Армении.

**ԺՈՂՈՎՈՒՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ՏՐԱՆՍԿՈՆՏԻՆԵՆՏԱԼ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀՐԵՈՒԹՅՈՒՆԸ, ԻՍՐԱՅԵԼ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՍՓՅՈՒՌԸ
ՍԵԿՈՒԼՅԱՐԱՑՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ**

Ալեք Դ. Էպշտեյն¹

Ե՛վ հայերի, և՛ հրեաների համար սփյուռքը ազգային ընդհանրության պահպանման կարևոր գործոն է: Միևնույն ժամանակ, սփյուռքի աշխարհագրական ցրվածությունը երկրներով ու աշխարհամասերով մեկ սփյուռքը վերածում է կարևորագույն գործոնի ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Իսրայել պետության միջազգային հարաբերությունների համակարգում:

Իսրայելում գոյություն ունի զարգացած, բավական ամուր արմատավորված և հարուստ ավանդույթների վրա հիմնված սեկուլյար մշակույթ: Պետության ստեղծմանը նախորդած ժամանակաշրջանում այդ մշակույթը կազմեց «երբայական ինքնագիտակցության» հիմքը, որին, անկախության հռչակման հետ կապված, փոխարինելու եկավ նորահայտ, որպես կոլեկտիվի ինքնընկալման հիմք ձևավորված, ազգային կողմնորոշում ունեցող «իսրայելական ինքնությունը»: Իսրայելի քաղաքացիների մեծ մասի կենսակերպն ու ինքնընկալումը, ըստ էության, սեկուլյար են, թեև ոչ աթեիստական: Հողվածում հրեա ժողովուրդը դիտարկվում է ոչ միայն և ոչ այնքան որպես մի ինչ-որ ազգային պետության (Իսրայելի) գերիշխող էթնոս, այլև որպես տրանսկոնտինենտալ քաղաքակրթություն: Փորձ է արվել բացատրել, թե ինչու Իսրայել պետությունը, համաշխարհային հրեության քաղաքական կենտրոնը լինելով հանդերձ, առայժմ չի կարողացել վերածվել նրա հոգևոր փարոսի:

I

Երբ շուրջդ ես նայում, ակնհայտ է դառնում, որ քիչ կգտնվի իր ճակատագրի վայրիվերումներով հայերին այնքան նման ժողովուրդ, ինչպիսին հրեա ժողովուրդն է: Երկու ժողովուրդներն էլ իրենց ազգային գոյությունը վտանգող ցեղասպանության են ենթարկվել, և երկուսն էլ կարողացել են ոչ միայն պահպանել, այլև վերականգնել իրենց ինքնիշխան պետությունները: Երկու ժողովուրդներն էլ կառուցում են իրենց ապագան՝ նայելով անցյալին, ավելի քան երկհազարամյա վաղեմության իրադարձություններին. Տիգրան II Մեծի

¹ Իսրայելի Բաց համալսարանի սոցիոլոգիայի և քաղաքագիտության ամբիոնի դասախոս և գիտաշխատող:

հերոսական օրերին, երբ Մեծ Հայքի թագավորությունը ձգվում էր Եփրատից մինչև Քոի ափերը, Կասպից ծովն ու Ուրմիա լիճը՝ ներառյալ Իրանի հյուսիսարևմտյան տարածքներից մինչև Միջերկրածովյան արևելքը, Դավիթ թագավորի տիրակալության անմոռանալի տարիներին, երբ Իսրայելի և Հրեաստանի Միավորված թագավորությունը՝ Երուսաղեմ մայրաքաղաքով, ներառում էր այն տարածքները, որտեղ գտնվում են, մասնավորապես, և՛ Ամանը, և՛ Դամասկոսը... Չնայած և՛ հրեաներին, և՛ հայերին հարաբերականորեն վերջերս ձեռք բերած անկախությունը մեծ դժվարությամբ տրվեց, ընդ որում՝ անկախ Իսրայելի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ձևավորումն ուղեկցվում էր արյունահեղ պատերազմներով, այդ պետությունների տիտղոսակիր ազգերի մեծամասնությունն ապրում է այդ երկրների սահմաններից դուրս: Թեև ոչ ոք երբեք երկրագնդի հայ ու հրեա բնակչության մարդահամար չի անցկացրել, ակնհայտ է, սակայն, որ Հայաստանում և Իսրայելում ապրում է համապատասխան ազգային խմբերի կեսից էլ քիչ մարդ, իսկ մեծամասնությունը սփռված է տարբեր երկրներով մեկ: Այսպիսով, և՛ հայերի, և՛ հրեաների համար նաև ձևավորված պետականությունների դարաշրջանում է սփյուռքը ազգային ընդհանրության պահպանման կարևոր գործոն մնում: Միևնույն ժամանակ, սփյուռքի աշխարհագրական ցրվածությունը երկրներով ու աշխարհամասերով մեկ այն վերածում է կարևորագույն գործոնի ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Իսրայել պետության միջազգային հարաբերությունների համակարգում:

Հոդվածում հրեա ժողովուրդը դիտարկվում է ոչ միայն և ոչ այնքան որպես մի ինչ-որ ազգային պետության (Իսրայելի) գերիշխող էթնոս, այլև որպես տրանսկոնտինենտալ քաղաքակրթություն, որտեղ ազգային պետությունը, ճիշտ է՝ կենտրոնական, բայց ընդամենը օղակներից մեկն է: Երբ խոսքը սփյուռքին է վերաբերում, առաջին գուգորությունը, որ, հավանաբար, ծագում է շատերի մեջ, հրեա ժողովուրդն է: Եվ դա զարմանալի չէ, քանի որ հրեա ժողովրդի մոտ «... սփռվելը կենսակերպի է վերածվել, սոցիումի սոցիալտնտեսական, մշակութային, հոգևոր կայուն, հատուկ վիճակի, գոյության հատուկ ձևի էթնիկ մայրցամաքից (կամ ընդհանրապես առանց դրա) ֆիզիկական ու հոգեբանական կտրվածության մեջ... «Ազգային օջախի» որպես հենարանի, բացակայությունն ստիպել է նման հենարան փնտրել ինքն իր մեջ, իր համայնքում կամ համայնքների ամբողջության մեջ: Նման պայմաններում սեփական ինքնության պահպանումը դառնում է հանապազօր, ամենօրյա խնդիր ու աշխատանք, ռեֆլեքսիայի ու ներհամայնքային կարգավորման մշտական գործոն» [1, c. 10]:

Ազգային-պետական կենտրոնի բացակայության պայմաններում հրեա ժողովրդի յուրօրինակության պահպանման ֆենոմենն արդարացիորեն առա-

ջացնում էր այն երկրների ազգային մեծամասնության հետաքրքրությունը, որտեղ գոյություն ունեին հրեական սփյուռք, ճիշտ նույն կերպ էլ, այդ ֆենոմենը բացատրել փորձելիս, առասպելաստեղծության պատճառ էր դառնում: Եվ ամենակենսունակ պատմական հորինվածքներից մեկը առասպելն է հրեական համերաշխության, ինքնատիպ «համերաշխիքի» մասին, որ գոյություն ունեին ինչպես առանձին հրեական համայնքում, այնպես էլ տարբեր երկրների հրեական համայնքների միջև: Սակայն ինչպես հրեական համայնքների ներսում, այնպես էլ դրանց միջև հարաբերությունների համակարգում զարգացման տարբեր փուլերում լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, և միշտ չէ, որ որոշիչ է եղել ինտեգրման միտումը: Իսրայելի ի հայտ գալով ակնկալելի կլինեին հրեական համայնքների համախմբումը ազգային կենտրոնի շուրջ՝ մի կողմից, և հրեական պետության ակտիվ գործունեությունը աշխարհի հրեական կենտրոնների հետ կապի պահպանման և զարգացման ուղղությամբ՝ մյուս կողմից: Սակայն գործնականում պարզվեց, որ հրեական սփյուռքի և Իսրայելի միջև հարաբերությունների կառուցումը ներքին և արտաքին քաղաքական բազմաթիվ գործոններից կախված երկարատև ու բարդ գործընթաց է [2, c. 133–151]:

Հրեական ինքնությունը պատմության ընթացքում փոխվել է. փոխվել են նրա մշակութային սահմանները՝ կապված միգրացիաների, հալածանքների, սոցիալական ու տնտեսական պայմանների փոփոխությունների հետ: Բայց մեկ ընդհանրությանը պատկանելու գիտակցման փաստը մնում էր. այդ գիտակցման վրա մշտապես ազդում էր նաև ոչ հրեական աշխարհի վերաբերմունքը հրեաների նկատմամբ: Սակայն հնարավոր է արդյոք խոսել միասնական հրեական ինքնության մասին մեր օրերում: Ավանդական հրեական ինքնությունն «աղձատված» է զանգվածային գաղթերի, հսկայական մարդկային կորուստների (Հոլոքոստի), ձուլման, սիոնիստական գաղափարախոսության առաջացման, ավանդական կրոնասիրության՝ որպես հրեական ինքնության հիմնական չափանիշի (հրեական Լուսավորության՝ Հասքալայի գաղափարների ոգով) վերացման հետևանքով: Ի վերջո, եվրոպական հրեաների արդի սոցիալական և քաղաքական պատմության գործոնները նույնպես կարևոր ազդեցություն են ունենում արդի հրեական ինքնության վրա: Հուդայականությունն սկսեց ընկալվել որպես «մասնավոր կրոն», անհատի անձնական գործ, իսկ հրեա աթեիստներն ընկալվում են որպես նորմ: Ռուսաստանում, օրինակ, արդեն XX դարի երկրորդ կեսի սկզբին հրեական նույնականությունը վերջնականապես ձևավորվեց որպես զուտ էթնիկական մոդել [3, c. 242]: Այդ մոդելում ազգային սկիզբը սկսեց գոյություն ունենալ հրեական կրոնի՝ հուդայականության հետ առանց գրեթե որևէ կապ ունենալու: Բացի այդ, ժամանակակից շատ եվրոպական հրեաներ, ի հավելումն հրեական ինքնության, ունեն նաև բնակության երկրի ինքնությունը՝ ռուսական, անգլիական, լեհական, ֆրանսիական, մարոկկոյական և այլն: Ի լրումն, յուրաքանչյուր երկրում հրեական ինքնու-

թյունն իր առանձնահատկությունն ունի, թեև, արագ թե դանդաղ, մի ուղղությամբ է շարժվում: Այս նոր ինքնության մեջ հուդայականության տեղը զբաղեցրել է հրեական էթնիկ ինքնությունը՝ «հրեականությունը» (*Jewishness*): Ուշադրության առնելով արդի արևմտյան աշխարհում հրեական տարբեր ինքնությունների գոյությունը՝ հետազոտողները կարևորում են հակասեմիթիզմի գործոնը, որն ուժեղացնում է հրեականության գիտակցումը՝ հատկապես սեկուլյար հրեաների շրջանում: Բայց միայն հակասեմիթիզմն է արդյոք հրեաներին միասնական ժողովուրդ դարձնում: Մի թե հալածանքներն ու դրսի սահմանափակումներն են ներսից հրեա ժողովրդին միավորող գլխավոր գործոնը:

Հետազոտական գրականության մեջ բերվում են եվրոպական հրեաների սեկուլյար մեծամասնությանը բնութագրող զանազան հատկանիշներ [4]: Դա, օրինակ, նյութական ապահովվածությունն է, ծնելիության ցածր մակարդակը, կրթության բարձր մակարդակը, կանանց էմանսիպացիայի աստիճանը, կրոնաստիքության ցածր մակարդակը, զորեղ հասարակական արժեքները, հանդուրժողական հայացքները սոցիալական բնագավառում: Հասկանալի է, սակայն, որ այս հատկանիշները հազիվ թե համապատասխանեն «հրեական ինքնագիտակցություն» ավանդական հասկացությանը: Բացի այդ, դրանք բոլորովին էլ զուտ հրեական չեն: Թեև, մյուս կողմից, չի կարելի մոռանալ այն մասին, որ ինքնագիտակցությունը կարող է ունենալ տարբեր բաղադրիչներ, և որ մարդը կարող է հրեա լինել կրոնական, մշակութային, ինտելեկտուալ, էթնիկ և քաղաքական իմաստով:

II

Շատ հետազոտողներ նշում են հրեաների կրոնաստիքության անկման մասին: Նշվում է նաև, որ մեր ժամանակներում շատ հնարավոր է հրեականության վրա չհենվող աշխարհիկ հրեական ինքնությունը: Հրեականության տեղն, օրինակ (բայց ոչ անպայման), կարող է գրավել Իսրայել պետության՝ որպես աշխարհում միակ հրեական պետության, աջակցությունը [5, p. 16]: Իսրայելի հաջողությունները հպարտություն են առաջացնում ոչ միայն երկրի, այլև ամբողջ հրեության համար [6, pp. 65–77]: Իսրայելը սփյուռքի հրեաների համար դարձել է «քաղաքացիական կրոնի» գլխավոր խորհրդանիշներից մեկը, որոնք այն ընկալում են որպես «հոգևոր հայրենիք»: Այս առնչությամբ, բնականաբար, հարց է ծագում, թե սփյուռքահայերի մեջ համերաշխությունը Հայաստանի Հանրապետության հետ որքանով է ձևավորում հավաքական հիշողությունից գրիգորյան կրոնը դուրս մղող «քաղաքացիական կրոն»: Զանգվածային սեկուլյարացման ժամանակաշրջանում նման «քաղաքացիական նացիոնալիզմի» կրոնը սփյուռքում կարող է պատնեշ դառնալ ձուլման դեմ:

Ինչպես նշում է Մայքլ Բրաունը, ներկայումս Իսրայելը կրոնական տար-

բեր ուղղությունների պատկանող և քաղաքական տարբեր հայացքների տեր հրեաների համար ընդհանուր, համարյա թե միակ արժեքն է [7, շ. 80]: Գոյություն ունեն Իսրայելի նշանակալիությունը սփյուռքի հրեական համայնքների ինքնագիտակցության մեջ պայմանավորող տարբեր հանգամանքներ [8, շ. 127–134]: Իսրայելը ունիկալ պատմական նվաճում է մարմնավորում. երկհազարամյա սփռումից հետո հրեաները վերագտան իրենց ազգային տունը, ընդ որում՝ նրանց քաղաքական ինքնիշխանությունը վերականգնվեց այն նույն հողի վրա, ուր և կործանվել էր մ.թ.ա. 63 թվականին հռոմեացիների կողմից: Այս երևույթը ժամանակի ընթացքում չխամրած ազգային պատմական հիշողության նյութեղենացումն է: Հավատարմություն ժողովրդավարական սկզբունքներին, ինչն Իսրայելը մշտապես գործով է ապացուցում, երեք միլիոն ներգաղթյալների բարեհաջող աբսորբցիա, սոցիալական հավասարության գաղափարախոսության ստեղծում ու զարգացում, գիտության բուռն զարգացում, մշակութային-ստեղծագործական ակտիվություն, ռազմական արվեստին զուգակցված արդի մարտական ներուժ. առողջ ազգին բնութագրական այս բոլոր գծերը չունի, թերևս, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված և ոչ մի այլ պետություն: Սփյուռքի հրեաները չեն կարող անմասն մնալ Իսրայելում նոր եվրոպական հանրության զարգացման գործընթացից:

Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում հրեականությունից հրեաների նահանջը համեմատաբար զանգվածային երևույթ դարձավ արդեն XIX դարի երկրորդ կեսին: Ավստրիայում և Պրուսիայում, որտեղ քաղաքացիները պարտավոր էին հատուկ հարկ վճարել հոգուտ իրենց կոնգրեգացիայի, համայնքից դուրս գալու համար բավական էր ընդամենը հայտարարել, թե դավանանքից դուրս գտնվող անձի վիճակում ես, ինչն ազատում էր հարկը վճարելուց և, այսպիսով, նա դադարում էր պաշտոնապես պատկանել համայնքին: Չնայած դրան, պաշտոնապես համայնքից դուրս եկած շատ հրեաներ պահպանում էին հրեա ժողովրդին պատկանելության զգացումը: Կամավոր հասարակական մշակութային և մարդասիրական կազմակերպությունների ծագումը (ինչպես առանձին երկրներում, այնպես էլ միջազգային) հնարավորություն էր ընձեռում այդ զգացումը վերածել գործնականի՝ հոգուտ հրեա ժողովրդի: Ի հայտ եկավ այն հրեայի կերպարը, որը փորձում էր իր մեջ համատեղել հրեականության հետ ընդհանրության զգացումը և ոչ հրեական ազգային մեծամասնությանը (որի ինտեգրալ մասն էր ջանում դառնալ) պատկանելու գիտակցությունը:

Ինչևէ, ավանդական հրեականությունը բախվեց հեղափոխական գաղափարների հորձանքին, և շուտով դրա ազդեցությունը հրեաների վրա զգալիորեն նվազեց: Շատերը հավատում էին, որ հրեաները կարող են հավասարության հասնել միայն լիակատար ձուլման միջոցով, ինչը վերջ կդնի հրեականության գոյությանը: Մակայն կարևոր է ընդգծել, որ հրեաների մասնակցությունը առաջադիմական և հեղափոխական շարժումներին հանդես էր գալիս

և՛ որպես իր առանձնահատուկ ազգային պատկանելության գիտակցված ժխտում (պայքար հանուն բոլոր հալածվածների իրավունքների), և՛ միաժամանակ որպես հենց հրեականության որոշ կողմերի արտահայտություն: Ինչպես հայտնի է, շատ հայտնի և անգամ անվանի մարդիկ այս հարցում այնքան հեռու գնացին, որ քրիստոնեություն ընդունեցին. նրանց մեջ էին նշանավոր հրեա-գերմանական լուսավորիչ և հասարակական գործիչ Մոզես (Մոշե) Մենդելսոնի որդիները, վեց տարեկանում հոր կողմից մկրտված Կառլ Մարքսը, Հենրիխ Հայնեն և շատ ուրիշներ: Սակայն անգամ այն պարագայում, երբ խզումը հրեականության հետ չէր հանգեցնում մկրտության, շատ հրեաներ պատրաստ էին անցնել այս կամ այն դրոշի ներքո և խզել կապերը հրեական միջավայրի հետ: Այսպես, էր, օրինակ, սոցիալիստական և կոմունիստական շարժումների պարագայում, որոնցում XIX դարում մեծ ավանդ ունեցան հրեաները՝ հաճախ դառնալով այդ շարժումների առաջնորդները: Հրեաների համար այդ շարժումների գրավչությունը բացատրվում էր ոչ միայն սոցիալական հիմնախնդիրների հանդեպ հրեական մշակույթին բնորոշ զգայականությամբ, այլ նաև, թերևս, նրանով, որ այդ շարժումների նպատակն այնպիսի հասարակության ստեղծումն էր, որտեղ վերացված կլինեին առանձին փոքրամասնությունների խտրականությունը [9, c. 170]: Ի դեպ, հարկ է նշել, որ առաջին սոցիալիստական կուսակցությունն ստեղծվել է XIX դարակեսին, գերմանական հրեա Ֆերդինանդ Լասալի կողմից, որ Ռուսաստանում հրեաներն ակտիվորեն մասնակցում էին անարխիստական կուսակցությունների աշխատանքին, իսկ սոցիալ-դեմոկրատների (ինչպես մենշևիկների, այնպես էլ բոլշևիկների) մեջ նրանց ներկայությունը բավական զգալի էր [10]: Հրեա Բելա Կունը 1919թ. գլխավորում էր կարճատև հունգարական կոմունիստական հեղափոխությունը, և նրա կառավարությունում 14 հրեա կար: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կրկին հրեաները բավական շատ էին Արևելյան Եվրոպայի իշխող կոմունիստական կուսակցություններում: Բացի այդ, Արևմուտքում ևս XX դարի առաջին կեսին սոցիալ-դեմոկրատների նշանավոր առաջնորդների թվում հրեաներ կային. Լեոն Բլյումը Ֆրանսիայում և Հարոլդ Լասկին Անգլիայում: Հրեաներն այնքան նկատելի էին սոցիալական ռեֆորմների, քաղաքական հեղափոխության, աշխարհայացքի նոր ձևերի, գրականության մեջ և արվեստում նորարարության համար մղվող շարժումներում, որ պահպանողական շրջանակներն այդ շարժումներն սկսեցին համարել «հրեական ոգու ծնունդ», թեև հրեաների մասնակցությունն այդ շարժումներին ձուլմանն ուղեկից երևույթ էր [11]: Ժամանակի ընթացքում շատ ավելի մեծ թվով մարդիկ հրեությունը դիտարկում էին ոչ թե կրոնական, այլ մշակութային-պատմական համատեքստում: Այդ մոտեցումների հիմնական տարբերակիչ գիծը՝ դրանց ընդունման կամավորությունը, այն էր, որ «հրեականի» մասին սույն պատկերացման կոնկրետ ձևերը կախված են առանձին անձանց

ազատ ընտրությունից: Նրանք իրենք են որոշում, թե ինչպես ներկայացնեն իրենց պատկանելությունը հրեա ժողովրդին, այդ պատկանելության աստիճանը և կյանքի որ ոլորտներում: «Հրեականի» այս տեսակը ընդհանուր շատ գծեր ունի իսրայելցիների հավաքական ինքնության հետ, բայց այն տարբերությամբ, որ սփյուռքում այն չի ամրապնդվում ազգային հրեական շրջապատով: Սփյուռքի համատեքստում ինչպես «հրեականի» ներկայացումը, այնպես էլ դրա պահպանման մտահոգությունը, ըստ էության, կայացվում է յուրաքանչյուրի անհատական որոշմամբ, և հրեությանն իր պատկանելության մասին պատկերացումը կարող է խոր չլինել, եթե մարդը դրանում այնքան էլ հետաքրքրված չէ [9, c. 174–175]: Մյուս կողմից՝ ակնհայտ է թվում, որ հենց նման ինքնությունը կարող է նպաստավոր հող հանդիսանալ գեղարվեստական ստեղծագործության համար, և այս փաստը կարելի է հավաստել այնպիսի անուններով, ինչպիսիք են Մարսել Պրուստը, Մարկ Շագալը, Սոլ Բելուն և կամ Վուդի Ալենը. մենք թվարկեցինք ընդամենը մի քանիսին նրանցից, ովքեր կարող են մտցվել այս ցանկում: Արժե նշել նաև հրեաների նշանավոր նվաճումները գիտության ոլորտում, ինչպես, օրինակ, Զիգմունդ Ֆրեյդը և Ալբերտ Էյնշտեյնը, որոնց անունները զանգվածային գիտակցության մեջ համարյա թե գիտության խորհրդանիշ են դարձել:

Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի, Արևելյան Եվրոպայում և Ռուսական կայսրությունում, որտեղ XIX դարում և XX դարասկզբին կենտրոնացած էր հրեա ժողովրդի մեծ մասը, ինչպես նաև մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան երկրներում շարունակում էր գերիշխող մնալ հրեությանը պատկանելության ավանդական ըմբռնումը ինչպես իրենց՝ հրեաների, այնպես էլ ազգային մեծամասնության կողմից, որը հրեաներին համարում էր առանձին ազգային-կրոնական խմբի անդամ: Դեպի Արևմուտք, հիմնականում՝ ԱՄՆ, Ռուսաստանի և Արևելյան Եվրոպայի հրեաների զանգվածային գաղթի ժամանակ գաղթողները նոր հայրենիք էին տանում ինչպես իրենց ավանդական կենսաձևը, այնպես էլ հրեությանը պատկանելության մասին ավանդական տեսակետը, որ հաճախ պահպանվում էր նրանց սերունդների կողմից:

Այդ շրջանում առավել չափով դրսևորվեցին հրեական պատմության համար հավասար չափով բնորոշ երկու միտումներ՝ կենտրոնախույս և կենտրոնամետ: Առաջին միտումն արտահայտվում էր շրջապատող հասարակությանը լիակատար ինտեգրվելու ձգտմամբ՝ փլուզելով հրեաներին այդ հասարակությունից զատող բոլոր արգելքները, որ ստեղծվում էին ինչպես միջավայրի կողմից, այնպես էլ հենց իր՝ հրեայի գիտակցության մեջ: Սակայն ազգայնականության զարթոնքը Եվրոպայում ցույց տվեց, որ շրջապատող հասարակության հետ նույնականացումը կարող է նշանակել միայն նույնականացում այս կամ այն որոշակի ազգի հետ [12, c. 187–204]: Այս խնդիրը հատկապես

բարդ էր բազմազգ պետություններում, որոնցում հրեաները կանգնեցին կամ տիրապետող, կամ հպատակ ազգերին միանալու ընտրության առջև: Հրեաները հիմնականում նույնականացան այն ժողովուրդների հետ, որոնք տվյալ հասարակության մեջ առավել զարգացած մշակույթ ունեին, մինչև ժամանակ, շատերը, հաշվի առնելով հրեական պատմության դասերը, կարեկցում էին հալածված ժողովուրդներին և հասարակության ստորին դասերին և ներգրավվում էին հանուն ազգային և սոցիալական ազատագրության նրանց մղած պայքարին: Սակայն ճնշված ազգերի ազգային պայքարին մասնակցությունն անգամ հազվադեպ էր հրեաների համար այդ ժողովուրդների հետ ինքնանույնականացման հնարավորություն ապահովում. ազգային ազատագրության հասնելով՝ այդ ժողովուրդները պատրաստ չէին լինում անվերապահորեն իրենց միջավայր ընդունել հրեաներին:

Այս բոլոր արտաքին գործոնները, ազգային ինքնապահպանման բնագրի և հնագույն ժողովուրդներից մեկին, որը բարձր մշակույթ է ստեղծել և չի կորցրել ապրելու ուժը երեք հազարամյակների ընթացքում, պատկանելության զգացմանը զուգահեռ, հանգեցրին հրեից մեջ կենտրոնաձիգ միտման ուժգնացմանը: Այդ միտումն իր արտահայտությունը գտավ ինչպես կրոնական-մշակութային ազգային ավանդույթների ուժգնացման, այնպես էլ ազգային կյանքի համար նոր բովանդակության ու ձևերի որոնման մեջ՝ ազգային ավանդապաշտության և արդի աշխարհիկ հասարակության միջև տարբեր փոխզիջումներից սկսած մինչև զուտ սեկուլյար ազգայնականությունը: Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում փորձեր արվեցին Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում (Լեհաստան, Ռումինիա, Լիտվա, Լատվիա) ստեղծել հրեաների մշակութային և հասարակական ինքնավարություն և ուժեղացնել ազգային ինքնագիտակցությունը հրեական սեկուլյար մշակույթի զարգացման ճանապարհով: Այդ երկրների հրեա երեխաների մեծ մասը դպրոցներում հրեական դաստիարակություն էր ստանում եբրայերենով և իդիշով, որոնցով ստեղծված հարուստ գրականությունը ընթերցողների զգալի շրջանակ ուներ: Սակայն Արևելյան Եվրոպայի հրեական մշակույթը գրեթե ամբողջովին մոխրացավ Հոլոքոստի կրակներում:

III

Մեր օրերում սփյուռքի գրեթե բոլոր հրեաներն ապրում են լիակատար, համապարփակ էմանսիպացիայի պայմաններում: Իրավունքների բացարձակ հավասարությունը երաշխավորված է և իրականացվում է գործնականում: Եվ դա ամեննին էլ հանուն իրենց իրավունքների պայքարում հրեաների ունեցած վաստակը չէ, այլ, օրինակ, ժողովրդավարական երկրներին բնորոշ երևույթ [13, c. 70–71]: Պատմականորեն ասիմիլյացիա հասկացությունը բնութագրում

Է շրջապատող միջավայրին հրեաների հարմարվելու գործընթացը: Սակայն այն իրավիճակում, որն ստեղծվել էր, օրինակ, ԱՄՆ-ում, որտեղ ապրում է սփյուռքի ամենախոշոր հրեական համայնքը, հրեաներն այլևս ասիմիլացվելու անհրաժեշտություն չունեն: Նրանք ամբողջովին ամերիկյան իրականության մաս են կազմում, ուստի և ազգային «գոյատևման» (այն, ինչ ընդունված է անվանել իբրև «հրեից գոյության շարունակություն») հարցն այլևս ուղեցույց աստղ չէ նրանց առօրյա կյանքում: Ամերիկայում ավանդական հրեական արժեքները սպառնալիքի տակ են գտնվում, առաջին հերթին՝ կոսմոպոլիտական և ունիվերսալիստական արժեքների կողմից. Թորայի և այլ սուրբ տեքստերի ուսումնասիրությունն այնքան էլ բնական չէ մի հասարակության մեջ, որն առաջնային է համարում անհատական և սոցիալական ազատությունը, թեև ուղղափառ (օրթոդոքսալ) կրոնական հրեական զգալի մի համայնք շարունակում է գոյություն ունենալ [14]: Քաղաքական և տնտեսական ազատություն, հանդուրժողականություն, բազմակարծություն, մշակույթի ոլորտում ստացած ճանաչում. այս ամենը հրեական համայնքներ ունեցող արևմտյան երկրներում հետին պլան է մղում իրենց՝ հրեաների առանձնակիության ընկալումը: Ընդ որում՝ ասիմիլյացիան ավելի է խորանում, ինչի արդյունքում ծագում է պարադոքսալ իրավիճակ. իրական սպառնալիքն այն բանի, որ խաղաղ և ոչ բռնի ճանապարհով կիրականացվի այն, ինչին նացիստ բարբարոսները չկարողացան հասնել ուժով և աղետի բոլոր սարսափներով: Հրեա ժողովրդի՝ որպես առանձին հանրության, աստիճանական վերացման սպառնալիքը: Սա սփյուռքում հրեից կյանքի ամենամեծ պարադոքսն է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից ի վեր [15]: Հրեական հանրության՝ որպես իրեն հատուկ սովորույթների, կրոնի, ինքնագիտակցության, գիտության, ստեղծագործության տեր էթնիկ խմբի, գոյության շարունակումը կասկածի տակ է դրվում այն պայմաններում, երբ Արևմուտքում այն ձեռք է բերել մի կարգավիճակ, որը նախկինում երբեք չի ունեցել հրեա ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում: Բայց հարց է մնում, թե կարող է արդյոք ժողովուրդը, այն բանից հետո, երբ աղետից հետո կարողացել է ոտքի կանգնել, այն բանից հետո, երբ ողջ է մնացել և գոյատևել երկհազարամյա արտաքսման մեջ՝ ենթարկվելով հալածանքների, բռնության, հետապնդումների, ջարդերի, ցեղասպանության, կարո՞ղ է արդյոք այդ ժողովուրդը համակերպվել ոչ այնքան դրամատիկ, բայց, անկասկած, միանգամայն իրական սցենարի հետ. լուր թախիծով վերանալ, լքել պատմության ասպարեզը: Այս «հրեական հարցը» շատ ավելի դժվարին է ու բարդ, քան այն, ինչ մշտնջենապես գոյություն ունեւ հակասեմիթիզմի և ատելության մռայլ ստվերում, ինչն ուղեկցում էր հրեաներին նրանց արտաքսման երկար ճանապարհին:

Հետխորհրդային երկրներում հրեական, և ոչ միայն հրեական, ինքնության էթնիկ մոդելի կարևոր առանձնահատկությունը դրա պասիվ բնույթն է: Մինչ Արևմուտքի երկրներում, առաջին հերթին՝ ԱՄՆ-ում, հրեությանը պատկանելը հիմնվում էր ներքին ինքնորոշման վրա և արտաքնապես սովորաբար արտահայտվում էր հրեական կրոնական կոնգրեգացիաներից մեկը (ուղղափառ, կոնսերվատիվ կամ ռեֆորմիստական) կամավոր մտնելով, ԽՍՀՄ-ում մտցվեց ազգության պարտադիր գրանցում (1930), թեև հրեա ազգությանը պաշտոնապես պատկանելը միշտ չէ, որ համընկնում էր նրանց ինքնանույնականացման հետ, ում գրանցում էին որպես հրեա, և շատերը, ովքեր պաշտոնապես հրեա էին համարվում և շրջապատի կողմից ընդունվում էին որպես այդպիսին, փաստորեն կորցրել էին ամեն տեսակ կապը հրեության հետ (հատկապես հրեից կրոնի դաժան հետապնդումներից և հրեական մշակույթի ոչնչացումից հետո) և իրենց նույնականացնում էին ազգային այն մեծամասնության հետ, ում միջավայրում ապրում էին: Խորհրդային Միությունում մի քանի սերունդ հրեականությունը ոչ թե գաղափարախոսություն էր, այլ կենսագրության փաստ. այն չէին ընտրում, և դրանից անհնար էր հրաժարվել [3, c. 246-247]: Դա, գուցե, օրհնություն է կամ նզովք, բայց ոչ գաղափարախոսություն: Նզովք նրանց համար, ովքեր պատրաստ էին մնալ դրա՝ անեկդոտի աստիճանի նեղացված սահմաններում, օրհնություն նրանց համար, ովքեր փորձում էին դուրս պրծնել իրենց անդաժնալի, անձուկ, անեկդոտ հիշեցնող հրեականությունից: Այն տարիներին «հրեա լինել» նշանակում էր ինչ-որ իռացիոնալ, իմաստագուրկ մի բան, քանի որ դա ոչ մի կերպ կախված չէր այդ բառերի գտնված կամ կորսված ըմբռնումից: Ռուսական հրեաները հրեա չէին դառնում, նրանք այդպիսին ծնվում էին: Խորհրդային Միությունում մարդն իր ազգությունը ժառանգում էր կամ երկու ծնողներից, կամ, եթե ծնվել էր խառնամուսնությունից, ընտրում էր ծնողների երկու ազգություններից մեկը՝ տասնվեց տարեկանի հասնելուց հետո: Ազգությունը չէր ենթադրում գաղափարախոսական մի ինչ-որ հաստատում՝ կրոնական կամ մեկ այլ ձևով: Մարդը պարզապես պատկանում էր այս կամ այն ազգությանը: Բհարկե, վատ չէր լինում, եթե նա իմանում էր նաև իր ազգի լեզուն, նրա պատմությունը, մշակույթը, սովորույթները, բայց դա ինքնության պարտադիր հատկանիշ չէր: Ազգության հետ ինքնանույնականացումը գրանցվում էր փաստաթղթերում և հայտնի էր պետությանն ու ոչ հրեական միջավայրին: Մարդը «հրեա լինելու» անհրաժեշտություն չուներ, նա պարզապես այդպիսին էր իր ծննդյան փաստով:

Այս իրավիճակը խիստ տարբերվում է ամերիկյան մոդելից, թեև հիշեցնում է իսրայելականը [3, c. 247]: Երբ ամերիկացի հրեաները խոսում են իրենց ընդհանրության գոյության շարունակման մասին և իրենք իրենց հարց են տալիս, թե ինչը կստիպի իրենց հետնորդներին «հրեա լինել» հանդուրժող և

ժողովրդավարական ամերիկյան հասարակությունում, նրանք, իհարկե, նկատի ունեն ոչ թե պարզապես ինչ-որ ընդհանրության գոյությունը, որը կկոչվի «հրեական», այլ ենթադրում են հրեաների ակտիվ մասնակցությունը գաղափարական և կրոնական կողմնորոշում ունեցող գործուն միավորմանը: Նրանք ուզում են հասկանալ, թե ինչը կստիպի իրենց երեխաներին և թոռներին լինել սինագոգի մի մաս, նպաստել նրա գոյությանը, ձեռնպահ մնալ այլահավատների հետ ամուսնությունից, իրենց երեխաներին դաստիարակել կյանքի փուլը հրեական ծեսերին համապատասխան անցնելու համար և այլն: Հրեականության գոյության շարունակման խուճապի մեջ իսկ նկատելի է ինքնության ակտիվ բնույթի ակնարկը: Խոսքը պարզապես ցանկացած հրեական ինքնության պահպանման մասին չէ, այլ սոցիալական վարքագծի բարդ համակարգի, ինչը կենսականորեն կարևոր է համայնքային կառուցվածքի պահպանման համար: Ամերիկացի հրեան մշտապես պետք է ապացուցի իր հրեությունը ակտիվ գործողություններով, հակառակ պարագայում նա դուրս կմղվի դրանից: Միանգամայն այլ է ինքնության պասիվ խորհրդային մոդելը, որում ժառանգված ազգությունը բավարար էր և է ընդհանրությունը պահպանելու համար:

Մեկ այլ կարևոր առանձնահատկություն է հրեական կյանքի «ներգրումը» ոչ հրեական հանրության կյանքում: Ըստ էության, սփյուռքում հրեական համայնքն ընդհանրապես միշտ տվյալ պետության հասարակության ինտեգրալ մասն է կազմում: Այդ հասարակության մեջ այն կարող է տարբեր դիրքեր գրավել՝ առանձին կորպորատիվ հատվածից, ինչպես միջնադարում էր, մինչև բնակչության լրիվ տարրալուծված ու ցրված խումբը՝ գուրկ որևէ կորպորատիվ հատկանիշից, ինչպես Խորհրդային Միությունում էր: Բայց և՛ մեկ, և՛ մյուս դեպքում այն իր հարևանների սոցիալական կազմակերպության մասն է հանդիսանում: Հին Հրեաստանից հետո հրեական հանրության ոչ ինկլյուզիվ բնույթի միակ դեպքը արդի Իսրայելն է [3, c. 248]: Միայն այստեղ ենք հանդիպում իրոք «ազգային» տիպի հրեական ինքնության: Այն սոցիալապես էքսկլյուզիվ է, քանի որ իսրայելական հասարակությունը մեկ ուրիշի մաս չի կազմում: Ընդհակառակը, այլ փոքրամասնություններն են նրա մաս կազմում, ընդ որում՝ Իսրայելը փորձում է (միշտ չէ, որ հաջողությամբ) նրանց հետ կազմակերպել համակեցություն միասնական սոցիալական օրգանիզմի շրջանակներում: Ազգային փոքրամասնությունների առկայությունն ինքնին ենթադրում է էթնիկության հասկացության գոյությունն ու կարևորությունը արդի իսրայելական հրեական ինքնության մեջ: Խորհրդայինի նման՝ իսրայելական ինքնությունը էքսկլյուզիվ է, քանի որ իսրայելցին, գոնե տեսականորեն, չի կարող պատկանել այլ ազգության:

Իսրայելական հասարակությունը, ի տարբերություն ամերիկյանի կամ արևմտաեվրոպականի, չի հենվում «քաղաքացիական ազգի» կամ «բազմամշակութայնության» հասկացությունների վրա և չի ճանաչում էթնիկ պատկա-

նելության բազմաքանակությունը: Ջարմանալի չէ, որ հենց Իսրայելում ընդհուպ մինչև վերջին ժամանակներս ազգության պետական գրանցում էր կիրառվում, իսկ կրոնական պատկանելությունը շարունակում է գրանցվել նաև այժմ: Այդ համակարգում կրոնը փոքրամասնության հնարավոր հատկանիշներից մեկն է կազմում, և հենց դրա համար էլ Իսրայելում կրոնական պատկանելությունը նույնպես էքսկլյուզիվ է, ինչպես և արևմտյան հրեական սփյուռքին բնորոշ ինքնության մոդելները: Այսպես, «մահմեդականը» չի կարող այլ կրոն դավանել, օրինակ, եբրայական կրոն: Այլ կրոն ընդունած հրեան պետք է այլ խումբ անցնի: Բայց քանի որ այդ բոլոր խմբերը խիստ ֆիքսված են, անդամությունը դրանցում պասիվ է: Մահմեդականը կամ հրեան պարտավորված չեն պահպանելու իրենց խմբի ամբողջականությունն ինչ-որ ակտիվ գործողությունների միջոցով: Նա կարող է որևէ կերպ չդրսևորել իր կրոնական ինքնությունը և, այնուամենայնիվ, մնալ մահմեդական կամ հրեա: Այս պասիվ ինքնության արդյունքներից մեկը լավ հայտնի այն մտահոգությունն է, թե Իսրայելը զրկվում է իր հրեական էությունից, թե հրեա երեխաներն Իսրայելում հաճախ գլուխ չեն հանում հրեականության հիմունքներից, հրեական մշակույթից և այլն [3, c. 249]: Այս առնչությամբ հետազոտողները փաստում են «երկրի բնակչության մեծ մասի արմատական ապահրեականացումը» [16, c. 435]:

Իսրայելում գոյություն ունի զարգացած, բավական ամուր արմատավորված և հարուստ ավանդույթների վրա հիմնված սեկուլյար մշակույթ: Պետության ստեղծմանը նախորդած ժամանակաշրջանում այդ մշակույթը կազմեց «եբրայական ինքնագիտակցության» հիմքը, որին, անկախության հռչակման հետ կապված, փոխարինելու եկավ նորահայտ, որպես կոլեկտիվի ինքնընկալման հիմք ձևավորված, ազգային կողմնորոշում ունեցող «իսրայելական ինքնությունը»: Իսրայելի քաղաքացիների մեծ մասի կենսակերպն ու ինքնընկալումը, ըստ էության, սեկուլյար են, թեև ոչ աթեիստական [17, c. 106]: 1990-ական թթ. սկզբներին Իսրայելում սկսեցին նշմարվել մշակութային պատերազմներ «աշխարհիկ» ճամբարի և իսրայելական հասարակության որոշ այլ խմբերի միջև: Այդ ժամանակվանից ի վեր հակամարտություններն ավելի են թեժանում, որոնց առարկա է հանդիսանում ոչ միայն հասարակությանն այս կամ այն կրոնական նորմը պարտադրելու համար պետության հզորությունն օգտագործելու հարցը, այլ նաև «խաղի կանոնների» էությունն ինքը այդ պետության մեջ: Իսրայելական սեկուլյարիզմի հիմնախնդիրն այն է, որ հրեա բնակչության մեծ մասն այդ երկրում, ներառյալ նրանք, ովքեր իրենց աշխարհիկ քաղաքացի են համարում, մինչ օրս իրենց ազգային հավաքական ինքնությունն ընկալում են կողերի, արժեքների, խորհրդանիշների և հավաքական հիշողության պրիզմայի միջով, որոնք հիմնականում փոխառվել են հուդայականությունից, թեկուզ և ունենալով նոր, ազգային կողմնորոշում ունեցող աշխարհիկ կամ էթնիկ ուղղվածության մեկնություն:

Իսրայելն առաջ է եկել և զարգացել որպես «ազգային պետություն», այսինքն՝ պետություն, որն ստանձնել է որոշակի ազգային կամ էթնիկ խմբի՝ հրեա ժողովրդի շահերի, բարեկեցության, հեռանկարների պաշտպանության պարտավորություններ: Մինչդեռ սփյուռքի հրեաների մեծ մասն ապրում է «քաղաքացիական պետություններում», երկրներում, որոնք պարտավորվել են պաշտպանել իրենց բնակիչների շահերն ու բարեկեցությունը՝ անկախ այս կամ այն էթնիկ, ազգային կամ կրոնական խմբին նրանց պատկանելությունից: Սփյուռքի, առաջին հերթին՝ Միացյալ Նահանգների հրեաները ստեղծել են սեփական էթնոս, որի բաղադրիչներն են դարձել «քաղաքացիական պետության» արժեքները՝ հավասարություն, կրոնի անջատում պետությունից, բազմակարծություն՝ ներառյալ նաև բազմակարծություն հրեական անձնային ինքնանույնականացումը որոշելու փորձերում: Բայց իսրայելյան հասարակության մեջ ևս ավելի են ուժեղանում «ազգային պետության» սկզբունքների վերանայման միտումները՝ «քաղաքացիական պետության» մոդելին համապատասխան, հատկապես պաղեստինա-իսրայելական հակամարտության լարվածության թուլացման շրջաններում: Այս ամենը սփյուռքյան հրեությանը կանգնեցնում է բարդ երկրնորանքի առջև: Մի կողմից՝ նրա ներկայացուցիչների համար կենսականորեն կարևոր է Իսրայելում տեսնել հրեական աուտենտիկության մարմնացումը, այլապես Իսրայելը կդադարի սփյուռքի համար ներշնչանքի աղբյուր, հրեական կյանքը սնող կենսատու ուժերի կենտրոն լինել: Այսինքն՝ սփյուռքի հրեությունն ուզում է, որ Իսրայելը գոյություն ունենա որպես «ազգային պետություն»: Մյուս կողմից՝ սփյուռքի հրեությունն ընդունել է հենց «քաղաքացիական պետության» բարոյական նորմերը և միայն այդ տեսակի պետության հետ է կապում սփյուռքում հրեից ապագայի հույսերը: Պարադոքսն այն է, որ, ըստ էության, պետության հրեական բնույթի վերաբերյալ հարցին մոտեցումների մերձավորությունը, նմանությունը, ինչպես սփյուռքի հրեաների, այնպես էլ իսրայելցիների կողմից, հանգեցնում է նրան, որ Իսրայելի քաղաքացի չհանդիսացող հրեաների համար ավելի ու ավելի դժվար կլինի նրանում այն «կիզակետը», կենտրոնացումը, ակունքը տեսնելը, որից իր կենսական ուժերն է ստանալու հրեից գոյությունը սփյուռքում [13, c. 74-75]:

Այսպիսով, արդի իրականությունն ինքն է խնդիրն առաջադրել և մարտահրավեր նետել ինչ ճանապարհով և ո՞ր ուղղությամբ են զարգանալու հրեական ինքնանույնականացման պլյուրալիստական ձևերը այն հիմքերի արժեզրկման դարաշրջանում, որոնց վրա հենվում է Իսրայելը որպես «ազգային պետություն», ինչպես ս պահպանել հրեա ժողովրդի մշակութային, կրոնական և բարոյական արժեքներն այս պայմաններում:

Իսրայելի առջև կանգնած խնդիրները (առաջին հերթին՝ կրթության համակարգի հետ կապված) կարելի է ձևակերպել այսպես. հրեական անձնային ինքնանույնականացման գիտակցմանն ուղղված դաստիարակություն: Նման

դաստիարակությունը պետք է կառուցվի հրեական հարուստ ավանդույթների հիմքի վրա և չհենվի երկրում տեղի ունեցող սպոնտան գործընթացներին: Անհրաժեշտ է որոշակի ճշգրտման ենթարկել սիոնիզմի կարևոր դիրքորոշումներից մեկը՝ սփյուռքի ժխտումը, գնահատելով ողջ աշխարհի հրեության կողմից այդ դիրքորոշման ընկալման բացասական պահերը: Քանզի, թեև Իսրայելը համարվում է այն երկիրը, աշխարհագրական այն տարածքը, որի հանդեպ ամենաուղղակի և լիակատար իմաստով կիրառելի է հրեական կյանք հասկացությունը, հարկ է ըմբռնումով վերաբերվել և աջակցել հրեական կյանքին երկրագնդի ցանկացած այլ կետում: Սփյուռքի «օրակարգում» Իսրայելի հետ փոխհարաբերությունների ձևերի և նրբերանգների բազմազանությունն է:

IV

Վերջին 200 տարիների ընթացքում հրեա ժողովուրդը չորս պատմական գործընթաց է անցել, որոնք դարձել են նրա մշակութային-գաղափարախոսական հաջորդականության խզման պատճառ: Դրանք են. Լուսավորությունը և դրան հաջորդած քաղաքական ու սոցիալական փոփոխությունները, սիոնիզմի ծագումը, որը հանգեցրեց արդի բարգավաճ պետության՝ Իսրայելի ստեղծմանը, Հոլոքոստը և միանգամայն նոր տեսակի սփյուռքի զարթոնքը [18, շ. 29–30]: Մինչև Լուսավորությունը կրոնը հրեական մշակույթի կենտրոնն էր և հրեա ժողովրդի գոյության հոգևոր հենքը: Այն համախմբում էր ժողովրդին՝ թույլ չտալով հեռանալ իր համայնքից, և խոր իմաստ էր հաղորդում օտար ավերում ապրող հրեաների տառապանքներին՝ նրանց հավատ ներշնչելով, թեկուզ և հեռավոր ապագայում, Մեսիայի գալստյան հանդեպ: Լուսավորությունը և դրան համընթաց տեղի ունեցող քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխությունները սասանեցին այդ հավատը՝ ի վերջո հանգեցնելով եվրոպական երկրների հրեական համայնքների սերունդների միջև գոյություն ունեցող մշակութային և գաղափարական կապերի խզմանը:

Լուսավորության ժամանակներից ի վեր այլևս համոզիչ չէր այն հարցի պատասխանը, թե ինչը պետք է ոչ կրոնական հրեաները (ովքեր այժմ համաշխարհային հրեության մեծամասնությունն են կազմում) համարեն ազգային արժեքներ: Այս անորոշության ֆոնին քաղաքական սիոնիզմը ձևակերպեց կրոնական արժեքների իր այլընտրանքը՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ «հրեաները պետք է նման լինեն այլ ազգերին», ինչի համար նրանց առաջարկվում է դառնալ վիթխարի մի նախագծի համամասնակիցներ, ըստ որի՝ հրեաները պետք է վերադառնային նախահայրերի երկիրը և այնտեղ վերականգնեին հրեից պետականությունը: Սիոնիզմի զարգացումն աչքի ընկավ հեռուսական նվաճումներով, որոնց զագաթնակետը դարձավ ոչ միայն հրեական պետության հիմնումը, այլ նաև նրա հաղթանակը գոյապայքարում (չնայած

այն ոչնչացնելու արաբական երկրների բոլոր փորձերին) և երկրում գիտատեխնիկական, տնտեսական ու սոցիալ-քաղաքական առումներով զարգացած հասարակության ստեղծումը: Տարօրինակորեն, սակայն, պատմական այս նշանավոր փաստը խորացրեց պատմական հաջորդայնության խզումը, քանի որ այժմ, երբ Էրեց-Իսրայելում են ապրում հրեա ժողովրդի զգալի մասը և հրեա երիտասարդության մեծամասնությունը, հրեականության դերի հարցն էլ ավելի սուր է դրված: Հրեականությունը պետք է նաև հարմարվի նոր պատմական իրավիճակին, քանի որ արդի հրեական պետության գոյությունը նրա առջև նոր հարցեր է դնում, օրինակ՝ թե ինչպես կրոնական օրենքի (Գալախայի) դրույթները պետք է զուգակցվեն ժողովրդավարական արժեքների հետ:

Այս իմաստով գլխավոր խնդիրն այն է, որ Իսրայելի գոյությունը հասարակության ոչ կրոնական հատվածին և նրա կրոնական բնակչության որոշ մասին նոր հնարավորություն է տալիս ապրել «նորմալ» ժողովրդավարական պետությունում, որտեղ հրեական մշակույթը կրում է այլ մշակույթների խաչաձևվող ազդեցությունները: Քաղաքական անկախություն ձեռք բերելով և, որքան էլ տարօրինակ է, անկախության ձեռքբերման արդյունքում հրեա ժողովուրդը ներկայումս վտանգի առջև է հայտնվել, որի էությունը նրա ազգային-պատմական արժեքների փոխարինումն է այնպիսի արժեքներով, որոնք վերաբերում են այլ մշակույթների ու գաղափարախոսությունների:

Ակնհայտ է, որ սերունդների հաջորդայնության խզման կարևոր պատճառներից մեկը դարձավ Հոլոքոստը, որը խոր ազդեցություն ունեցավ համաշխարհային հրեության ճակատագրի վրա ինչպես ժողովրդագրական, այնպես էլ գոյաբանական առումներով: Եվրոպական հրեաներին պատահած աղետը խափանեց հրեա ժողովրդի վիթխարի ստեղծագործական ներուժը. մարդկային կյանքերի հետ մեկտեղ անդարձ կորան գաղափարներ, հայտնագործություններ, գիտական և գեղարվեստական արժեքներ, որոնք կարող էին նպաստել ազգի հզորացմանն ու հետագա համախմբմանը:

Եթե կար ժամանակ, երբ Եվրոպան տուն էր հանդիսանում աշխարհի ամենամեծաթիվ հրեական բնակչության համար, ապա այժմ ողջ Եվրոպայում հրեաներն ավելի քիչ են, քան ԱՄՆ-ում կամ Իսրայելում: Նացիստներից և նրանց դաշնակիցներից կրած կորուստները խոր տրավմաներ հասցրին վերապրած հրեաներին, որոնք հաճախ չափից ավելի փոքրաթիվ էին անգամ ամենատարրական համայնքային ծառայություններ ապահովելու համար: Իհարկե, արդի Եվրոպայում կան հրեական համայնքներ, որոնք զգալի չափով գերծ են մնացել Հոլոքոստին անմիջական առնչությունից. գուցե նրա համար, որ բոլորը փրկվել են (ինչպես, օրինակ, Դանիայում), գուցե այն պատճառով, որ պետական ապաստան են ստացել (ինչպես Շվեյցարիայում, Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում, Իռլանդիայում) կամ այն ժամանակ ընդհանրապես Եվրոպայում չեն ապրել (հյուսիսաֆրիկյան հրեաները Ֆրանսիայում, լիբիական

և լիբանանյան հրեաներն Իտալիայում): Այնուամենայնիվ, եվրոպական հրեաների մեծ մասի համար Հոլոքոստը հրեական ինքնագիտակցության մեջ նոր կարևոր բաղադրիչ ավելացրեց, քանի որ դա, այս կամ այն չափով, հրեական փորձ էր, ընդհանուր բոլորի համար:

Մշակութային-գաղափարախոսական հաջորդայնության խզման չորրորդ գործոնը դարձավ նոր տեսակի սփյուռքի առաջացումն ու զարգացումը, որը հատուկ է հիմնականում ԱՄՆ-ի համար, որտեղ, ինչպես վերը նշվեց, ապրում է աշխարհում ամենամեծ հրեական համայնքը: Հրեության ամերիկյան և իսրայելական ընկալումներն ապշեցուցիչ ձևով տարբերվում են իրարից: Այս երկու մշակույթներից յուրաքանչյուրը յուրովի էր մեկնաբանում երկուսի համար էլ ընդհանուր, բայց արդի դարաշրջանին նախորդող հրեական ավանդույթը: Այդ մեկնաբանությունների տարբերությունն այնքան մեծ է, որ հիմք է տալիս խոսելու հուդայականության երկու տարբեր մոդելների առաջացման մասին: «Նպաստավոր արտաքսումը» ԱՄՆ բոլոր հրեաների առջև լայն հնարավորություններ է բացում. նրանք կարող են ձուլվել, ամուսնանալ այլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ՝ դրանով հանդերձ հուդայականությանը վերաբերվելով որպես կրոնի և համայնքային գործունեության համակցում, կրոնական այլ խմբերի նմանողությամբ: Հետաքրքիր է, որ ամերիկյան հրեաները հիմնականում արևելաեվրոպական և կենտրոնաեվրոպական ներգաղթյալների ժառանգներն են, որոնք այնտեղ են տարել ինքնության բոլորովին այլ ձև, քան այսօր կա այնտեղ:

Վերջին տարիների շատ հետազոտություններում առանձնանում էր հրեական «վերածննդի» հասկացությունը [4]: Մասնավորապես, բարձրացել էր հրեական ծեսերի պահպանման մակարդակը, հատկապես երիտասարդների շրջանում: Եվ դա վերաբերում է հրեա բնակչության ինչպես հետկոմունիստական, այնպես էլ արևմտյան խմբերին: Սակայն այդ վերածնունդը չպետք է դիտարկել որպես կրոնական ռենեսանս, վերադարձ «հին բարի ժամանակներին»: Տպավորություն է ստեղծվում, որ տեղի է ունենում ընդհանուր սահմանման վերափոխում, թե ինչ է ընդհանրապես նշանակում լինել հրեա: Մարդիկ իրենց հրեա զգալն արտահայտելու նոր եղանակներ են գտնում՝ հարմարեցնելով ավանդական ծեսերը, սովորույթներն ու պահվածքը իրենց նոր սոցիալական իրականությանը: Օրինակ, սինագոգը, կրոնական ծեսեր անցկացնելու (ինչի համար նախատեսված է) փոխարեն, ստանձնում է տեղի հրեական հանրային ակումբի դեր: Ջատկվա *սեդեր* ճաշակելն արդեն ավելի շատ դիտարկվում է որպես համայնքին պատկանելու արտահայտություն, այլ ոչ թե որոշակի կրոնական (պարտադիր) ծես: Օրինակները բնույթով գուտ հրեական են, բայց այն, ինչը մղում է մարդկանց այդպես վարվել, տարբերվում է սկզբնականից. մարդիկ վերափոխել են կրոնական այդ ծեսերի նշանակությունը, որպեսզի դրանք համապատասխանեցվեն իրենց նոր ազգային կենսակերպին:

Արևմուտքի կրոնական ինքնությունն ամբողջովին հիմնվում է յուրաքանչյուր անհատի անձնական հավատի համակարգի վրա, որը պարտադիր չէ, որ կապված լինի նրա մշակույթի, էթնիկ պատկանելության և ազգության հետ: Մակայն հրեականության կազմակերպումը և ինքնորոշումը գտնվում են «ազգային կրոնական քաղաքակրթության» ոլորտում, որտեղ հավատալիքներն ու ծեսերը, վարքագծի բարոյական և քաղաքացիական կանոնները համատեղ են ձևակերպվում և հարգվում հավասար չափով [19, c. 128]: Իսրայելի ժողովուրդը չի կարող սահմանափակվել միայն հավատի կամ հավատալիքների համակարգով, բայց Իսրայելի ժողովուրդը, միևնույն ժամանակ, միասնական էթնոմշակութային խումբ չէ, որովհետև, չնայած շատ բան մշակութային և հավատալիքներում ընդունվում և դավանվում է աշխարհի ողջ հրեության կողմից և ընդհանուր է նրանց բոլորի համար, այնուամենայնիվ, գոյություն ունի հրեական ենթամշակութային մի ամբողջ բազմություն, որոնք միմյանցից տարբերվում են լեզվով, տարազով և սննդով, ինչպես նաև միմյանցից այնքան տարբեր բնակության վայրերով: Ավելին, Իսրայելի ժողովուրդը միասնական ռասա էլ չէ, քանի որ հրեաները և՛ սևամորթ են, և՛ սպիտակ: Ոչ կրոնը, ոչ մշակույթը, ոչ էթնիկ ծագումը կամ ռասան, ինքնին, իսկ ավելի շուտ՝ այս բոլոր գործոնների համադրությունը չէ, որ թույլ է տալիս լավագույնս բնորոշել Իսրայելի ժողովրդին որպես ուրույն քաղաքակրթություն, որը ծագել, ապրում և զարգանում է ավելի քան երեք հազարամյակի ընթացքում:

Սփյուռքը անեծք չէ հրեա ժողովրդի համար, այլ կարևոր ազգային և միջազգային կապիտալ [20, c. 451–461]: Այն հնարավորություն է տալիս իրականացնել անհասանելի թվացող նպատակները՝ մեկ երկրում ողջ ժողովրդի կենտրոնացման պայմանով: Աշխարհասփյուռ, բազմամշակութային և բազմալեզու լինելով՝ հրեա ժողովուրդը պահպանում է իր ուրույն բնույթը: Իսրայել պետությունը, համաշխարհային հրեության քաղաքական կենտրոնը լինելով, առայժմ նրա հոգևոր փարոսը չի հանդիսանում: Ուզում ենք հավատալ, որ ժամանակի ընթացքում «իրենց» ազգային պետության նշանակալիությունը սփյուռքի հրեա բնակչության շրջանում կաճի, սակայն այս պարագայում անգամ սփյուռքի պահպանումը և զարգացումը (այլ ոչ թե նրանց բոլորի վերաբնակեցումը Երուսաղեմում և Թել Ավիվում) հրեական պետության առաջնահերթ շահն է:

Մարտ, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Дятлов В.*, «Диаспора: попытка определиться в понятиях» // «Диаспоры» (Москва), №1, 1999.

2. *Зайцева О.*, «Еврейская политика в диаспоре и диаспоральная политика Государства Израиль» // «Востоковедный сборник» (Москва), №5, 2003.
3. *Членов М.*, «Типы еврейской идентичности в современном мире», в книге: «Еврейская этничность и национализм в прошлом и настоящем» под ред. М.А. Членова и А. Федорчука (Москва: издательство «Меморис», 2007).
4. *Грэхем Д.*, «Самосознание европейских евреев на заре XXI века», в книге: «Евразийский еврейский ежегодник, 2004–2005» под ред. В.А. Лихачева (Киев: «Дух и литера», 2005).
5. *Ibry D.*, «Exodus to Humanism. Jewish Identity without Religion» (New York: Prometheus Books, 1999).
6. *Woocher J.S.*, «Sacred Survival. Religion of American Jews» (Indianapolis: Indiana University Press, 1986).
7. *Браун М.*, «Израиль и диаспора. Введение», в книге «Созидание еврейского будущего» под ред. Б. Лайтмана и М. Брауна (Москва: издательство «Мосты культуры», 2001).
8. *Саноян Дм.*, «Израиль в самосознании еврейских общин диаспоры», в книге «Израиль, Россия и мир: история и современность» под ред. А.Д. Эпштейна и В.А. Кузьмина (Екатеринбург: Издательство Уральского государственного университета им. А.М. Горького – Открытый университет Израиля, 2008).
9. *Элизер Бен-Рафаэль и Лиор Бен-Хаим*, «По-прежнему один народ? Современные модели еврейской идентичности», в книге: «Еврейская этничность и национализм в прошлом и настоящем» под ред. М.А. Членова и А. Федорчука (Москва: издательство «Меморис», 2007).
10. «Евреи и русская революция» (Москва/Иерусалим: «Мосты культуры», 1996).
11. «Еврей» // «Краткая еврейская энциклопедия», том 2 (Иерусалим: Общество по исследованию еврейских общин, 1982), кол. 408.
12. *Хобсбаум Э.*, «Национализм», в книге «Век революции. Европа в 1789–1848 гг.» (Ростов-на-Дону, 1999).
13. *Коэн Л.*, «Сионизм, Израиль и мировое еврейство», в книге: «Общество и политика современного Израиля» под ред. А.Д. Эпштейна и А.В. Федорченко (Москва – Иерусалим: «Мосты культуры», 2002).
14. *Liebman Ch.S.*, «The Ambivalent American Jew. Politics, Religion and Family in American Jewish Life» (Philadelphia: The Jewish Publication Society of America, 1973).
15. *Wistrich R.*, «Terms of Survival» (London: Routledge, 1995).
16. *Клейн К.*, «Интеграция и гражданство: израильская идентичность», в книге: «Евреи и XX век. Аналитический словарь», под ред. Эли Барнави и Саула Фридлендера (Москва: «Текст»/«Лехаим», 2004).
17. *Киммерлинг Б.*, «Формирование и кризис израильского секуляризма» // «Ближний Восток и современность», №29 (2006).
18. *Дрор И.*, «Сионизм и еврейская идентификация», в книге: «Идеология еврейской национальной жизни в современном мире» под ред. Д. Брейкстоуна, А.Д.Эпштейна и Л. Дымерской-Цигельман (Москва/Иерусалим: «Мосты культуры», 2003).

19. *Файрстон Р.*, «Дети Авраама. Введение в иудаизм для мусульман» (Москва/Иерусалим: «Даат», 2008).
20. *Саноян Дм.*, «Диаспоральная политика Государства Израиль: преемственность и перспективы» // «Материалы Двенадцатой ежегодной международной междисциплинарной конференции по иудаике» (Москва: Центр научных работников и преподавателей иудаики в вузах «Сэфер» – Институт славяноведения РАН, 2005), часть 2.

НАРОД КАК ТРАНСКОНТИНЕНТАЛЬНАЯ ЦИВИЛИЗАЦИЯ: ЕВРЕЙСТВО, ГОСУДАРСТВО ИЗРАИЛЬ И СОВРЕМЕННЫЕ ДИАСПОРЫ В ЭПОХУ СЕКУЛЯРИЗАЦИИ

Алек Д. Эпштейн

Резюме

И для армян, и для евреев в эпоху сформированной государственности диаспоры остаются важнейшим фактором сохранения национальной общности. При этом географический разброс диаспор по странам и континентам превращает их в важнейший фактор в системе международных отношений как Республики Армения, так и Государства Израиль.

В Израиле существует развитая, прочно укоренившаяся и опирающаяся на богатые традиции секулярная культура. В период, предшествовавший созданию государства, эта культура легла в основу «ивритского самосознания», на смену которому, с провозглашением независимости, пришла новоизобретенная, сформированная как основа самовосприятия коллектива, национально ориентированная «израильская идентичность». Образ жизни и самовосприятие большинства граждан Израила по сути своей являются секулярными, хотя и не атеистическими. В этой статье еврейский народ рассматривается не только и не столько как доминирующий этнос некоего национального государства (Израиля), но как транснациональная цивилизация. Предпринята попытка объяснить, почему Государство Израиль, будучи политическим центром мирового еврейства, пока не сумело стать его «духовным маяком».

ԱԶԳԱՅԻՆ ԲՐԵՆԴԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Տիգրան Սարգսյան¹

Աշխարհի յուրաքանչյուր երկիր եզակի է: Խնդիրը, սակայն, այն է, որ ոչ բոլոր երկրները կարող են օգտվել այդ ուրույնությունից և այն վերածել ինքնատիպ ռազմավարական զենքի՝ մարդկանց մտքերին տիրելու պայքարում: Հոդվածում ներկայացված են այն հետազոտությունների արդյունքները, որոնց նպատակն է եղել ի հայտ բերել ինչպես արտասահմանյան մի շարք երկրների, այնպես էլ Հայաստանի հետ կապվող գույությունները վերոնշյալի համատեքստում: Զարգացման գերակա ուղղություններ ընտրելով՝ պետությունը մրցակցային առավելություն է ստանում մրցակից երկրների հանդեպ: Ի հայտ բերելով և թիրախային սպառողներին պատշաճ մատուցելով երկրի առավելությունները՝ այն, անկասկած, արժանի տեղ կգրավի գլոբալ շուկայում:

Աշխարհի շատ երկրներ մեծ հաջողությամբ կարողանում են բացահայտել և գեղեցիկ մատուցել միայն իրենց երկրին բնորոշ յուրահատկությունները՝ դրանով իսկ գրավիչ դարձնելով իրենց հայրենիքը զբոսաշրջիկների, խոշոր ներդրողների և միջազգային կազմակերպությունների համար: Տարածաշրջանային մարքեթինգի մասին խոսելիս առաջին հերթին նկատի պետք է ունենանք պետության դերն այդ գործընթացում: Հոդվածում խոսվում է տարբեր երկրների գրագետ մարքեթինգային քաղաքականությունների՝ մարդկության գիտակցության վրա թողած ազդեցության մասին: Նյութը փաստարկված դարձնելու նպատակով ներկայացնում ենք անցկացված մարքեթինգային հետազոտությունների արդյունքները, ըստ որոնց՝ բացահայտվել են տարբեր երկրների, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության հետ կապված՝ հարցվողների առաջնային ասոցիացիաները:

Երբեմն պատահում է, երբ որևէ ապրանք ընտրելիս անպայման փաթեթի վրա փնտրում ենք արտադրող երկիրը: Ինչո՞ւ ենք դա անում: Բանն այն է, որ արտադրող երկիրը մեզ տալիս է բավական մեծ տեղեկատվություն արտադրանքի վերաբերյալ՝ ենթագիտակցական կամ էմոցիոնալ մակարդակում: Օրինակ, սուրճի մասին խոսելիս մենք առաջին հերթին պատկերացնում ենք

¹ Մարքետոլոգ, "JT International Luxembourg S.A." հայաստանյան ներկայացուցչություն:

Բրազիլիան, իսկ հետո արդեն բոլոր հնարավոր երկրները, որտեղ աճեցնում են սուրճը: Եվ երբ սուրճի տուփերը դիտարկելիս կարդում ենք «Բրազիլիա» բառը, դա կարող է լուրջ ազդակ հանդիսանալ, որպեսզի գնենք սուրճի հենց այդ տուփը: Իսկ, օրինակ, Էլեկտրատեխնիկայի մասին խոսելիս մարդիկ առաջին հերթին մտաբերում են Ճապոնական բրենդերը, իսկ հետո, իհարկե, նաև եվրոպական և այլ երկրների արտադրանքը: Եվ այսպես, ամեն մի պետություն հստակ ասոցիացվում է գոյություն ունեցող բրենդերի հետ: Դրա հիմքում ընկած է ոչ միայն այն, որ, օրինակ, Գերմանիան կարողանում է արտադրել բարձրորակ ավտոմեքենաներ և կենցաղային տեխնիկա, այլ նաև այն, որ պետություններն իրենց համար ընտրում են զարգացման այնպիսի ուղղություններ, որտեղ նրանք կունենան առաջատար դիրքեր համաշխարհային շուկայում: Սա շատ կարևոր և ռազմավարական նշանակություն ունեցող հանգամանք է:

Այս տրամաբանությամբ մենք կարող ենք ամեն մի երկիր փոխարինել մեկ կամ մի քանի բառերով: Եվ պատկերացնենք, որ այդ բառերը նույնպիսի ապրանքներ են, ինչպիսին են լուցկին կամ գիրքը: Ասվածի իմաստն այն է, որ ըստ էության այդ բառերն իրոք բնութագրում են շատ մրցունակ ապրանքներ: Օրինակ, այդ ապրանքներից մեկը բրազիլական Ռիո դե Ժանեյրոյում անցկացվող ամենամյա կառնավալն է: Իրականում դա ապրանք է, որը մեծ պահանջարկ է վայելում ամբողջ աշխարհում և «վաճառվում» է ուղղակի հրաշալի ձևով: Այդ գեղատեսիլ միջոցառումը դիտելու և մասնակից դառնալու համար այստեղ գալիս են մարդիկ աշխարհի ամենատարբեր երկրներից: Իսկ զբոսաշրջիկների այդպիսի մեծ հոսքն արդեն իսկ մեծ եկամուտ ստանալու նախանշան է քաղաքի կամ պետության համար:

Ստորև բերված աղյուսակում ցույց է տրված, թե որ երկիրն առաջին հերթին ինչ ասոցիացիաներ է առաջացնում մարդկանց մեջ: Անց է կացվել մարքեթինգային հետազոտությունների հետևյալ ձևը. *որոնողական մարքեթինգային հետազոտություն, անցկացման մեթոդաբանություն՝ խորքային հարցազրույց* (չկառուցվածքայնացված, ուղիղ, անձնական հարցազրույց, որտեղ մեկ հարցվողի հետ որոշակի թեմայի շուրջ հարցազրույց է անցկացվում՝ հիմնական դրդումները, հույզերը, վերաբերմունքը և համոզմունքները բացահայտելու համար): *(Հարցվողների ընտրության մեթոդաբանությունը՝ պատահական ընտրազանգված - հարցվողների խումբ՝ տեղաբնակ հայեր, 50 մարդ):*

Եվ այսպես, հարցման արդյունքում պարզվել է, որ հարցվողների մեծամասնության (75%) ասոցիացիաները հետևյալն են.

Բրազիլիա	սուրճ	կառնավալ	ֆուտբոլ	Կորկովադո
Ճապոնիա	Էլեկտրատեխնիկա	նորագույն տեխնոլոգիաներ	ռոբոտներ	սամուրայներ
Գերմանիա	բարձրորակ ավտոմեքենաներ	գարեջուր		
Նիդեռլանդեր	վարդակակաչ (տյուլպան)	ակումբային կյանք	ազատ ապրելակերպ	
Շվեյցարիա	բանկային համակարգ	ժամացույցներ	պանիրներ	
Իտալիա	Կոլիզեյ	Վատիկան	նորաձևություն	երաժշտություն
Ֆրանսիա	Էյֆելյան աշտարակ	նորաձևություն	օձանելիք	
Մեծ Բրիտանիա	Բիգ Բեն	երկհարկանի ավտոբուսներ	ռազմական նավեր	
Հնդկաստան	Թաշ Մահալ	թեյ	փղեր	
Չինաստան	ցածր գին ունեցող ապրանքներ	Մեծ չինական պատ	Շաոլինի վանք	արևելյան մարտարվեստներ
Ցեյլոն	թեյ			
Մեքսիկա	թեքիլա	սուրբերո		
Ռուսաստան	գազ	ռազմական արդյունաբերություն	Սիբիր	Կարմիր հրապարակ

Նույնը մենք կարող ենք կատարել միայն մեկ ուղղումով, եթե այս բնութագրող ասոցիատիվ բառերի փոխարեն տեղադրենք այդ պետությունների հետ ասոցիացվող բրենդեր: Օրինակ, Գերմանիա՝ *Mercedes, BMW, Adidas* և այլն, Ճապոնիա՝ *Sony, Toshiba, Mitsubishi, Panasonic* և այլն:

Վերոնշյալ պետությունների հետ գուցե կլինեն նաև ուրիշ ասոցիացիաներ թե՛ բնութագրող բառերի և թե՛ բրենդերի տեսքով: Բայց վստահ եմ, որ այդ երկրների մասին մտածելիս թվարկված ասոցիատիվ բառերը շատերիս մոտ կհամընկնեն:

Որպեսզի հասկանանք, թե ինչ ուղղություններով պետք է զարգանա Հայաստանը միջազգային ասպարեզում իր կայուն տեղը զբաղեցնելու համար, նախ պետք է կարողանանք պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչո՞վ է յուրահատուկ Հայաստանը:
- Ի՞նչ ունենք մենք, որ չունի ոչ մի ուրիշ պետություն:
- Ինչպե՞ս է պետք դիրքավորել Հայաստանը համաշխարհային շուկայում:
- Ինչի՞ հետ է ասոցիացվում Հայաստանը օտարերկրացիների մոտ:
- Ո՞ր բրենդն են առաջին հերթին մտաբերում մարդիկ, երբ լսում են Հայաստանի մասին:

Նախնական պատկերացում կազմելու համար անց է կացվել հետազոտություն օտարերկրացիների շրջանում, ովքեր հետազոտությունն իրականացնելու ժամանակ գտնվում էին Հայաստանի Հանրապետության տարածքում: Հետազոտության նպատակն էր պարզել այդ մարդկանց վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ միայն ասոցիատիվ մակարդակում: *(Հետազոտության տեսակը՝ որոնողական մարքեթինգային հետազոտություն: Անցկացման մեթոդաբանությունը՝ խորքային հարցազրույց: Հարցվողների ընտրության մեթոդաբանությունը՝ պատահական ընտրական զվածի սկզբունք: Հարցվողների խումբը՝ օտարերկրացիներ, 35 մարդ):*

Եվ այսպես, հետազոտության արդյունքում պարզվեց, որ հարցվողների 85%-ի մոտ Հայաստանն առաջին հերթին ասոցիացվում է Արարատ լեռան հետ, հարցվողների մոտ 10%-ը Հայաստանն ասոցիացնում է առեղծվածային հայկական կոնյակի հետ (իմիջիայլոց, հենց «Արարատ» կոնյակի հետ), իսկ մնացած 5%-ի մոտ Հայաստանը կապվում է դուդուկի, խաչքարերի, ծիրանի և այլնի հետ:

Արարատ լեռը միշտ եղել է ազատության, գործության և ուժի խորհրդանիշը հայ ժողովրդի համար: Արարատը ողջ մարդկության պլացդարմն է, քանի որ Աստվածաշնչում գրված ջրհեղեղի և Նոյի պատմությունն անմիջապես կապված է այս տեղանքի հետ: Ըստ Աստվածաշնչի՝ հենց այս լեռան գագաթին փրկություն գտան Նոյը, նրա մեծ ընտանիքը և տապանում մնացած բոլոր կենդանիները: Մինչև օրս գիտնականները հետազոտում են Արարատը՝ Նոյան տապանի ապացույցները հայտնաբերելու նպատակով: Առաջին անգամ Արարատ լեռան բարձրությունը հաղթահարվեց Դորպատի համալսարանի պրոֆեսոր, 37-ամյա Իոհան Ֆրիդրիխ վոն Պարոտի կողմից 1829թ.¹:

Այս լեռը եղել և մնում է շատ ու շատ մտավորականների, գրողների և նկարիչների, կոմպոզիտորների և քանդակագործների ստեղծագործական նոր մտքերի ներշնչման աղբյուրը: Չնայած Արարատ լեռը ներկայումս գտնվում է Թուրքիայի տարածքում (1921 թվականից), այն միշտ եղել է Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը: Եվ այնքան ժամանակ, որքան Արարատը կապրի ամեն մի հայի սրտում, ոչ մի տարածքային ապացույց չի կարողանա խլել նրան հայ ժողովրդից: Որպես ապացույց կուզենայի ներկայացնել որոշ վիճակագրական տվյալներ այն մասին, թե որքան տարածված է «Արարատ» հասկացությունը Հայաստանում: Եվ այսպես, ՀՀ-ում գրանցված է «Արարատ» բառը պարունակող 250 ֆիրմային անվանում: Ազգային ընթացակարգով գրանցվել է 16 ապրանքային նշան, իսկ միջազգային ընթացակարգով իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանների թիվը 12 է²: Ստորև ներկայացված են դրանցից մի քանիսը *(տե՛ս նկարները):*

¹ <http://ru.wikipedia.org>

² <http://www.aipa.am> ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն:



Բայց ամենահատկանշականն այն է, որ ապրանքային նշանները, որոնց անվանումները պարունակում են «Հայաստան» բառը, իրենց վրա պատկերում են նաև Արարատ լեռը: Եվ այսպես, «Հայաստան» բառը անվանման մեջ պարունակող ապրանքային նշանների թիվը կազմում է 124, որից 18 ապրանքային նշաններ կրում են Արարատ լեռան պատկերը: Ստորև բերված են այդ նշաններից մի քանիսը¹ (տե՛ս նկարները):



Հենց այս էր անցկացված հետազոտությունների նպատակը, այսինքն՝ ցույց տալ և ապացուցել, որ «Հայաստան» և «Արարատ» հասկացությունները շատ մոտ են իրար թե՛ կոմերցիոն, թե՛ հոգևոր տեսակետից: Եվ որքան խորը մենք գիտակցենք այդ փաստը, այդքան հեշտ կլինի «Հայաստան» բրենդի դիրքավորումը գլոբալ շուկայում:

Վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկսել է պատշաճ ուշադրություն դարձնել Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը: Գործընթացն սկիզբ առավ, երբ կառավարությունը հաստատեց զբոսաշրջության զարգացման հայեցակարգը, որը և հիմք հանդիսացավ այս բնագավառի զարգացման համար:

Եթե դիտարկենք այս հանգամանքը հեռանկարային տեսանկյունից, ապա կտեսնենք, որ զբոսաշրջության ոլորտի զարգացումը Հայաստանում ունի մի քանի ուղղություն.

- պատմամշակութային,
- կրոնական,
- իրադարձությունների:

¹Նույն տեղում:

Առաջին՝ պատմամշակութային ուղղությամբ Հայաստանն ուղղակի պարտավոր է բարձրացնել զբոսաշրջության գրավչությունը, քանի որ համարվում է հարուստ պատմություն և պահպանված մշակույթ ունեցող երկիր: Ինչ վերաբերում է կրոնական զբոսաշրջությանը (կամ երբեմն էլ անվանում են ուխտագնացական զբոսաշրջություն), ապա Հայաստանն ունի անհամեմատ գրավիչ մի փաստ: Հայերն առաջինն են ընդունել քրիստոնեությունը: Ուխտագնացությունն իր հիմնական բացատրությամբ նշանակում է այցելություն Սուրբ երկիր: Այս ուղղությամբ տուրիզմի զարգացման օրինակներից են Իսրայելը, Չինաստանը, Հնդկաստանը և այլն¹:

Եվ վերջապես, աշխարհում շատ արագ զարգանում է իրադարձությունների զբոսաշրջությունը: Այս ուղղությունը զարգացնելու քաղաքականությունը որդեգրած երկրների ցանկը բավական մեծ է: Օրինակ, վերցնենք Մինգապուրը: Արդեն մի քանի տարի շարունակ նոյեմբերին Մինգապուր գետի ջրի գույնը անսպասելի ձևով ստանում է բաց դեղին կամ նարնջագույն երանգներ: Դա երկրի համար ևս մեկ անգամ հրաշալի PR կազմակերպելու շատ լավ առիթ է հանդիսանում: Նոր գվարձանքը կոչվում է բադերի մրցարշավ: Դրան մասնակցում են ինչպես հասարակ մարդիկ, այնպես էլ պետական գործիչներ, խորհրդարանականներ, նախարարներ, ձեռներեցներ և ձեռնարկատերեր, աշխարհի տարբեր երկրներից հատուկ այս առիթով ժամանած զբոսաշրջիկներ: Ըստ էության, բադերի մրցարշավը հասարակ վիճակախաղ է ներկայացնում: Կարող են մասնակցել բոլոր ցանկացողները: Դրա համար պետք է գնել մեկ պլաստմասե բադ, որի գինը 10 ամերիկյան դոլար է, վրան գրել մասնակցի անունը կամ դնել որևէ տարբերակիչ նշան և հանձնել այդ բադը միջոցառման կազմակերպիչներին: Մնում է միայն սպասել, թե ում կժպտա բախտը և որ հաջողակը կստանա մրցանակը՝ \$1 մլն:

Նշանակված օրը մի քանի մեքենաների մեջ բարձած բադերին նավամատույցից լցնում են գետը: Ջրի հոսքն արագ քշում է ուղիղ 100 հազ. հատ պլաստմասե բադիկներին դեպի վերջնագիծ: Երբ դրանցից մեկը հասնում է նշանակետին, վե՛րջ, հաղթողը որոշված է²:

Նմանատիպ իրադարձություն է Ամստերդամ քաղաքում անցկացվող ամենամյա դիսկոտեկը: Միջոցառումը հայտնի է նրանով, որ բոլոր մասնակիցները պարտավոր են կրել այդ տարվա համար ընտրված գույնի՝ սև կամ սպիտակ հագուստ: Ստեղծվում է աննկարագրելի տեսարան: Բաց երկնքի տակ սպիտակ կամ սև գույնի անծայրածիր մի զանգված է երևում, որին ուղեկցում են հատուկ լուսային էֆեկտները և երաժշտության խելակորույս ռիթմերը: Աշխարհի ակտիվ երիտասարդության երազանքն է գոնե մեկ անգամ զգալ հոգու այդպիսի ազատություն: Այս իրադարձության մասնակիցների թիվը հասնում է մինչև 30 հազարի³:

¹ Боголюбов В.С., Орловская В.П., Экономика туризма Москва: Академия, 2005.

² <http://www.vokrugsveta.ru>

³ <http://www.amsterdam-dance-event.nl>

Կարծես թե Հայաստանում նույնպես հիմք է դրվել զբոսաշրջության այս տեսակին: Դրա լավագույն նախապայման կարող է հանդիսանալ Հայաստանի և մի շարք գործընկեր երկրների միջև անցկացվող միջոցառումը՝ «Հայաստանի օրերը Ներկրում», ինչը շատ կարևոր է մեր երկրի համար, քանի որ այդ միջոցառման ընթացքում մեր բարեկամ երկրների բնակիչները հնարավորություն են ստանում ծանոթանալ Հայաստանի մշակույթին: Սա նաև նպաստում է այդ երկրների հետ ունեցած հարաբերությունների էլ ավելի ամրապնդմանն ու ջերմացմանը:

Գոյություն ունի նաև մեկ այլ իրադարձություն՝ «Համահայկական խաղեր»: Այդ միջոցառմանը մասնակցություն են ունեցել աշխարհի 26 երկրներից ժամանած սփյուռքահայեր¹: Ընդհանուր առմամբ այդ խաղերի կազմակերպման նպատակով պետական բյուջեից հատկացվում է տարեկան մոտ 80 մլն դրամ: Միանշանակ այս իրադարձությունը միայն դրական ազդեցություն է ունենում երկրի բիզնես կլիմայի վրա: Այստեղ համընկնում են երկու կարևոր բաղադրիչներ՝ քաղաքատնտեսական և մարզամշակութային:

Չնայած դրան, այստեղ գոյություն ունեն նաև երկու անհամատեղելի փաստարկներ:

Առաջինն այն է, որ եթե մենք խոսում ենք միջազգային զբոսաշրջության շուկայում դիրքավորվելու մասին, ապա ակնհայտ է, որ միջոցառումը նախատեսված է լոկալ հայ ժողովրդի միասնականության, հայրենիքի հետ կապերի ամրապնդման նպատակով (համարում ենք սա շատ կարևոր քայլ Հայաստանի համար): Սակայն Հայաստանն այս իրադարձությամբ չի կարողանա հանդես գալ համաշխարհային հանրության առջև և դիրքավորվել նրանց գիտակցության մեջ որպես օլիմպիական կամ զվարճալի խաղեր կազմակերպող երկիր:

Երկրորդ գործոնը ասոցիացիաներն են, իսկ ավելի ճիշտ՝ դրանց բացակայությունը: Եթե Ամստերդամի դեպքում դիսկոտեկը և ակումբային մթնոլորտն ասոցիացվում են Նիդեռլանդների հետ, կամ Ռիո դե Ժանեյրոյում անցկացվող կառնավալը և թեժ լատինական պարերը ասոցիացվում են Բրազիլիայի հետ, ապա Հայաստանի և խաղերի միջև ոչ մի կապող ասոցիացիա գոյություն չունի: Սա ավելի շատ կարող է կապ ունենալ Հունաստանի, Աթենքի, քան Հայաստանի հետ (եթե չլինի «համահայկական» բառը):

Դրա համար, մեր կարծիքով, Հայաստանի զբոսաշրջության ոլորտը պետք է միավորի իր մեջ բոլոր երեք ուղղությունները միաժամանակ: Այսինքն՝ պատմամշակութային, կրոնական կամ ուխտագնացային և դրանց հիման վրա ձևավորված իրադարձությունների զբոսաշրջության ուղղությունը (ինչպես եղավ «Քրիստոնեության 1700-ամյակ»-ին): Եվ հատկանշականն այն է, որ Արարատը միշտ պետք է լինի ուշադրության կենտրոնում:

Հայաստանին անհրաժեշտ է ամենամյա որևէ իրադարձություն, որը կվերաբերվի ամբողջ աշխարհին և հետաքրքրություն կառաջացնի «առողջ» մտածելակերպ ունեցող մարդկության մեծամասնությանը: Ըստ իս, Հայաստանը դրա համար ունի հրաշալի երեք նախապայման: Հայաստանն ունի հա-

¹ <http://www.armtown.com/news>

րուստ և հետաքրքիր պատմություն, հայերն առաջինն են ընդունել քրիստոնեությունը (լինել առաջինը արդեն առավելություն է), և միայն Հայաստանից է հնարավոր տեսնել աստվածաշնչյան Արարատ լեռն իր ողջ գեղեցկությամբ: Եվ վերջ: Այս երեք նախապայմանների հիման վրա էլ պետք է կառուցել լուրջ ռազմավարական ծրագրեր զբոսաշրջության գրավչության մակարդակը բարձրացնելու նպատակով, որն էլ իր հերթին թույլ կտա Հայաստանին ուրույն տեղ գրադեցնել միջազգային զբոսաշրջության ոլորտում:

Մինչև հիմա ներկայացվել և անընդհատ մշակվում են նոր նախագծեր և ծրագրեր զբոսաշրջության ոլորտի զարգացման վերաբերյալ: Դրանցից մեկը մի նախագիծ է, ըստ որի՝ պետք է ստեղծվի հին բնակավայր հիշեցնող մի քաղաք: Այստեղ պետք է կառուցվի և տեղադրվի տապան, որի չափերն ամբողջությամբ կհամապատասխանեն նրա բնօրինակ Նոյան տապանին: Պետք է ստեղծվեն այնպիսի պայմաններ, որ զբոսաշրջիկը, քաղաք մտնելով, կորցնի ժամանակի զգացողությունը և ամբողջությամբ ընկնի իր հույզերի աշխարհը: Նրա առջև կբացվեն վեհաշուք Արարատ լեռը, Նոյան տապանը, նա սկանառես կդառնա մարդկության փրկման բեմական ներկայացմանը:

Այս իրադարձությունը բեկում կմտցնի Հայաստանի զբոսաշրջության ոլորտում և հետաքրքրություն կառաջացնի ողջ քրիստոնյա աշխարհում:

Ապրիլ, 2009թ.

ЗНАЧИМОСТЬ НАЦИОНАЛЬНОГО БРЕНДА

Тигран Саркисян¹

Резюме

Каждая страна мира уникальна. Вся проблема заключается лишь в том, что не все из них могут выявить эту уникальность и сделать из нее стратегическое оружие (свою «фишку») для битвы за умы людей. В статье представлены результаты проведенных исследований, суть которых заключается в том, чтобы выявить ассоциации, связанные как с рядом зарубежных стран, так и с Арменией. Избирая для себя приоритетные направления развития, государство получает конкурентное преимущество над странами-соперниками. Выявив и красиво преподнеся преимущества страны своим целевым потребителям, она, несомненно, займет свое достойное место на глобальном рынке.

Цель данной статьи заключается в том, чтобы выявить свое видение развития сильных сторон Армении. Все мы хотим одного: чтобы глядя на карту мира, мы так же могли бы восхищаться своей страной, как те люди, которые живут в наиболее развитых странах мира.

¹ Маркетолог, армянское представительство "JT International Luxemburg S.A.".

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Մերոք Մուշյան

ԼՂՀ-ում ներկայիս սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական նշանակության հիմնահարցերի թվում առանձնահատուկ հրատապություն ու նշանակություն ունեն տարաբնակեցման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծումը: ԼՂՀ-ում տարաբնակեցման և ժողովրդագրական հիմնահարցերի համալիր և խոր հետազոտություններ դեռևս չեն իրականացվել, չեն գնահատվել բնակավայրերի զարգացման նախադրյալներն ու պայմանները, չեն բացահայտվել տարբեր մեծության և գործառույթներ իրականացնող բնակավայրերի առանձնահատկությունները, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների բնույթն ու զարգացման միտումները: ԼՂՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքային առանձնահատկությունները բացահայտելու համար մեծ նշանակություն ունի Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակի փոփոխությունների ուսումնասիրությունը և հայ բնակչության թվաքանակի դանդաղ աճի, իսկ երբեմն էլ՝ նվազման պատճառների վերլուծությունը: Նման ուսումնասիրությունները հնարավորություն կտան մասնագետներին և պետական մարմիններին մշակել և իրականացնել ԼՂՀ տարաբնակեցման քաղաքականության՝ գիտակառույցի հիմնավորված հիմնական սկզբունքները և ուղղությունները:

Պատմական Հայաստանի Արցախ-Ղարաբաղի տարածքը հնագույն ժամանակներից բնակեցված է եղել հայերով: Այդ մասին են վկայում այստեղ հայտնաբերված բազմաթիվ սեպագիր արձանագրությունները և ճարտարապետական հուշարձանները: Գրավոր աղբյուրներում Լեռնային Ղարաբաղը (Արցախ) հիշատակվել է Սարգսի 2-րդի (763-734թթ.) գրառումներում, երբ Վանի թագավորությանն է միացել Ուրտեխե-Արցախի երկրամասը: Այն հիշատակվում է նաև Ստրաբոնի կողմից («Օրիստենեն»)՝ որպես Հայաստանի մարզ [1]: Հին հունական և հռոմեական գրավոր աղբյուրներում նշվում է այն մասին, որ Արցախի, Ուտիքի և Մեծ Հայքի արևելյան շրջանների բնակիչները եղել են հայեր:

Մինչև 12-րդ դարը Արցախի տարածքում հիմնական բնակիչները եղել են հայերը: Արաբների, սելջուկ-թյուրքերի, թաթար-մոնղոլների տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում էապես չի փոխվել Արցախ-Ղարաբաղի բնակչության էթնիկ պատկերը: Սակայն ժամանակի ընթացքում աստիճանաբար սկսեցին Արցախ թափանցել քոչվոր թյուրքալեզու անասնա-

պահների ցեղեր: Այնուամենայնիվ, դեռևս 1740թ. ցարական փաստաթղթերում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի հայերի թիվը կազմում է մինչև 100 հազար տուն, իսկ 1798թ. Արցախ-Ղարաբաղում եղել է 110 հազար հայկական ընտանիք [2, 3]:

Ռուս-պարսկական պատերազմի արդյունքում 18-րդ դարի վերջից մինչև 19-րդ դարի սկիզբը Արցախի տարածքը 33 տարվա ընթացքում 6 անգամ հայտնվել է պատերազմական իրավիճակում, ինչը բացասաբար է ազդել բնակչության աճի վրա: Ղարաբաղի խանության ստեղծումով ուժեղացել է թյուրքական ցեղերի ներթափանցումը Ղարաբաղ և, ընդհակառակը, հայերի արտագաղթն այնտեղից: Իբրահիմ խանի քաղաքականությունը բերել է հայերի զանգվածային արտահոսքի [4]: Հետագայում շուրջ 11000 հայկական ընտանիք տեղափոխվել է Հս. Կովկաս [5]: 19-րդ դարի սկզբին, Ղարաբաղի խանության ժամանակաշրջանում, Կովկասում գլխավոր հրամանատարության գրասենյակի ղեկավար Ս.Ս.Բրոննսկին նշում է, որ «Ներկայումս այն հարուստ երկրամասից, որտեղ եղել է շուրջ 60 հազար տուն բնակիչ, հազիվ 5 հազ. տուն է մնացել» [6]: Հարձակումների հետևանքով բնակչության մեծ մասը հարթավայրային մասերից տեղաշարժվել է նախալեռնային ու լեռնային դժվարամատչելի վայրերն ու անտառները: Այստեղ էլ ղարաբաղցիները նորից հիմնել են բնակավայրեր, կառուցել ամրոցներ ու եկեղեցիներ:

1823թ. Ղարաբաղի լեռնային մասի բնակչությունը կազմել են հայերը՝ 84,6% կամ 30850 մարդ, և թաթարները՝ 14,7% կամ 5370 մարդ [7]:

Չնայած 1833թ. բնակչության ընդհանուր թիվը 1823թ. համեմատությամբ պակասել է 28,5%-ով, սակայն հայերը դարձյալ գերակշռող են եղել՝ 84%: Միակ քաղաքում՝ Շուշիում, նրանք կազմել են բնակչության 54%-ը: Ղարաբաղը ցարական Ռուսաստանին միանալուց հետո սկսվել է հայ բնակչության ներհոսքը հատկապես նրա լեռնային հատված, որը շարունակվել է մինչև կայսրության անկումը: 1868թ. կազմավորվել է Ելիզավետպոլի նահանգը, Ղարաբաղի պրովինցիան բաժանվել է 3 գավառի՝ Ջաբրայիլի, Ջևանշիրի և Շուշիի: 1875թ. հաշվառումների համաձայն, Ղարաբաղի լեռնային մասում ապրել է 91,3 հազ. մարդ, որից հայեր՝ 78,8 հազար կամ 84,7%, թյուրքալեզու էթնիկ խմբեր՝ 14,5 հազ. կամ 15,3%: Շուշիում ապրել է 24,5 հազ. մարդ, որից հայերը կազմել են 55%: 1897թ. մարդահամարի տվյալներով՝ Ղարաբաղի լեռնային մասում ապրում էր 128,6 հազ. մարդ, որից 106,4 հազարը կամ 82,7%-ը կազմել են հայերը, իսկ 20,4 հազ. կամ 15,9%-ը՝ թաթար, ինչպես նաև 1,5 հազ. ռուս և 300 այլ էթնիկ խմբեր¹:

20-րդ դարի սկզբին Ղարաբաղի հայերի բացարձակ թվաքանակը կայուն էր մնում, հարաբերականը կտրուկ նվազում էր, իսկ մահմեդականների (թա-

¹ http://www.litera-ru.ru/html/materials/2003_0608_Per1897.html

թարներ և քրդեր) թիվն աճում էր: Դա բացատրվում է Ղարաբաղից հայ բնակչության տեղաշարժով դեպի մեծ քաղաքներ, հատկապես՝ Բաքու: Այստեղ 20-րդ դարի սկզբին ապրում էր 30 հազ. ղարաբաղցի հայ¹: Այն տարածքում, որտեղ հետագայում կազմավորվել է ԼՂԻՄ-ը, 20-րդ դարասկզբին հայ բնակչությունը կազմում էր ամբողջ բնակչության 94%-ը [8]: 1913թ. ԼՂՀ ներկայիս սահմաններում ապրել է շուրջ 372 հազ. մարդ (Շուշիում՝ 42 հազ.), իսկ 1914թ. նախկին ԼՂԻՄ վարչական սահմաններում՝ 167,1 հազ. մարդ, որի 81%-ը կազմել են հայերը, իսկ 17,8%-ը՝ թյուրքալեզու էթնիկ խմբերը կամ թաթարները²: Վերջիններին միայն խորհրդային կարգերի օրոք անցկացված 1-ին մարդահամարից (1926թ.) հետո սկսեցին անվանել ադրբեջանցիներ:

1918-20թթ. Ադրբեջանի ագրեսիայից, ինչպես նաև թուրքական ինտերվենցիայից հետո Ղարաբաղի բնակչության թիվը կտրուկ նվազել է՝ 1921թ. մինչև 131,5 հազ. (94,4% հայեր), 1923թ. ԼՂԻՄ հռչակման տարում՝ 127,8 հազ.³: Խորհրդային Միության տարիներին ԼՂԻՄ-ում հայ և ադրբեջանցի բնակչության թվաքանակը հավասարապես չի աճել: Այսպես, եթե 1923թ. հայերի տեսակարար կշիռը ԼՂԻՄ ամբողջ բնակչության մեջ կազմել է 94,4%, ապա 1989թ.՝ 76,9%: 1926 և 1989թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում ԼՂԻՄ-ում հայերի թիվն ավելացել է 33,8 հազարով (աճը կազմել է 130,3%), իսկ ադրբեջանցիներինը՝ 28,1 հազարով (323%): Ընդ որում, հայերի թիվը 1926-39թթ. աճել է 21,1 հազարով, իսկ 1939-79թթ. նվազել է 9,7 հազարով, հետո նորից մինչև 1989թ. ավելացել 22,4 հազարով: Ադրբեջանցիների թվաքանակը 1926 և 1989թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում անընդհատ աճել է: Մշտապես տատանվել է նաև ԼՂԻՄ ընդհանուր բնակչության թիվը: Այսպես, եթե 1926-39թթ. Լեռնային Ղարաբաղի բնակչության թիվը 125,3 հազարից ավելացել և դարձել է 150,8 հազ., ապա 1939-59թթ. նվազել է և կազմել 130,4 հազ.: 1970թ. գրեթե հասել է 1939թ. մակարդակին՝ 150,3 հազ. [9]: Հետո բնակչության թիվն ավելացել է և 1990թ. հասել ԽՍՀՄ գոյության ընթացքում ԼՂԻՄ բնակչության առավելագույն թվին՝ 195,2 հազ. [10]: Դա հիմնականում պայմանավորված էր Բաքվից և Ադրբեջանի այլ շրջաններից հայերի բռնագաղթով ու Լեռնային Ղարաբաղում բնակեցմամբ: Հետագա տարիներին ԼՂՀ բնակչությունը մինչև 1990-ականների կեսերը նվազել է, իսկ հետո շատ դանդաղ սկսել է աճել և 2008թ. դարձել է 138,8 հազ.⁴ (Նկ. 1): Դա պայմանավորված էր պատերազմական իրավիճակով և բնակչության մեծ արտագաղթով: Խորհրդային տարիներին բնակչության թվաքանակի այսպիսի տատանումները պայմանավորված են եղել ադրբեջանական իշխանությունների վարած հայա-

¹ http://www.bakuland.com/?page=history&logik=history_supnew

² <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>

³ Նույն տեղում


⁴ <http://www.utro.ru/articles/2006/07/04/562296.shtml>

տյաց քաղաքականությամբ, որի արդյունքում հայ բնակչության թիվը ոչ միայն չէր ավելանում, այլև նվազում էր: Միտումնավոր կերպով կրճատվում էին ԼՂԻՄ-ում կատարվող շինարարական աշխատանքների համար հատկացվող ֆինանսավորումները, 44 բնակավայրում փակվել է 52 արդյունաբերական ձեռնարկություն: Միայն 1940-60թթ. ԼՂԻՄ-ում ամբողջությամբ դատարկվել է 47 գյուղ¹ (մինչև 1980թ.՝ ընդհանուր առմամբ՝ 85 կամ ԼՂԻՄ գյուղերի 30%-ը)²:

Նկար 1

Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակի շարժընթացը 1823-2008թթ.

Բնակչության թվաքանակի շարժընթացը (1823-2008 թթ.)



Փոխարենը ստեղծվում էին գյուղեր, որոնք բնակեցվում էին բացառապես աղբրեջանցիներով: Այս ամենի արդյունքում կտրուկ փոխվել է մարզի ժողովրդագրական պատկերը: 1989թ. մարդահամարի արդյունքում պարզվեց, որ Շուշիում այլևս ոչ մի հայ չկա: Հաղարթի շրջանում 1913թ. 37138 հայից 1989թ. մնացել էր 11600 հայ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարզի բնակչության 35%-ը կամ 45000 մարդ գորակոչվել է բանակ, որը 4-5 անգամ ավելի էր, քան աղբրեջանական հարևան շրջաններինը: Ռազմաճակատում զոհվել է 22 հազար արցախցի: Պատերազմից հետո, 1949թ. հունիսի 14-ի զիջերը, աղբրեջանական իշխանությունները մարզից հազարավոր հայ ընտանիքներ արքարել են Ռուսաստանի Ալթայի երկրամաս³:

Բնակչության և՛ թվաքանակի, և՛ ազգային կազմի զգալի փոփոխություններ են տեղի ունեցել Լեռնային Ղարաբաղի երբեմնի մայրաքաղաք Շուշիում: 19-րդ դարի ընթացքում Շուշին դարձել է խոշոր կենտրոն, որը մեծությամբ 5-րդն է եղել Անդրկովկասում: Քաղաքի բնակչությունն ավելացել է նախևառաջ հայերի հաշվին, որոնք 19-րդ դարի կեսերին մեծամասնություն էին կազմում: 1851թ. Շուշիի բնակչությունը եղել է 12724 մարդ, որից 6357-ը՝

¹ <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>

² <http://www.utro.ru/articles/2006/07/04/562296.shtml>

³ <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>

հայ, 1883թ.՝ 25656 (13282 տղամարդ, 12374 կին), որից 56,5%-ը՝ հայ, 43,2%-ը՝ թաթարներ, 0,3%-ը՝ ռուս, հրեա: 1890-ականներին բնակչության թիվը կազմել է 34 հազ., 1916թ.՝ 43 հազ., 1920թ.՝ 60 հազ., որից 47 հազարը՝ հայ¹: 1918-20թթ. հայ-ադրբեջանական ընդհարումների և Շուշիի կոտորածների արդյունքում քաղաքի բնակչությունը հասավ 9 հազ., ապա 1920-ականների վերջերին՝ 5 հազ. ու այլևս չբարձրացավ 17 հազարից՝ 1989թ.²:

Ներկայիս մայրաքաղաք Ստեփանակերտը 1847թ. ունեցել է 80 տուն հայ և 52 տուն ռուս բնակիչ [11]: 1900թ. Ստեփանակերտի բնակչությունը կազմել է 3 հազ., [12], 1939թ.՝ 10 հազ., 1959թ.՝ 19,7 հազ., 1970թ.՝ 30,3 հազ., 1975թ.՝ 33 հազ., 1979թ.՝ 38,9 հազ., 1989թ.՝ 57 հազ. (ըստ մարդահամարի տվյալների): 2008թ. հունվարի 1-ի դրությամբ մայրաքաղաքն ունեցել է 50984 բնակիչ [13]:

Բնակչության թվաքանակի հաճախակի փոփոխությունները, ռազմական գործողությունները, ռազմաքաղաքական անկայուն իրավիճակը, տնտեսական ու սոցիալական բարդ պայմաններն իրենց հետքն են թողել բնակչության ժողովրդագրական ցուցանիշների վրա: ԼՂՀ ներկայիս ժողովրդագրական պատկերը ձևավորվել է երկարատև գործընթացի արդյունքում:

Ժողովրդագրական իրավիճակն անմիջական ազդեցություն է ունեցել անդրկովկասյան երկրների ազգային հիմնահիմքերի սրության և զարգացման բնույթի վրա:

Աղյուսակ 1

Բնակչության խտությունը նախկին ԽՍՀՄ մի շարք հանրապետություններում 1987թ. [14]

Հանրապետությունը	Միջին խտությունը, մարդ/կմ ²	Ըստ գյուղատնտեսական հողահանդակների, մարդ/կմ ²
Հայաստանի ԽՍՀ	115	262
Ադրբեջանի ԽՍՀ	79	166
Վրաստանի ԽՍՀ	76	165
Ուկրաինայի ԽՍՀ	85	122
Մոլդովայի ԽՍՀ	124	161

Հայաստանում և Ադրբեջանում ժողովրդագրական պայթյունն առավելազույն բարձրության է հասել նախորդ դարի 60-ականների 1-ին կեսին, երբ բնակչությունն աճում էր տարեկան ավելի քան 3%-ով: Բնակչության արագ աճի պայմաններում մեծանում էր բնակչության խտությունը (Աղյուսակ 1): Լեռնային երկրներում բնակչության ընդհանուր խտությունը չի արտացոլում տվյալ տարածքի իրական պատկերը: Առավել ճշգրիտ պատկերացում են տալիս այն ցուցանիշները, որոնք հաշվարկվում են հողօգտագործման տարածքների, իսկ առավել ճշգրիտ՝ գյուղատնտեսական հողահանդակների հաշվով:

¹ <http://www.nkr.am/rus/history/shushi.htm>

² http://www.nkr.am/rus/mid/bull/text1_00.htm; <http://www.thewordbook.com/?suche=Shusha>

Համեմատության համար նշենք, որ ԼՂՀ-ում 01.01.2008թ. դրությամբ բնակչության միջին խտությունը կազմել է 11,9 մարդ/կմ², իսկ ըստ գյուղատնտեսական հողահանդակների՝ 30,2:

Աղյուսակ 2

ԼՂԻՄ, ՀԽՍՀ և Ադր. ԽՍՀ բնակչության աճի տեմպերը [14]

Թվական	ԼՂԻՄ բնակչությունը, հազ. մարդ	Աճի տեմպերը, %		
		ԼՂԻՄ	Հայաստանի ԽՍՀ	Ադրբեջանի ԽՍՀ
1926	125			
1939	151	121	146	131
1959	131	87	138	115
1970	150	115	141	138
1979	161	107	122	118
1987	180	112	112	113

ԼՂԻՄ բնակչությունն ավելի դանդաղ է աճել, քան Հայաստանի ԽՍՀ-ում և Ադրբեջանի ԽՍՀ-ում, ինչը վկայում է, որ այստեղից մշտապես եղել է բնակչության հոսք (Աղյուսակ 2): Եթե համեմատենք բնակչության աճը 1959թ. նկատմամբ, ապա Ադրբեջանում այն կազմում է 184% (1987թ.), ՀԽՍՀ-ում՝ 194%, ԼՂԻՄ-ում՝ միայն 137% [14]:

Աղյուսակ 3

Երիտասարդ և տարեց բնակչության տեսակարար կշիռը, %, 1979թ. [14]

	Տ ա ր ի ք ը				Հետաշխատանքային տարիքի
	15-29	այդ թվում			
		15-19	20-24	25-29	
Ամբողջ բնակչությունը					
ԼՂԻՄ	26,8	12,2	8,8	5,8	14,6
Ադրբեջանի ԽՍՀ	30,5	13,5	10,3	6,7	9,0
Հայաստանի ԽՍՀ	31,4	12,6	10,9	7,9	9,3
Քաղաքային բնակչությունը					
ԼՂԻՄ	31,6	13,5	10,6	7,5	10,2
Ադրբեջանի ԽՍՀ	32,6	12,9	11,7	8,0	9,4
Հայաստանի ԽՍՀ	32,0	1,6	11,4	9,0	8,9
Գյուղական բնակչությունը					
ԼՂԻՄ	23,2	11,2	7,4	4,6	18,0
Ադրբեջանի ԽՍՀ	23,0	14,1	8,7	5,2	8,5
Հայաստանի ԽՍՀ	30,4	14,5	10,1	5,8	10,1

Քանի որ ԼՂԻՄ-ում բնական աճի ցուցանիշները ցածր չեն եղել, քան Հայաստանի ԽՍՀ-ում և Ադրբեջանի ԽՍՀ-ում, ապա կարելի է մոտավորապես գնահատել բնակչության կորուստները: Բնակչության ակտիվ հեռացման մասին են վկայում նաև ԼՂԻՄ տարիքային կառուցվածքի առանձնահատկությունները (*Աղյուսակ 3*): 15-29 տարեկանների բաժինը ամբողջ բնակչության մեջ ԼՂԻՄ-ում զգալիորեն ցածր է եղել, քան ՀԽՍՀ-ում և Ադր. ԽՍՀ-ում, հատկապես գյուղական բնակավայրերում: Սա բացատրվում է նրանով, որ միգրանտների ավելի քան 3/4-ը այս տարիքի բնակիչներն են: Միաժամանակ թոշակառուների տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ աճել է 1,5 անգամ, իսկ գյուղական բնակչության մեջ՝ 2 անգամ:

Աղյուսակ 4

ԼՂՀ բնակչության սեռային կազմը [13, 16, 17, 19]

Տարեթիվը	Բնակչության թիվը հունվարի 1-ի դրությամբ, հազ.մարդ	այդ թվում			
		տղամարդիկ		կանայք	
		հազ. մարդ	%	հազ. մարդ	%
1989*	189,1	92,1	48,7	97,0	51,3
2000#	133,3	64,0	48,0	69,3	52,0
2001#	134,4	64,1	47,7	70,3	52,3
2002#	135,7	66,0	48,6	69,7	51,4
2003#	136,6	65,2	47,7	71,4	52,3
2004#	137,0	65,3	47,7	71,7	52,3
2005**	137,7	66,6	48,4	71,1	51,6
2006#	137,7	66,5	48,3	71,2	51,7
2007#	137,7	66,5	48,3	71,2	51,7
2008#	138,8	66,8	48,1	72,0	51,9

ՕՍՍ. * - մարդահամարի տվյալներով

** - 18.10.2005թ. մարդահամարի տվյալներով

- գնահատմամբ

Բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց անդրադարձն են ունեցել ԼՂՀ բնակչության սեռային կազմի վրա (*Աղյուսակ 4*): Ըստ շրջանների բնակչության սեռային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 01.01.2008թ. դրությամբ բոլոր շրջաններում, բացի Շահումյանից և Քաշաթաղից, գերակշռում են կանայք, ընդ որում՝ կանայք ամենաբարձր տեսակարար կշիռն ունեն Շուշիի շրջանում (55,2%), իսկ Հադրութի շրջանում գրեթե հավասար ցուցանիշ ունեն (կանայք՝ 50,5%, տղամարդիկ՝ 49,5%) (2006թ. եղել են հավասար՝ 50%): Շահումյանի շրջանում կանայք կազմում են ընդհանուր բնակչության 47,1%-ը, իսկ Քաշաթաղում ամենացածրն է՝ 46,5% (*Աղյուսակ 5*):


Պատճառներից հիմնականներն են. Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում կանանց բարեկեցիկ բնակության համար անհրաժեշտ շատ պայմաններ բացակայում են (աշխատանք, տարրական կենցաղային ու հիգիենիկ պայմաններ և այլն), այստեղ հիմնականում միայնակ բնակվում են տղամարդիկ, որոնց ընտանիքները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում կամ ԼՂՀ այլ շրջաններում:

Հայ բնակչության արտահոսք է եղել Ադրբեջանից, ԼՂԻՄ-ից, ինչպես նաև Վրաստանից: 1926-89թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում հայերի թիվն Ադրբեջանում և Վրաստանում նույնիսկ նվազել է, իսկ ԼՂԻՄ-ում գործնականում չի աճել: Դա նշանակում է, որ այստեղից հայերի միգրացիան կատարվել է իրենց բնական աճի չափով, մոտավորապես տարեկան 2-3%: Ադրբեջանցիների թիվը նույն ժամանակահատվածում զգալիորեն աճել է ԼՂԻՄ-ում:

Նկար 2

ԼՂՀ սեռատարիքային բուրգը, 2005թ. [15]

ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ ԸՍՏ 2005 Ք. ՍԱՐԴԱԳԱՄԱՐԻ - 137737 մարդ



Աղյուսակ 5

ԼՂՀ բնակչության սեռային կառուցվածքն ըստ շրջանների 2008թ. հունվարի 1-ի դրությամբ [13]

Հ/հ	Շրջանները	Բնակչության թվաքանակը			Տեսակարար կշիռը %-ով	
		Ընդամենը	այդ թվում		տղամարդ	կին
			տղամարդ	կին		
1	Ստեփանակերտ	50984	23672	27312	46,4	53,6
2	Ասկերանի	17393	8356	9037	48,0	52,0
3	Հաղրուֆի	12240	6053	6187	49,5	50,5
4	Մարտակերտի	19042	9347	9695	49,1	50,9
5	Մարտունու	23228	11299	11929	48,6	51,4
6	Շահումյանի	2789	1475	1314	52,9	47,1
7	Շուշիի	4607	2063	2544	44,8	55,2
8	Քաշաթաղի	8551	4575	3976	53,5	46,5
	ԸՆԴԱՄԵՆԸ	138834	66840	71994	48,1	51,9

Ներգաղթի և համեմատաբար ավելի բարձր բնական աճի շնորհիվ ԼՂՀ-ում ադրբեջանցիների թիվն ավելի քան կրկնապատկվել է, այն դեպքում, երբ հայերի թիվն աճել է 12%-ով: Արդյունքում ստացվել է, որ Ղարաբաղում արագորեն փոխվել է ազգային կազմը հոգուտ ադրբեջանցիների:

Աղյուսակ 6

ԼՂՀՄ ազգային կազմը, % [14]


	1959թ.		1970թ.		1979թ.	
	հազ.մարդ	%	հազ.մարդ	%	հազ.մարդ	%
Ամբողջ բնակչությունը	130,4	100,0	150,3	100,0	162,3	100,0
այդ թվում՝ հայեր	110,1	84,4	121,1	80,6	123,1	75,9
ադրբեջանցիներ	18,0	13,8	27,2	18,1	37,3	23,0
ռուսներ	1,8	1,4	1,3	0,86	1,3	0,78
այլ ազգեր	0,5	0,4	0,7	0,44	0,3	0,32

Պատկերը փոխվել է 1988-ից հետո, երբ ադրբեջանցիները հեռացել են ԼՂՀ-ից, և ներկայումս բնակչության 99,7%-ը կազմում են հայերը: Ռազմական գործողությունների, ռազմաքաղաքական անկայուն իրավիճակի, տնտեսական ու սոցիալական բարդ պայմանների արդյունքում վատթարացել է բնակչության սոցիալական դրությունը, առկա է գործազրկությունը, խորացել է աղքատությունը, ինտենսիվացել է արտագաղթը: Այս ամենի արդյունքում 90-ական թվականների առաջին կեսին տեղի է ունեցել բնակչության թվի

կտրուկ նվազում (Նկ. 1), ի հայտ են եկել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրատապ է դարձրել հանրապետության բնակչության և տարաբնակեցման համակարգի աշխարհագրական ուսումնասիրությունները:

Նկար 3

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության շարժընթացը 1823-2005թթ. [15]



Չնայած պատերազմին հաջորդած առաջին իսկ տարիներից ԼՂՀ-ում սկսվեցին և այսօր էլ շարունակվում են լայնածավալ շինարարական աշխատանքները, վերականգնվում են կրթական, մշակութային և այլ հիմնարկներ, վերաբնակեցվում են նոր բնակավայրեր, սակայն շատ հարցեր դեռևս իրենց լուծումը չեն գտել: Եվ դա առաջին հերթին վերաբերում է ժողովրդագրական իրավիճակի կարգավորմանը:

Բնակչության ժողովրդագրական իրավիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է ծնելիությունը, որի ազդակներից են՝ ամուսնությունը, ամուսնալուծությունը, երիտասարդ ընտանիքների արտագաղթը, գործազրկությունը, սոցիալական ծանր պայմանները, նյութական ապահովվածությունը և այլն: 2005թ. մարդահամարի տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ամուսնացած չէ 25-39 տարեկան տղամարդկանց 24,04%-ը (քաղաքներում՝ 24,73%, գյուղերում՝ 23,35%), իսկ 15 տարեկանից բարձր բնակչության կազմում երբեք ամուսնացած չի եղել ԼՂՀ բնակչության 25,5%-ը, որը բավական բարձր ցուցանիշ է: Այն առավել բարձր է քաղաքներում, որտեղ երբեք ամուսնացած չի եղել 15 տարեկանից բարձր բնակչության 28,9%-ը, իսկ գյուղերում այն կազմում է 21,7% [16]: Սրանից կարելի է եզրակացնել, որ գյուղերում համեմատաբար ավելի հեշտ է սոցիալական հարցերի կարգավորու-

մը՝ շնորհիվ գյուղատնտեսական աշխատանքների: Ամուսնությունների գործակիցը 2000-2006թթ. տատանվել է 4,7-6%-ի սահմաններում, իսկ ամուսնալուծություններինը՝ 0,6-1% [17] (Աղյուսակ 7):

Աղյուսակ 7

Ամուսնությունների և ամուսնալուծությունների ընդհանուր գործակիցները [17]

Տարեթվերը	1000 բնակչի հաշվով, %	
	ամուսնություն	ամուսնալուծություն
2000	5,7	0,7
2001	5,2	0,8
2002	4,7	0,7
2003	4,9	0,7
2004	5,8	0,6
2005	5,5	1,0
2006	6,0	0,9
2007	3,8	0,9

Ինչպես երևում է աղյուսակից, ամուսնալուծությունների գործակիցներն ունեն ավելի փոքր տատանումներ, քան ամուսնություններինը:

Աղյուսակ 8


Բնակչության բնական շարժի ցուցանիշները 1985-2007թթ. [16, 17, 18, 19]

Տարեթիվը	1000 մարդու հաշվով, %		
	Ծնվածները	Մահացածները	Բնական աճը
1985	24,0	7,8	16,2
1990	17,3	7,1	10,2
1991	21,6	12,2	9,4
1992	11,6	11,2	0,4
1993	10,6	16,6	- 6,0
1994	14,2	15,2	- 1,0
1995	14,2	9,5	4,7
1996	15,2	10,2	5,0
2000	16,6	8,8	7,8
2001	17,0	7,9	9,1
2002	16,0	9,1	6,9
2003	15,0	9,0	6,0
2004	15,3	9,5	5,8
2005	14,6	9,2	5,4
2006	15,3	9,0	6,3
2007	15,4	8,8	6,6

Բնակչության թվաքանակի շարժընթացի վրա հիմնական ազդեցությունը թողնում են ծնելիության և մահացության ցուցանիշները: Ինչպես երևում է Նկ. 4-ից և Աղյուսակ 8-ից, 1985-ից հետո ծնելիությունը և բնական աճը զգալիորեն նվազել են, վերջինս նույնիսկ ունեցել է բացասական արժեք: 90-ական թվականների երկրորդ կեսից ծնելիությունը համեմատաբար կայունացել է: Այսպես, 1995-2007թթ. ընթացքում այն տատանվել է 14,2-17,0%-ի սահմաններում, մահացության ցուցանիշները 7,9-10,2%: Բնական աճը կազմել է 4,7-9,1%: Ծնելիության ու բնական աճի անկումը և մահացության ավելացումը 90-ականների 1-ին կեսին պայմանավորված էր նախ և առաջ պատերազմով: Եվ եթե հետպատերազմյան ժամանակաշրջանում որոշակիորեն բարձրացել է ծնելիության մակարդակը՝ 14,2%-ից հասնելով 15,6% ցուցանիշին, ապա մահացության ցուցանիշը շատ քիչ է նվազել՝ 9,5%-ից իջնելով 8,9%-ի:

Նկար 4


Բնակչության բնական շարժի ցուցանիշները 1960-2007թթ.
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՑՆԵՐԸ



Թեև բնական աճը 4,7%-ից հասել է 6,7%-ի, [16, 17, 18, 19], այնուամենայնիվ, այն շատ ցածր է, եթե հաշվի առնենք, թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի բնակչության թվաքանակի արագ աճը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար: Ծնելիության և բնական աճի ամենաբարձր ու մահացության ամենացածր մակարդակը 1992-ից ի վեր դիտվել է 2001թ.՝ համապատասխանաբար 17%, 7,9%, 9,1%: 2001-ից հետո ծնելիությունն ավելի շատ է նվազել, քան մահացությունը: Արդյունքում զգալիորեն նվազել է բնակչության բնական աճը: Մահացության բարձր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով. մի կողմից՝ բնակչության տարիքային կառուցվածքում տարեցների բաժնի մեծացմամբ, մյուս կողմից՝ բնակչության սոցիալական և կենցաղային պայմանների վատացմամբ:

Նկար 5

ԼՂՀ բնակավայրերի բնակչության փոփոխությունները 1989-2008թթ.



Ժողովրդագրական իրավիճակը սրված է ԼՂՀ գրեթե բոլոր շրջաններում: Ամենուրեք դիտվում է ծնելիության նվազում, սակայն կապված մահացության ցուցանիշների տատանումների հետ՝ բնական աճը վերջին տարիների ընթացքում չի ունեցել կայուն աճ կամ նվազում, թեև բոլոր շրջաններում էլ ընդհանուր առմամբ նվազել է: Առավել անմխիթար է վիճակը Ասկերանի (վերջին 5 տարիների ընթացքում բնական աճը տատանվել է - 0,2% - 3,3%-ի սահմաններում), Մարտունու (2,6%-4,9%), Մարտակերտի (3,5%-6,3%) և Հադրութի (2,0%-5,1%) շրջաններում, ինչը պայմանավորված է նախ և առաջ պատերազմի ժամանակ ավելի շատ երիտասարդ տարիքի բնակչության զոհվելու կամ պատերազմից հետո նրանց շրջանից հեռանալու հետևանքով տարիքավորների տեսակարար կշռի մեծ լինելով: Ծնելիության ամենաբարձր գործակիցներ ունեն Շահումյանի (10,8%-18,8%) և Քաջաթաղի (12,4%-16,5%) շրջանները: Այստեղ առավելապես երիտասարդ վերաբնակիչներ են ապրում, իսկ կանանց մեծ մասը աշխատանք չունի: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ծնելիության մակարդակը երբեմն անցել է նաև 20%-ի սահմանը (Շահումյանի շրջանում 2001թ.՝ 21,6%, 2002 և 2005թթ.՝ 20,4%, Քաջաթաղի շրջանում 2001թ.՝ 20,3%): Մահացության մակարդակը նույնպես ամենացածրն է այս երկու շրջանում՝ տատանվելով 1,9-3,4%-ի սահմաններում Քաջաթաղի շրջանում և 1,9-3,4%՝ Շահումյանի շրջանում:

ԼՂՀ բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց արտացոլումն են գտել բնակավայրերի բնակչության թվերի փոփոխությունների մեջ՝ 2008թ. 1989թ. համեմատ (Նկ. 5): Վերլուծությունը ցույց է տալիս, որ նախկին ԼՂԻՄ տարածքում գտնվող 121 բնակավայրերի (70,8%) բնակչությունը նվազել է կամ չի ավելացել և միայն 50-ում (29,2%) է ավելացել: Ըստ շրջանների պատկերը հետևյալն է. Մարտակերտի շրջանում ամբողջ բնակավայրերի 84,4%-ում (38 բնակավայր) 2008թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թիվն ավելի քիչ է եղել, քան 1989-ին, Մարտունու և Շուշիի շրջաններում՝ 75,0-ական %-ում (համապատասխանաբար 27 և 6), Հադրութի շրջանում՝ 63,2%-ում (24), Ասկերանի շրջանում՝ 58%-ում (25): Բնակչության թիվը նվազել է նաև Ստեփանակերտում: Բնակչության թվաքանակը հիմնականում ավելացել է երկրի արևմտյան գյուղերում, իսկ արևելքում, առաջնային գծում գտնվող գյուղերից միայն 2-ում է այն ավելացել (Աշան, Սպիտակաշեն):

Պատճառները տարաբնույթ ու բազմազան են, որոնցից, թերևս, գլխավորներն են պատերազմի ընթացքում զոհվածների թվաքանակը, ինտենսիվ արտագաղթը, ցածր ծնելիությունը և բարձր մահացությունը: Ներկայումս էլ բնակչության բնական շարժի ցածր ցուցանիշների արդյունքում բնակչությունը շատ դանդաղ է ավելանում, և դժվար է կանխատեսել, թե բնակավայրե-

րում բնակչության թիվը երբ կհասնի նախապատերազմյան ժամանակաշրջանի մակարդակին: Ազատագրված և նոր կազմավորված շրջաններում (Շահումյան, Քաշաթաղ) վերաբնակեցված բոլոր բնակավայրերում վստահորեն կարելի է ասել, որ ներկայումս ապրում են ավելի քիչ թվով բնակիչներ, քան եղել է 1989թ. գրեթե նույն տեղերում գոյություն ունեցած ադրբեջանական գյուղերում, որտեղ միասին վերցրած ապրել է ավելի քան 100 հազար մարդ՝ ներկայիս 8,5 հազարի փոխարեն: Պատահական չէ, որ այսօր Քաշաթաղի շրջանում գերակշռում են շատ մանր, մանր ու փոքր գյուղերը (Նկ. 6), որոնք ունեն մինչև 300 բնակիչ (Քաշաթաղի շրջանում ամենամեծ գյուղը Ծաղկաբերդն է 238 բնակչով, իսկ Շահումյանի շրջանում՝ Նոր Վերին շենը՝ 224 բնակչով): Ականաբերդ գյուղը, որն ունի 523 բնակիչ, թեև վարչականորեն մտնում է Շահումյանի շրջանի կազմի մեջ, սակայն փաստացի տեղակայված է Մարտակերտի շրջանում: Ընդհանուր առմամբ, ամբողջ ԼՂՀ-ում մինչև 500 բնակիչ ունեն 286 գյուղերից 244-ը (կամ գյուղերի 85,3%-ը)՝ 30149 ընդհանուր բնակչությամբ (ամբողջ գյուղական բնակչության 44,9%-ը) և միայն 42 գյուղ ունեն 501 և ավելի (14-ը՝ 1000 և ավելի) բնակիչ՝ 37036 ընդհանուր բնակչությամբ [13]:


Ակնհայտ է, որ բնակչության ժողովրդագրական ցուցանիշներն ազդում են տարաբնակեցման գործընթացների և ձևերի վրա, մասնավորապես, կախված բնակչության տարիքից, սեռից, զբաղվածության տեսակից, փոխվում է բնակչության կենսագործունեության բնույթը, նրա կազմակերպումը տարածության և ժամանակի մեջ: Բնակչության բնական և մեխանիկական շարժերը հանդիսանում են տարաբնակեցման կարևորագույն գործոնները, որոնք պայմանավորում են տարաբնակեցման փոփոխության միտումները [20]:

Ժողովրդագրական իրավիճակը ԼՂՀ-ում այսօր պայմանավորել են բազմաթիվ սոցիալական և տնտեսական հիմնախնդիրներ, որոնց լուծման հիմնական ուղին այստեղ տնտեսության զարգացումն է, արտոնությունների ավելացումը, աշխատատեղերի ստեղծումը, կրթական, բժշկական և այլ օբյեկտների ցանցի ընդլայնումը: Սրանք կնպաստեն, որպեսզի թուլանա սոցիալական լարվածությունը և բնակիչները չլքեն իրենց բնակավայրերն ու արտագաղթեն, բարձրանան ծնելիության ու բնական աճի ցուցանիշները: Արդյունքում՝ ժողովրդագրական իրավիճակը ԼՂՀ-ում մի փոքր կկարգավորվի, որը, բացի զուտ աշխարհագրականից, ունի նաև կարևոր ռազմավարական նշանակություն:

Ապրիլ, 2009թ.

Նկար 6

ԼՂՀ բնակավայրերն ըստ մարդաշատության և բնակչության խտությունն ըստ վարչական շրջանների 01.01.2008թ. դրությամբ



Աղբյուրներ և գրականություն

1. *Страбон*, «География», 11.14.4; «Нагорный Карабах. Историческая справка» АН Арм. ССР, Ереван, 1988.
2. АВПР, ф. СРА. 1736 г., д. 1, лл. 106—117, 144—165 об. <http://ru.wikipedia.org/wiki/>
3. Полный свод законов Российской империи. Том 24, стр. 76; <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
4. *Шнирельман В.А.*, «Войны памяти». Часть I, гл. 13; <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
5. «Живописная Россия». Под редакцией вице-председателя Императорского русского географического общества П.П. Семенова, Санкт-Петербург, 1883; <http://ru.wikipedia.org/wiki/>
6. *Броневский С.М.*, Исторические выписки о сношениях России с Персией, Грузией и вообще с горскими народами, в Кавказе обитающими, со времен Ивана Васильевича донныне. Эпоха III; <http://www.Vostlit.info/Textsrus9/Bronevskiytext32.html> - <http://ru.wikipedia.org/wiki/>
7. «Описание Карабахской губернии», Тифлис, 1866г., стр. 260; <http://www.karabakh-open.com/src/index.php?lang=ru&id=5&nid=8569>
8. *De Waal, Thomas*. Black garden: *Armenia and Azerbaijan through Peace and War*. New York: New York University Press, 2003. p. 130. ISBN 0-8147-1945-7
9. «Нагорный Карабах. Историческая справка» АН Арм. ССР, Ереван, 1988.
10. «Վիճակագրական ժողովածու 1985-1996», Ստեփանակերտ, 1997թ.:
11. *Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.*, «Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան», Երևան, 1986թ., 2-րդ հրատ., Երևան, 1988:
12. *Цитович Г.А.*, Храмы армии и флота. Пятигорск, 1913, 520+40+XIV с. Кавказский военный округ.
13. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թվաքանակը 2008թ. հունվարի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագիր, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2008:
14. *Зайончковская Ж.А.*, «Демографическая ситуация и проблемы развития Нагорного Карабаха» // Проблемы горного хозяйства и расселения, Институт географии АН СССР, 1990.
15. ՀՀ Ազգային ատլաս, հատոր Ա, Երևան, 2007:
16. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդահամարի արդյունքները», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2006:
17. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2000-2006», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2007:
18. «Վիճակագրական ժողովածու 1985-1996», Ստեփանակերտ, 1997:
19. «Լեռնային Ղարաբաղը թվերով 2007», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ, 2007:
20. *Մանասյան Մ.Գ.*, «ՀՀ տարաբնակեցման համակարգը», Ե., ԵՊՀ հրատ., 2005:

ДЕМОГРАФИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В НКР

Сероб Суджян

Резюме

В статье на основе исторических и статистических данных проанализировано изменение демографической картины Нагорного Карабаха с начала XVIII века. В числе основных факторов, повлиявших на сокращение численности армянского населения, указаны военные конфликты, а также политика центральных органов власти Азербайджана. Отдельно представлены демографические показатели городов Степанакерта и Шуши. Особый интерес представляют данные об этническом составе, густоте и естественном приросте населения Карабаха до 1988г.

Несмотря на то, что после обретения независимости НКР сложившиеся политические и социально-экономические реалии положительно повлияли на демографическую ситуацию, однако многие вопросы до сих пор остаются нерешенными, что отрицательно сказывается на структуре системы расселения как фактора социально-экономического развития Нагорного Карабаха.

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՀՀ ԱՌԿԱ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վաչե Քալաշյան

Հոդվածում համադրվել են պետական կառավարման արդյունավետության գնահատման տնտեսագիտական և ինֆորմացիոն մեթոդները և դրա հիմքի վրա առաջարկվել է գնահատման սինթետիկ նոր մոդել: Արժարժվել է նաև պետական կառավարման որակի գնահատման միջազգային մեթոդաբանությունը, մասնավորապես, ներկայացվել են կառավարման արդյունավետության գնահատման ինդեքսները, առաջարկվել է այդ ինդեքսներին համապատասխան, մոնիթորինգի գործոնային ցուցանիշների համակարգի կառուցման հնարավոր եղանակը: Առանձնակի ուշադրության է արժանացել քաղաքական կայունության և կոռուպցիայի հսկողության ինդեքսների բովանդակային մեկնությունը, առաջարկվել են Հայաստանում տիրող իրավիճակի բարելավման կոնկրետ մեխանիզմներ և միջոցառումներ: Հոդվածում կապ է հաստատվել միջազգային կառույցների կողմից առաջարկվող ազդեցացված ինդեքսների և պետական կառավարման մասնակի արդյունավետության գնահատման ցուցիչների միջև, ինչը հնարավորություն է ընձեռում միկրոմակարդակում ուղղորդված գործողությունների միջոցով հասանելի դարձնել մակրոնպատակների իրագործումը:

Կառավարման արդյունավետության գնահատումն անհրաժեշտ է պետական քաղաքականության նպատակամղվածությունն ապահովելու համար: Երկրի զարգացման տարբեր ոլորտներում (առողջապահություն, կրթություն, էներգետիկա և այլն) իրականացվող ծրագրերը հաճախ հիմնվում են միջազգայնորեն ընդունված օբյեկտիվ ցուցանիշների վրա: Օրինակ, մանկական մահացությունը և կյանքի տևողությունը՝ առողջապահության ոլորտում, գրագիտության մակարդակը և ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում՝ կրթության ոլորտում, արտաքին ուղղակի ներդրումները՝ տնտեսական ոլորտում և այլն: Արդյունավետության գնահատման առկա մեթոդները հիմնականում խարսխված են կառավարման համակարգի թիրախ ոլորտների մասնակի արդյունավետության տնտեսագիտական՝ Արդյունք/Ծախս հարաբերությամբ բնորոշվող մոդելի վրա [1]: Այսինքն՝ զուտ տնտեսագիտական տրամաբանությամբ, տնտեսական արդյունավետությունը բնութագրում է տնտեսական գործունեության արդյունքների և դրանց հասնելու համար կատարված ծախսերի հարաբերությունը: Կախված արդյունքների և ծախսերի թիրախային

ընդգրկումից՝ այն կարող է արտահայտվել արդյունավետության մասնակի կամ ընդհանրական ցուցանիշներով: Այսպիսով, արդյունավետության ընդհանուր չափանիշը կոնկրետանում և լրացվում է հասարակական կյանքի առանձին ոլորտների կառավարման արդյունավետությունը բնորոշելու համար կիրառվող յուրահատուկ չափանիշներով: Եթե տնտեսության մեջ արդյունավետության մասնակի ցուցանիշները սովորաբար արտահայտում են առանձին որևէ ռեսուրսի օգտագործման արդյունավետությունը (հիմնական միջոցների, նյութերի, էներգիայի և այլն), ապա պետական կառավարման արդյունավետության մասնակի ցուցանիշներն ընդգրկում են կառավարման ոլորտային քաղաքականություններով պայմանավորված ծախսերի և ձեռք բերված արդյունքների հարաբերակցությունը: Այսինքն՝ պետության արդյունավետությունը, այս դեպքում, դիտարկվում է նպատակադրումների և պետության ներուժի համադրմամբ: Հարկ է նշել, որ պետական կառավարման արդյունավետության գնահատման համար տնտեսագիտական մոդելը ոչ միշտ է կիրառելի: Օրինակ, միջգերատեսչական կապի անվտանգության համակարգի կառուցման դեպքում կարող է պարզվել, որ արտերկրյա անվտանգության համակարգի տեղադրումն ավելի քիչ ծախսատար է սեփական միջոցներով նմանօրինակ համակարգ կառուցելու համեմատությամբ: Չնայած տնտեսագիտական առումով մասնակի արդյունավետությունն այս դեպքում կլինի բարձր, սակայն նպատակադրման տեսանկյունից անվտանգության համակարգը կլինի խոցելի, հետևաբար և աննպատակահարմար:

Կառավարման ցանկացած խնդիր անհրաժեշտաբար ենթադրում է՝

- ա) նպատակի վեկտորի ընտրություն,
- բ) կառավարվող օբյեկտի պարամետրերի ճանաչողություն,
- գ) դրանց գերակայությունների պարզաբանում և կառավարման ենթակա պարամետրերի ու նրանց էտալոնային արժեքների ընտրություն,
- դ) կառավարման ալգորիթմի և միջոցների ընտրություն:

Մրանցից յուրաքանչյուրի սխալ ընտրությունը կամ բացակայությունը խնդիրը դարձնում է անլուծելի, և համակարգը գնում է դեպի աբսուրդ: Կառավարման համակարգը պարզեցնելու համար, մինիմիզացվում է կառավարման ենթակա պարամետրերի թիվը: Ընտրվում է պարամետրերի այն գլխավոր խումբը կամ նրանցից կարևորագույն մեկը, որից ածանցվում են մնացյալները: Այսպիսով, կառավարման պրոցեսը պետք է ընթանա նպատակ-հետևանք կատեգորիաների հարթության մեջ: Կառավարման պրոցեսի ներկայացված տրամաբանության վրա է խարսխված արդյունավետության բնորոշման **նպատակ-արդյունք** [2] պարադիգմը: Այս դեպքում կառավարման համակարգի արդյունավետությունը գնահատվում է նպատակադրման ու նվաճված արդյունքի տարբերությամբ, և որքան փոքր է այդ տարբերությունը, այնքան

արդյունավետ է համարվում համակարգը: Ներկայացված մեթոդը ակնհայտորեն առավել ընդգրկուն է, քան արդյունավետության գնահատման տնտեսագիտական եղանակը, սակայն կիրառական տեսանկյունից սակավ օգտակար, քանի որ այս մեթոդով կառավարման արդյունավետության թվային արժեքը բավականաչափ բարդ է հաշվարկել: Որպեսզի արդյունավետության տնտեսագիտական մոդելը հնարավոր լինի կիրառել պետական կառավարման որակը գնահատելիս, մեր կողմից առաջարկվում է հետևյալ բանաձևը՝

$$U = \sigma (x-H, y-t, z-O) * (U_{արդյունք} / O_{ախս}) \quad (1.1)$$

Որտեղ՝ σ -ն անվանել ենք **նպատակի նորմավորման գործակից**, այն իրենից ներկայացնում է եռաչափ միավոր ֆունկցիա և ընդունում է 1 արժեքը, եթե փոփոխականներից առնվազն մեկը մեծ կամ հավասար է իր տարբերությանը և 0՝ փոփոխականների մնացած բոլոր արժեքների դեպքում: H-ը կոչվում է նպատակի համապատասխանության ֆունկցիա և լոգարիթմական կախվածության մեջ է գտնվում նպատակի հասանելիության ու այդ նպատակի իրագործման համար կառավարման կոնկրետ օղակի/ների ներգրավման հավանականություններից [3]: t-ն իրենից ներկայացնում է տվյալ նպատակի իրագործման համար հատկացված ժամանակահատվածը, օրինակ՝ ՀՀ կառավարության կողմից ընդունված ծրագրերի և կատարողականի գնահատման ուղեցույցում նշված հանձնարարականների կատարման ժամանակային բաղադրիչը: O-ը իրենից ներկայացնում է տվյալ նպատակի հասանելիության ապահովման համար անհրաժեշտ ծախսերի նվազագույն շեմը, որից ցածր ծախսերի դեպքում հնարավոր չէ որևէ արդյունքի ձեռքբերում, օրինակ՝ պետական կառավարման մասնակի արդյունավետության պարագայում, ծախսային մասով նախատեսված վարձատրության բաղադրիչի համար դա կարող է լինել նվազագույն աշխատավարձի չափը: Այսպիսով, (1.1) բանաձևը հնարավորություն է տալիս պետական կառավարման արդյունավետությունը գնահատելիս հաշվի առնել ոչ միայն նպատակադրումների ու նվաճված նպատակների տարբերությունը, այլ նաև հետադարձ ֆունկցիոնալ կապ է հաստատում կատարված ծախսերի ու ձեռք բերված արդյունքների միջև՝ ներառելով նաև նպատակի հասանելիության ընթացքում ժամանակի գործոնը: Հարկ է նշել, որ ՀՀ պետական կառավարման համակարգի արդյունավետության նպատակային բաղադրիչի գնահատումը հնարավոր է իրականացնել՝ ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ պետական բյուջեում բյուջետային դասակարգման եղանակներից ըստ ծրագրերի դասակարգումը խմբավորում է կառավարության (ՏԻՄ-երի) այն միջոցառումները, որոնք ուղղված են ընդհանուր նպատակների և խնդիրների լուծմանը: Մասնավորապես, 2007 թվականից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով ամրագրվել է ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացումը բնութագրող արդյունքի

ցուցանիշների եռամսյակային կանխատեսումների և այդ ցուցանիշների կատարման մասին հաշվետվությունները ՖԷՆ ներկայացման կարգը [4], ինչը հնարավորություն է տալիս որոշակի պարբերականությամբ մոնիթորինգի ենթարկել ՀՀ պետական կառավարման նպատակամղվածության արդյունավետությունը: Ակնհերևաբար մոնիթորինգի գործընթացը պետք է ընդգրկուն լինի և ներառի պետական կառավարման այն ոլորտներն ու բնագավառները, որոնք միջազգային կառույցների կողմից ընդգրկված են աշխարհի երկրների և, մասնավորապես, Հայաստանի պետական կառավարման որակի գնահատման գործընթացներում:

Չնայած կառավարման արդյունավետության գնահատման միջազգայնորեն ընդունված չափանիշները դեռևս ձևավորման փուլում են, Համաշխարհային բանկի ինստիտուտի (ՀԲԻ)¹ կողմից սահմանված մեթոդաբանությամբ պետական կառավարման արդյունավետության գնահատման խնդիրները ներառում են, մասնավորապես՝ կառավարության ընտրության և փոփոխության ընթացակարգերի, նրանց գործունեության նկատմամբ հսկողության, ռացիոնալ քաղաքականություն մշակելու և արդյունավետ իրագործելու կառավարության ունակության, ժողովրդավարական ինստիտուտների հանդեպ պետության և քաղաքացիների հարգանքի գնահատումը (*assessment*): Ավելին, կոնկրետ ոլորտներում և համակարգերում կառավարման մասնակի արդյունավետության գնահատումը նախապայման է պետական կառավարման ամբողջական արդյունավետության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրեր մշակելու, իրականացնելու, վերահսկելու և ազդեցությունը գնահատելու (*evaluation*) համար: Այդուհանդերձ, այս մոտեցումը կիրառելի է ընդհանրական արդյունավետությունը գնահատելիս, որի համար ՀԲԻ-ի կողմից մշակվել են ազդեցացված (ընդհանրացված) ինդեքսներ:

Պետական կառավարման ցուցանիշների ուսումնասիրությունները խարսխված են տարաբնույթ աղբյուրներից ստացված տվյալների և տարբեր կազմակերպությունների զեկույցների ու կարծիքների վերլուծությամբ պետական կառավարման որակի գնահատման վրա: Համաշխարհային բանկի ինստիտուտի կողմից պետական կառավարումը բնորոշվում է որպես ***երկրում իշխանական լիազորությունների իրագործմանը ծառայող ավանդույթների և ինստիտուտների ամբողջություն***, ինչը ենթադրում է՝

- կառավարության ընտրության և փոփոխության ընթացակարգերի, նրանց գործունեության նկատմամբ հսկողության,
- ռացիոնալ քաղաքականություն մշակելու և արդյունավետ իրագործելու կառավարության ունակության,
- ժողովրդավարական ինստիտուտների հանդեպ պետության և քաղաքացիների հարգանքի առկայություն:

¹ ՀԲԻ տվյալները՝ <http://www.worldbank.org/wbi>

Հաշվի առնելով վերը նշված սահմանման հիմնական բաղադրատարրերը՝ պետական կառավարման որակի գնահատումն իրագործվում է վեց խումբ պարամետրերով, որոնք են՝

- Պետական մարմինների հաշվետվողականությունը և բնակչության կարծիքի հաշվառումը՝ իշխանության ընտրություններին քաղաքացիների մասնակցության հնարավոր աստիճանը, ինչպես նաև խոսքի ազատության առկայությունը, միավորումների և ՁԼՄ ազատությունը:
- Քաղաքական կայունությունը և բռնության բացակայությունը՝ ոչ սահմանադրական եղանակով կամ բռնության, այդ թվում՝ տեռորիզմի կիրառմամբ իշխանության ապակայունացման հավանականության աստիճանը:
- Կառավարության աշխատանքի արդյունավետությունը՝ պետական ծառայությունների մատուցման որակի գնահատումը, պետական ծառայողների աշխատանքի որակը, վերջիններիս անկախության աստիճանը քաղաքական ճնշումներից, քաղաքականության մշակման որակի գնահատականը:
- Նորմատիվ իրավական կարգավորման որակը՝ մասնավոր սեկտորի զարգացմանն օժանդակող և աջակցող նորմատիվ իրավական ակտերի և հիմնավոր քաղաքականության մշակման՝ կառավարության գնահատականը:
- Օրենքի գերակայությունը՝ հասարակությունում գործող նորմերի նկատմամբ տարաբնույթ սուբյեկտների վստահության և վերջիններիս կողմից այդ նորմերի պահպանման պատրաստակամության աստիճանի գնահատականը, այդ թվում՝ պայմանագրերի պարտադիր կատարման արդյունավետության գնահատականը, սեփականության պաշտպանության իրավունքը դատական մարմինների կողմից և ոստիկանության աշխատանքը, բռնության տարածվածության և հանցավորության մակարդակը:
- Կոռուպցիայի դեմ պայքարը՝ շահախնդիր նպատակներով պետական իշխանության օգտագործման պրակտիկայի տարածվածության գնահատականը, ներառյալ փոքր և մեծ չափերի կոռուպցիան, ինչպես նաև մասնավոր սեկտորի և շերտերի ներկայացուցիչների՝ իշխանության մեջ ներգրավվածության ծավալները [5]:

Նշված ինդեքսներով Համաշխարհային բանկի ինստիտուտի կողմից իրականացված *Գործարար միջավայր և ձեռնարկությունների գործունեության* հարցումը (*The Business Environment & Enterprise Performance Survey* (ԳՄՁԳՀ/BEEPS), որը ՀԲԻ-ի և ՎՁԵԲ-ի (*EBRD*) կողմից համատեղ իրականացվող հետազոտություն է, գնահատական է տալիս կառավարման որակին, ներդրումային և մրցակցային միջավայրերին՝ հիմնվելով Արևելյան Եվրոպայի,

նախկին ԽՍՀՄ երկրների և Թուրքիայի շուրջ 20.000 ընկերությունների ղեկավարների և սեփականատերերի հարցման արդյունքների վրա: Հետազոտությունը հիմնականում դիտարկում է հետևյալ խնդիրները. բիզնեսի խոչընդոտները, ոչ պաշտոնական վճարներ և կոռուպցիա, հանցավորություն, կարգավորում և վարչական խոչընդոտներ, հարկեր, աշխատանքային խնդիրներ, ընկերությունների ֆինանսավորում, իրավական և դատական հարցեր, ենթակառուցվածքներ: Հետազոտության ցուցիչները ներառում են կոռուպցիան, պետության զավթումը, լոբբինգը և բիզնես միջավայրը: ԳՄՁԳՀ-ն հրապարակվել է 1999, 2002 և 2005թթ., ներառում է 26 անցումային երկրներ և Թուրքիան: 2005թ. ԳՄՁԳՀ հիմնական հարցմանն ընդգրկվել են Հայաստանում գործող 200 պետական (90%) և մասնավոր (10%) փոքր (2-49 աշխատակից՝ 75.1%), միջին (50-249 աշխատակից՝ 13.9) ու մեծ (250-9.999 աշխատակից՝ 10.9%) ձեռնարկություններ՝ ծառայությունների (46.8%) և արդյունաբերության (53.2%) հատվածներից: Ի լրումն՝ հարցումն իրականացվել է նաև 151 արտադրական ձեռնարկությունների շրջանում¹ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի համար ՀԲԻ կառավարման ցուցանիշների դինամիկան (տոկոսային գնահատական, 0-100, 1998-2006թթ.)

	1998	2000	2002	2003	2004	2005	2006
1. Կարգավորման որակ	26.6	28.1	56.7	57.1	53.2	56.9	59.0
2. Կառավարման արդյունավետություն	29.7	18.7	45.5	45.5	44.5	49.3	51.2
3. Չայնի լսելիություն և հաշվետվողականություն	35.3	37.2	34.8	33.3	30.0	30.4	26.9
4. Քաղաքական կայունություն	22.6	17.9	23.6	28.3	31.6	38.2	35.1
5. Օրենքի գերիշխանություն	38.0	36.1	35.6	39.4	38.0	41.5	38.1
6. Կոռուպցիայի հսկողություն	21.6	23.0	32.4	33.8	28.9	33.5	35.0

ՀՀ պետական կառավարման արդյունավետության մոնիթորինգի և գնահատման համակարգը պետք է խարսխված լինի ՀԲԻ գնահատման ազդեցացված ցուցանիշների ներքին բովանդակության և դրանց տեղայնացման մեթոդաբանության վրա: Վերը թվարկված ազդեցացված ցուցանիշներով հետազոտությունները ծախսատար և ժամանակատար են, պահանջում են բարձր որակավորման մասնագիտական ներուժ, իրականացվում են միաժամանակ մեծ թվով երկրներում, մշակում են մեծ ծավալի տեղեկատվություն և պահանջում են ամենամյա իրականացում: Նման հետազոտություններն արժեքավոր են հատկապես տարբեր երկրների միջև կառավարման որակի գնահատականների համադրման, ինչպես նաև նման համադրելի պատկերի միտումներն

¹ <http://go.worldbank.org/RQQXYJ6210>

ընդհանուր առմամբ գնահատելու համար, սակայն կառավարման որակի ամբողջական և բազմակողմանի գնահատման առումով խիստ սահմանափակ տվյալներ ու վերլուծություն են պարունակում:

Առանձին երկրում նման հետազոտությունների իրականացումն արդյունավետ չէ՝ կառավարման որակի, առանձին ոլորտներում իրականացվող քաղաքականությունների մասնակի արդյունավետության, տարբեր թիրախ խմբերի առանձնահատկությունների, կառավարության նախաձեռնությունների արդյունավետության գնահատման համար:

Այստեղ մեր կողմից առաջարկվող մոնիթորինգի համակարգում առանձնացված յուրաքանչյուր խմբում ընդգրկված ցուցանիշները խմբավորված են երկու ենթախմբերում՝ հիմնական (նպատակային/դիսկրետ) ցուցանիշներ և գործոնային (բացատրող/դինամիկ) ցուցանիշներ¹:

Ցուցանիշների տարբերակման նպատակը մի կողմից գնահատման ու մոնիթորինգի տարանջատումն է, մյուս կողմից՝ վերջնական արդյունք ենթադրող գործողության կամ միջոցառման նվաճման աստիճանի ու իրականացման պրոցեսի ուղղվածության պարբերական ճշգրտման իրականացման հնարավորությունը:

Որպես կանոն, հիմնական ցուցանիշները հանդիսանում են նպատակի ապահովում նկարագրող ցուցանիշներ (*Outcome Indicators*) և իրենց բնույթով վերջնական լինելով՝ ներկայացնում են 1.1 բանաձևով գնահատվող կառավարման մասնակի արդյունավետությունները: Մինչդեռ, երկրորդ խմբում ընդգրկված են գործոնային ցուցանիշներ, որոնք միջանկյալ բնույթ են կրում և նկարագրում են միջոցառումների դինամիկան՝ ապահովելով քանակային արդյունքների (*output*) կամ ռեսուրսների/միջոցների ներդրում (*input*) բաշխվածության չափումները: Ստորև ներկայացված է այսօրինակ ցուցանիշների մի մասնավոր տարբերակ (տե՛ս *Աղյուսակ 2*):

Մոնիթորինգի համակարգի ցուցանիշների վերը նկարագրված խմբավորումը հնարավորություն է ընձեռում, մի կողմից, գնահատել պետականորեն իրականացվող ծրագրերի կատարման ընթացքը՝ վերահսկելով միջոցառումների զարգացման դինամիկան (գործոնային ցուցանիշներ), մյուս կողմից՝ պահպանվում է պետական կառավարման որակը բնութագրող վեց խումբ ինդեքսների վրա խարսխված քաղաքականությունների գնահատման ցուցանիշների (նպատակային ցուցիչներ) ամբողջականությունը: Այդ ազդեցացված ցուցանիշներից՝ կարգավորման որակ (ՀԲԻ), կառավարման արդյունավետություն (ՀԲԻ), օրենքի գերակայություն (ՀԲԻ), ձայնի լսելիություն և հաշվետվողականություն (ՀԲԻ), քաղաքական կայունություն (ՀԲԻ), քաղաքացիական և

¹ Հարկ է նշել, որ ցուցանիշների նման դասակարգմամբ չպետք է անտեսվի այն փաստը, որ գործոնային վերլուծության հիմք հանդիսացող մի շարք ցուցանիշների գծով ևս պետք է ամրագրվեն նպատակային արժեքներ, և դրանց ապահովման գնահատականները նույնպես պետք է տրվեն մոնիթորինգի համակարգի շրջանակներում:

քաղաքացիական ազատություններ ԱԱ/(ՖՀ), յուրաքանչյուրը համապատասխանեցված է վերը շարադրված, պետական կառավարման որակը բնութագրող վեց խումբ պարամետրերին [6]: Ներկայացված օրինակը հիմք կարող է ծառայել պետական կառավարման որակի գնահատման համար անհրաժեշտ գործոնային և նպատակային ցուցանիշների բացահայտման համար, մանավանդ որ կառավարության կողմից ընդունված մի շարք փաստաթղթերում արդեն իսկ կան մշակված որոշակի ոլորտներում պետական քաղաքականության որակի գնահատման նմանօրինակ ցուցանիշներ [7]:

Աղյուսակ 2

Պետական կառավարման արդյունավետության գնահատման գործոնային ցուցանիշների համակարգն ըստ ՀԲԻ կառավարման որակի ինդեքսների

Պետական կառավարման տարրերը (ըստ ՀԲԻ)	Գնահատման ինդեքսներ (ըստ ՀԲԻ)	Մոնիթորինգի ցուցանիշներ
Կառավարության ընտրության և փոփոխության ընթացակարգերի, նրանց գործունեության նկատմամբ հսկողություն	Ձայնի լսելիություն և հաշվետվողականություն	Ընտրություններին մասնակցած քաղաքացիների թվի հարաբերությունը ընտրության իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թվաքանակին
	Քաղաքական կայունություն	Երկու ընտրություններին հաջորդող փուլերում իրավակարգն ապահովող ինստիտուցիոնալ կառույցների քանակական հարաբերակցությունը
Ռացիոնալ քաղաքականություն մշակելու և արդյունավետ իրագործելու կառավարության ունակություն	Կառավարման արդյունավետություն	1. Պետության կողմից հռչակված ծրագրերի և ֆինանսավորված ուղղությունների տարբերությունը 2. Կուսակցական պատկանելություն ունեցող պետական ծառայողների թվի հարաբերությունը պետական ծառայողների ընդհանուր թվաքանակին
	Կարգավորման որակ	Օրենսդիր, գործադիր, դատական իշխանություններում գործարարների թվի հարաբերությունն այդ մարմիններում աշխատակիցների ընդհանուր թվաքանակին
Ժողովրդավարական ինստիտուտների հանդեպ պետության և քաղաքացիների հարգանքի առկայություն	Օրենքի գերիշխանություն	1. Սեփականության իրավունքի պաշտպանությանն ուղղված հայցերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում վարչական, քաղաքացիական դատարաններում ներկայացված հայցերի ընդհանուր թվաքանակին 2. Պետության դեմ եղած դատական հայցերի թվի հարաբերությունը նույն ժամանակահատվածում քաղաքացիների օգտին կայացրած դատավճիռների ընդհանուր թվաքանակին
	Կոռուպցիայի հսկողություն	Պաշտոնական աշխատավարձի և հայտարարագրված եկամուտների հարաբերությունը

Մոնիթորինգի ցուցանիշների համակարգը, ընդհանուր զարգացումներից բացի, պետք է ապահովի նաև պետական կառավարման տեսանկյունից կարևոր մասնավոր զարգացումների ու միտումների գնահատականը: Այս նպատակով մոնիթորինգի համակարգում ընդգրկված ցուցանիշները տարբերվում են միմյանցից նաև ագրեգացվածության աստիճանով: Մասնավորապես, պետական քաղաքականությունների ցուցանիշները բնութագրում են ռազմավարության իրագործման գերակայությունների նվաճման աստիճանը և կապ են հաստատում իրականացված քաղաքականությունների ու նպատակադրումների (թիրախ հանդիսացող ու միջազգային կազմակերպությունների կողմից չափվող ագրեգացված ինդեքսների խզման աստիճանի նվազեցման) միջև, ըստ պետական կառավարման բնագավառների մոնիթորինգի ցուցանիշները բնութագրում են գերակա ուղղություններով իրականացվող գործողությունները, իսկ ոլորտային ցուցանիշները հնարավորություն են ընձեռում չափել կոնկրետ միջոցառման թե՛ դինամիկ զարգացման ուղղվածությունը և թե՛ իրագործման աստիճանը: Ներկայացված մոնիթորինգի ցուցանիշները բացահայտում են զարգացումների առանձնահատկությունները, անհրաժեշտության դեպքում, բաղադրվելով ըստ որոշակի հայտանիշների՝ տարածքային կտրվածքի, կառավարման մակարդակների, հանրային ծառայությունների տեսակի, հանրային ծառայությունների ճյուղի, քաղաքացիական խմբերի մասնակցության և այլն:

Բովանդակության տեսանկյունից առանձնակի ուշադրության են արժանի քաղաքական կայունության և կոռուպցիայի հսկողության ինդեքսների մեկնաբանությունները, որոնց կանդադառնանք ստորև:

Կոռուպցիայի հսկողության ինդեքս

Իրավական վիճակագրությունը կոռուպցիայի երևույթի մասին ընդգրկուն և սպառիչ տեղեկություններ չի պարունակում, նախ և առաջ այն պատճառով, որ կոռուպցիայի դրսևորումները «կոնֆիդենցիալ» բնույթի են: Մինչև վերջերս կոռուպցիայի գնահատումը հիմնվում էր իրավապահ և արդարադատության մարմինների պաշտոնական տեղեկությունների վրա: Այսպես, որոշվում էր կոռուպցիոն որակվող հանցագործությունների շրջանակը՝ հողվածները, և ներկայացվում էր համապատասխան հանցագործությունների կատարման առաջադրված մեղադրանքների և դատարանում քննված գործերի և դատապարտվածների թիվը երկրում: Նման մոտեցումը ներկայացնում էր երևույթի խիստ սահմանափակ առանձնահատկությունները և չէր կարող ամբողջական պատասխան տալ կոռուպցիոն ռիսկերի բաշխվածության հետ կապված հարցադրումներին:

Մեկ այլ մոտեցում կոռուպցիայի դրսևորումները գնահատում է՝ հիմնվելով *կոռուպցիայի դեպքերի վերաբերյալ լրատվամիջոցների հաղորդում-*

ներքի վրա [8]: Նման մեթոդի առավելություններից մեկն այն է, որ թերթերի հոդվածները նշում են, թե որտեղ է տեղի ունեցել կոռուպցիան և ով է դրանում ներառված: Ցավոք սրտի, նման գնահատումը չի հենվում վստահելի տվյալների վրա: Հոդվածներում նշված «մեղադրանքները» կարող են ամբողջովին հանդիսանալ թերթի խմբագրական անձնակազմի հորինած նյութը, որոնք հիմնված են տարբեր շարժառիթների՝ սկսած պարբերականի տպաքանակն ավելացնելուց մինչև կուսակցություններից մեկին թուլացնելը և/կամ մյուսին հզորացնելը: Անշուշտ, թերթը կարող է տպագրել պատմություններ կոռուպցիայի ենթադրվող փաստի վերաբերյալ, քանի որ այն իրականում «պատկանում» է որևէ քաղաքական ուժի կամ գործարար շրջանակի, որը ցանկանում է քննադատել իր ընդդիմախոսներին: Սրա դասական օրինակը դիտվել է Մեքսիկայում, որտեղ «ռեկորդային թերթ» համարվող *Excelsior-ը*, պարզվեց, որ մի քանի տասնամյակ ֆինանսավորվել է իշխող կուսակցություն (*PRI-ի*) կողմից:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպություններ մշակել և կիրառում են կոռուպցիայի գնահատման տարբեր մեթոդներ՝ հիմնված տնային տնտեսությունների, գործարարների կամ առանձին ոլորտների *փորձագետների* կողմից երևույթի ընկալման վրա: Կոռուպցիայի գնահատման մի շարք մեթոդներ փաստորեն հիմնվում են հարցումների կամ հետազոտությունների *սկզբնական տվյալների* վրա՝ ձևավորելով կոնկրետ համաթվեր և ցուցիչներ: Կոռուպցիայի գնահատման այս մեթոդները *սինթետիկ* են և, ըստ էության, համախմբում են տարբեր գնահատականները՝ կիրառելով բաղադրիչների միջինացման սեփական մոտեցումները:

Տարբեր են նաև կոռուպցիայի գնահատման հիմնական *նպատակները*: Այսպես, միջազգային ֆինանսական կառույցները՝ Համաշխարհային բանկը (*WB*), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (*EBRD*) և այլն, որոնք ներդրումներ են կատարում զարգացող երկրներում և կարիք ունեն գնահատելու տվյալ երկրի կառավարման արդյունավետությունը և կոռուպցիայի հսկողության կարողությունները, մշակել են կոռուպցիայի գնահատման մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս հետևել կոռուպցիայի ընդհանուր մակարդակի միտումներին ժամանակի ընթացքում և համադրել դրանք երկրների մեծ անսամբլի համար: Կոռուպցիայի մակարդակի գնահատականը կարևոր գործոն է նաև մասնավոր հատվածի կողմից ներդրումների մասին որոշում կայացնելու համար: Այդ առումով, միջազգային մի շարք կազմակերպություններ, օրինակ՝ Բերթելսման հիմնադրամը (*Bertelsman Foundation*), մշակել են կոռուպցիայի գնահատման մեթոդներ՝ այս նպատակով: Ի վերջո, կոռուպցիայի մակարդակի գնահատումը էական է տվյալ երկրում ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը հետևելու նպատակով: Այսպես, Ֆրիդոմ հաուս (*Freedom House*) կազմակերպությունը, Հերիթիջ

հիմնադրամը (*Heritage Foundation*) և այլ կազմակերպություններ կոռուպցիայի գնահատումը կատարում են նախ և առաջ այս տեսանկյունից:

Կոռուպցիայի գնահատման առավել հեղինակավոր սինթետիկ (*aggregate*) մեթոդները կիրառվում են Համաշխարհային բանկի ինստիտուտի (*World Bank Institute*) և Թրանսփարենսի ինթերնեյշնլ (*Transparency International*) կազմակերպությունների կողմից:

Թրանսփարենսի ինթերնեյշնլի *Կոռուպցիայի ընկալման համաթիվը* (ԿԸՀ), հիմնվելով շուրջ 15¹ հարցումների և փորձագիտական գնահատումների արդյունքների վրա, այս համաթիվը ավելի քան 160 երկրների դասակարգման գործիք է հանդիսանում, որը գնահատում է կոռուպցիայի ընկալումը 1995թ. ի վեր: ԿԸՀ-ն, ըստ էության, ներկայացնում է «էլիտայի» կողմից կոռուպցիայի ընկալումը, քանի որ արտացոլում է միջազգային գործարար աշխարհի և երկրի մասնագետ-փորձագետների շրջանում ձևավորված պատկերացումները: ԿԸՀ-ն չի անդրադառնում կոռուպցիայի դեմ պայքարի երկրների ջանքերին: ԿԸՀ հաշվարկման մանրամասն մեթոդաբանությունը ներկայացված է կազմակերպության պաշտոնական կայքում²: ԹՒ ԿԸՀ համաթիվի աղբյուրների ընտրության պայմաններից է տվյալ հետազոտության կողմից երկրների դասակարգումը: Մյուս պայմանը տեղեկատվության աղբյուրի կողմից կոռուպցիայի ընդհանուր մակարդակի գնահատումն է³:

ԿԸՀ-ն ունի մի շարք էական *սահմանափակումներ և թերություններ*: Նախ, այն ըստ էության գնահատում է իրականության սուբյեկտիվ ընկալումը՝ հարցումներում ընդգրկված անձանց կողմից: Մինչդեռ, ընկալումը, որը հիմնված է անհատական փորձի կամ տեղեկացվածության վրա, հաճախ էապես տարբերվում է կոռուպցիայի օբյեկտիվ իրավիճակից: Երկրորդ, ԿԸՀ-ն չի անդրադառնում կոռուպցիայի տարածվածությանը, տեսակներին, ոլորտային, տարածքային և այլ թիրախային առանձնահատկություններին: ԿԸՀ գնահատականը չի ներառում տնային տնտեսությունների կողմից երևույթի ընկալումը: Ավելին, գործարարներից շատերի համար, որոնց ընկալումը ներառվում է ԿԸՀ համաթիվը ձևավորելիս, պարտադիր չէ, որ գործունեություն իրականացնեն տվյալ երկրում, թեև կարող են ընդհանրական կարծիք ունենալ տվյալ երկրի գործարար միջավայրի մասին: Սինթետիկ համաթիվի որոշ աղբյուրների տվյալները և հետազոտության մեթոդիկական բաց և թափանցիկ չեն, ինչը նույնպես սահմանափակում է համաթիվի մեկնաբանման հնարավորություններն ու օգտակարությունը: Տարբեր երկրների գնահատման համար օգտագործվում են տարբեր թվով աղբյուրներ, ինչը համադրելիության առումով լրացուցիչ դժվարություններ է ստեղծում: Ավելին, միևնույն երկրի համա-

¹ 2007թ. ԹՒ ԿԸՀ-ն հիմնվել է 14 հետազոտությունների տվյալների վրա: ԿԸՀ 2007թ. մանրամասն մեթոդաբանությունը և աղբյուրները նկարագրված են ԹՒ պաշտոնական կայքում՝ www.transparency.org/surveys/#cpi:

² Սույն ջանքերը մանրամասն բացատրվում են ԹՒ վեբ-կայքում: Մեթոդաբանական հարցերը ներառող փաստաթղթերի հասցեն է www.transparency.de/documents/cpi/cpi_framework.html

³ http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2007/methodology

թվի հաշվարկման նպատակով տարբեր տարիներին հաճախ օգտագործվում են տարբեր աղբյուրներ, երբեմն էլ տարբերվում են միևնույն աղբյուրի հարցադրումները կամ ներկայացուցչականության շրջանակը: Ի վերջո, ԿՀՀ հաշվարկման մեթոդաբանությունը թույլ չի տալիս աղբյուրների թվի աճին զուգահեռ կրճատել սինթետիկ համաթվի միջին քառակուսային շեղումը:

Հայաստանում ԿՀՀ-ն գնահատվում է սկսած 1999թ.¹: 1999-2000 թվականների 2.5 միավորը² հետագա տարիներին 3.0 միավորի շուրջ տատանվելով, 2007թ. կազմել է 3.0: Հարկ է նշել նաև, որ ԿՀՀ միավորով Հայաստանը առավել բարվոք դիրքերում է ինչպես ԱՊՀ երկրների (միջին ցուցանիշը՝ 2.37), այնպես էլ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 20 երկրների (միջին ցուցանիշը՝ 2.78) շարքում, 163 երկրների ցանկում Հայաստանը գտնվում է 99-րդ հորիզոնականում: 2007թ. Հայաստանի համար ԿՀՀ համաթիվը հաշվարկվել է՝ հիմնվելով 7 աղբյուրների տվյալների վրա (տե՛ս *Աղյուսակ 3*):

Համաշխարհային բանկի ինստիտուտի *Կոռուպցիայի հսկողության համաթիվը* (ԿՀՀ) հիմնված է կառավարման ցուցիչների առավել ծավալուն ուսումնասիրության վրա՝ այն ձևավորվում է 31 կազմակերպությունների կողմից տրամադրվող տվյալների 37 առանձին աղբյուրներից: Այն ՀԲԻ կառավարման վեց ցուցանիշներից մեկն է³, որոնք համարվում են լավագույնը՝ պետական (արդար) կառավարման գնահատման առումով: Տվյալները խմբավորված են ըստ կառավարման 6 հիմնախնդիրների. ձայնի լսելիություն և հաշվետվողականություն, քաղաքական կայունություն և բռնության բացակայություն, կառավարման արդյունավետություն, կարգավորման որակ, օրենքի գերիշխանություն, կոռուպցիայի հսկողություն (տե՛ս *Աղյուսակ 2*): ԿՀՀ համաթիվը ներառում է 209 երկրների կոռուպցիայի հսկողության գնահատականը ութ տարիների համար՝ 1996, 1998, 2000, 2002-2006: Կոռուպցիայի հսկողության ցուցիչը գնահատում է հանրային շահի օգտագործման չափը՝ հանուն մասնավոր շահի, այդ թվում՝ կոռուպցիայի մանր և խոշոր ձևերը, ինչպես նաև «պետության զավթումը» ընտրյալների և մասնավոր շահի կողմից: 15 աղբյուրների վրա հիմնված 2006թ. ԿՀՀ համաթվի (-2.5) արժեքը համապատասխանում է կոռուպցիայի ամենավատ հսկողությանը, իսկ 2.5-ը՝ ամենալավ: ԿՀՀ համաթվի և կառավարման մյուս գործակիցների հիման վրա երկրները դասակարգված են 0-100 տոկոսային սանդղակով: Նշենք նաև, որ այս ցուցիչները միաժամանակ ներառված են Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամի կողմից Հայաստանին տրամադրված օժանդակության գնահատման նախապայմաններում, ինչպես նաև ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության նախագծում՝ գերակա ուղղությունների միջանկյալ արդյունքների գնահատման նպատակով:

¹ Բացառությամբ 2001-2002թթ.:

² ԿՀՀ-ն երկրում կոռուպցիայի ընկալումը գնահատում է 0-ից 10 սանդղակով, ուր 0-ն համապատասխանում է կոռուպցիայի առավել սուր, իսկ 10-ը՝ ամենաանջան ընկալմանը:

³ ՀԲԻ տվյալները՝ <http://www.worldbank.org/wbi/governance/govdata2001.htm>

Աղյուսակ 3

*Կոռուպցիայի ընկալման ԹԻ համաթվի (ԿԸՀ) տվյալների աղբյուրները
Հայաստանի համար, 2007թ.*

Հասցե	ԱԶԲ (ADB)	ԲՀ (BF)	ՖՀ (FH)
Աղբյուր	Ասիական զարգացման բանկ Asian Development Bank	Բերթելսմանի հիմնադրամ Bertelsmann Foundation	Ֆրիդոմ հաուս Freedom House
Անուն	Երկրների գործունեության գնահատման կարգեր Country Performance Assessment	Բերթելսմանի փոխա- կերպման համաթիվ Bertelsmann Transformation Index	Ազգերն անցումային շրջանում Nations in Transit
Մշակման հրապարակման տարեթիվ	2006/2007	2007/2008	2007
Ինտերնետային հասցե	http://www.adb.org/ Documents/Reports/Country- Performance-Assessment- Exercise/IN76-07.pdf	http://www.bertelsmann- transformation- index.de/11.0.html?&L=1	http://www.freedomhouse. hu/index.php?option=com_ content&task=view&id=84
Թիրախ խումբ	Երկրների թիմեր, բանկի ներքին և արտաքին փորձագետներ	Կազմակերպության տե- ղական փորձագետների և կազմակերպությունից դուրս տեղական փորձագետների ցանց	Համապատասխան երկրում ծնված կամ բնակվող փորձագետների գնահատականներ
Հարցման թեմաները	Կոռուպցիա, շահերի բախում, միջոցների չարաշահում, հակակոռուպցիոն նախաձեռնություններ և ձեռքբերումներ	Կառավարության կարողությունը՝ պատժել և սահմանափակել կոռուպցիան	Կառավարությունում առկա կոռուպցիայի շրջանակը՝ համաձայն հանրության կողմից ընկալման և լրատվա- միջոցների կողմից ներ- կայացման, ինչպես նաև հակակոռուպցիոն նախա- ձեռնությունների իրականացում
Պատասխան- ների թիվ	Չկա	Չկա	Չկա
Հարցման ընդգրկում	26 երկիր/տարածք	125 երկիր/տարածք	29 երկիր/տարածք

¹ http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2007/methodology

Հասպտակում	ԱՄԻՄ (MIG)	ՀՏՖ (WEF)	ՀԲ (WB)	ԳԻ (GI)
Աղբյուր	Առևտրականների միջազգային խումբ Merchant International Group	Համաշխարհային տնտեսական ֆորում World Economic Forum	Համաշխարհային բանկ The World Bank (IDA and IBRD)	Գլոբալ խորաքննարկման կենտրոն, նախկինում՝ Համաշխարհային շուկաների հետազոտության կենտրոն Global Insight, formerly World Markets Research Centre
Անուն	Ստվերային հատվածի դինամիկա Grey Area Dynamics	Գլոբալ մրցունակության հաշվետվություն Global Competitiveness Report	Երկրի քաղաքականության և ինստիտուցիոնալ գնահատում Country Policy and Institutional Assessment	Երկրների ռիսկերի գնահատում Country Risk Ratings
Մշակման հրապարակման տարեթիվ	2007	2006/2007	2006/2007	2007
Ինտերնետային հասցե	www.merchantinternational.com	www.weforum.org	http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/EXTABOUTUS/IDA/0,,contentMDK:20933600~menuPK:2626968~pagePK:51236175~piPK:437394~theSitePK:73154,00.html	www.globalinsight.com
Թիրախ խումբ	Փորձագետների անձնակազմ և տեղական վերլուծաբանների ցանց	Առաջատար գործարարներ, տեղական և միջազգային ընկերություններ	Ազգային թիմեր, բանկի աշխատակիցներ և արտաքին փորձագետներ	Փորձագետ աշխատակիցների գնահատականներ
Հարցման թեմաները	Կառավարության պաշտոնյաների կաշառակերություն, գրասենյակային աշխատողին տրված նվիրատվություն	Ոչ պաշտոնական վճարներ կամ կաշառք՝ կապված կառավարության տարբեր գործառույթների հետ	Կոռուպցիա, շահերի բախում, միջոցների չարաշահում, հակակոռուպցիոն նախաձեռնություններ և ձեռքբերումներ	Կոռուպցիայից պաշտոնյաների առկայություն, մանր բյուրոկրատական կոռուպցիայից մինչև քաղաքական մեծ կոռուպցիա
Պատասխանների թիվ	Չկա	11,000	Չկա	Չկա
Հարցման ընդգրկում	155 երկիր/տարածք	125 երկիր/տարածք	77 երկիր/տարածք	203 երկիր/տարածք

ՀԲԻ ԿՀՀ և ԹԻ ԿՀՀ համաթվերը խիստ կոռելյացված են¹ և հաճախ օգտագործում են միևնույն աղբյուրների տվյալները: ԿՀՀ համաթվի համար նշված թերություններն ու սահմանափակումներն ընդհանուր առմամբ ճիշտ են նաև Համաշխարհային բանկի ինստիտուտի ԿՀՀ համաթվի համար: Այդուհանդերձ, հարկ է նշել ԿՀՀ համաթվի որոշ առանձնահատկություններ: Նախ, ԿՀՀ համաթիվը, ի տարբերություն ԹԻ ԿՀՀ համաթվի, տարբեր աղբյուրների տվյալները ընդհանրացնելիս կիրառում է քաշեր՝ յուրաքանչյուր աղբյուրի տվյալի համար: Արդյունքում՝ որքան ավելի շատ են հաշվի առնվող աղբյուրները տվյալ երկրի համար, այնքան ավելի ճշգրիտ է սինթետիկ համաթիվը՝ ԿՀՀ-ն:

Համաձայն ԿՀՀ համաթվի, Հայաստանում կոռուպցիայի հսկողությունը 2006թ. (-0.58) բարելավվել է թե՛ 2003թ. (-0.62), թե՛ 1996թ. (-0.70) համեմատ²: Արդյունքում՝ 2006թ. Հայաստանը 209 երկրների շարքում գտնվել է 35-րդ տոկոսային հորիզոնականում³: Այս ցուցանիշով ՀՀ-ն ԱՊՀ երկրների շարքում գրավում է երկրորդ տեղը (ԱՊՀ երկրների միջին միավորը կազմել է -0.84)՝ զգալիորեն զիջելով միայն հարևան Վրաստանին (միավորը՝ -0.36, տոկոսային դիրքը՝ 44.7) [9]: ԿՀՀ համաթվով 2006թ. Հայաստանը զիջում է թե՛ ԵԿԱ երկրների միջին ցուցանիշին (-0.421), թե՛ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների միջինին (-0.049), թե՛ միջինից ցածր եկամուտ (ՄՅԵ) ունեցող երկրների միջինին (-0.533): Միաժամանակ, այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում է ՄՅԵ խմբում ԵԿԱ տարածաշրջանի միջին ցուցանիշը (-0.661) (տե՛ս Աղյուսակ 1):

Հայաստանում կոռուպցիայի երևույթի հետազոտություններն առաջին հերթին պետք է ուղղվեն մի կողմից՝ կոնկրետ ոլորտներում երկրում իրականացվող հակակոռուպցիոն *ռազմավարությունների մոնիթորինգին և դրանց արդյունավետության գնահատմանը*, մյուս կողմից՝ հասարակության և թիրախ խմբերի կողմից այդ *ռազմավարությունների ազդեցության ընկալման գնահատմանը*:

Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգն ու դրա արդյունավետության գնահատումը ներառում է.

- կոնկրետ ոլորտներում և բնագավառներում կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը և գնահատումը՝ տվյալ ոլորտում հանրային ծառայություններ տրամադրողների և ստացողների ներկայացուցիչների՝ փորձագետների կողմից,
- գնահատված ռիսկերի կրճատման թիրախային ցուցանիշների սահմանումը,

¹ ԿՀՀ և ԿՀՀ կոռելյացիան (Մփերմանսի գործակից) գրեթե կատարյալ է՝ 0.96: Մոնիթորինգի գիտություններում ընկալման վրա հիմնված համաթվերը հազվադեպ են այդպես համատեղելի լինում:

² 15 աղբյուրների վրա հիմնված 2006թ. ԿՀՀ համաթվի -2.5 արժեքը համապատասխանում է կոռուպցիայի հսկողության ամենավատ աստիճանին, իսկ 2.5-ը՝ ամենալավ:

³ ԿՀՀ համաթվի և կառավարման մյուս գործակիցների հիման վրա երկրները դասակարգված են 0-100 տոկոսային խմբերի սանդղակով:

- գնահատված կոռուպցիոն ռիսկերի կրճատմանն ուղղված միջոցառումների սահմանումը, այդ թվում՝ յուրաքանչյուր միջոցառման անմիջական արդյունքը ներկայացնող ցուցանիշների սահմանումը,
- յուրաքանչյուր միջոցառման իրականացման ընթացիկ մասնակցային մոնիթորինգը,
- իրականացված միջոցառումների արդյունքում կոռուպցիոն ռիսկերի կրճատման գնահատականը՝ ըստ սահմանված թիրախին հասնելու աստիճանի:

Նշված հետազոտությունների համար անհրաժեշտ *ռեսուրսների ապահովումը* պետք է ներառել միջնաժամկետ ծախսային ծրագրում և պետական բյուջեում: Միաժամանակ, անհրաժեշտ է այդ նպատակներին ուղղել և արդյունավետ օգտագործել միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցությունը և իրականացվող ծրագրերը: Մասնավորապես, յուրաքանչյուր վարկային ծրագրին նախորդող իրավիճակի գնահատման շրջանակներում անհրաժեշտ է ներառել տվյալ ոլորտում կոռուպցիոն ռիսկերի գնահատման աշխատանքները:

Կոռուպցիայի դեմ արդյունավետ և նպատակաուղղված պայքար իրականացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրա առաջացման և պահպանման պատճառները, բնույթը, առանձնահատկությունները և գնահատել այդ ոլորտում ներկա իրավիճակը:


Այս առումով շատ հետաքրքրական է անցումային փուլի երկրների փորձի ուսումնասիրությունը: Այսպես, անցումային փուլի երկրներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ կոռուպցիայի դրսևորումները կարելի է բաժանել երկու տեսակի՝ «պետության զավթմամբ» պայմանավորված («պետության գնման») կոռուպցիա և վարչարարական կոռուպցիա [10]:

«Պետության զավթմամբ» պայմանավորված կոռուպցիան մասնակի անձանց, խմբերի կամ կազմակերպությունների (որոնք ներկայացնում են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածը) այնպիսի գործունեություն է, որի նպատակն է ազդել իշխանությունների (օրենսդիր, գործադիր, դատական) կողմից կայացվող որոշումների (օրենքներ, գործադիր մարմնի որոշումներ, դատարանի որոշումներ և այլն) վրա՝ դրանք օգտագործելով սեփական շահադիտական նպատակներով:

Վարչարարական կոռուպցիա հասկացության տակ հասկացվում է պետական իշխանությունների կայացրած որոշումների իրացման ընթացքում պետական ծառայողների կողմից դրանց դրույթների միտումնավոր խեղաթյուրումը, որի արդյունքում պետական կամ մասնավոր հատվածի որոշակի սուբյեկտների համար ապահովվում են արտոնյալ պայմաններ:

Ուսումնասիրությունների ընթացքում ստացված արդյունքները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել անցումային փուլի երկրներում կոռուպցիայի առանձնահատկությունների մասին: Ըստ վերոհիշյալ երկու տեսակների կոռուպցիայի մակարդակները անցումային փուլի երկրներում ներկայացված են *Գծապատկեր 1-ում*:

Գծապատկեր 1



Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս երկրները բաժանել 4 խմբի, որոնք որոշվում են «պետության զավթմամբ» պայմանավորված կոռուպցիայի և վարչարարական կոռուպցիայի հարաբերական մակարդակներով:

«Միջին-միջին» խմբի երկրները կարողացել են երկու տեսակի կոռուպցիաները պահպանել կառավարելի մակարդակի վրա, չնայած որ պահպանվում են լուրջ խնդիրներ:

«Միջին-բարձր» խմբի երկրների համար հիմնական խնդիրը մնում է պետական ծառայության կոռուպցիան, մինչևույն ժամանակ «պետության զավթման» մակարդակը, մյուս անցումային փուլում գտնվող երկրների համեմատ գտնվում է ցածր մակարդակի վրա:

«Բարձր-միջին» խմբում ընդգրկված են այն երկրները, որոնք կարողացել են պահպանել վարչարարական կոռուպցիան համեմատաբար ցածր մակարդակի վրա, բայց այդ արդյունքին նրանք հասել են՝ ունենալով «պետության զավթման» բավականին բարձր մակարդակ:

«Բարձր-բարձր» խմբի երկրներն ունեն վարչարարական կոռուպցիայի լրջագույն խնդիր, և այն զուգորդվում է «պետության զավթման» բարձր ուսկով:

Կանգ չառնելով մնացած խմբերի վրա՝ անդրադառնաք «Միջին-բարձր» խմբի երկրներին, որոնց շարքում է գտնվում նաև Հայաստանը (*տե՛ս Գծապատկեր 1*): Այս խմբի երկրների հիմնական բնութագրերն են համարվում՝ գոյություն ունեցող պետական ինստիտուտների թույլ հնարավորությունները (պետության կողմից մատուցվող հիմնական ծառայությունների, ինչպես նաև կարգավորման ֆունկցիայի իրականացման իմաստով) և հսկողության, ինչպես նաև հաշվետու մեխանիզմների բացակայությունը պետական ապարատի ներսում: Այսպիսի պայմաններում վարչարարական կոռուպցիան ծաղկում է և հաճախ ընդգրկում քաղաքական համակարգի ամենաբարձր մակարդակները:

Այս խմբի երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար կոռուպցիայի դեմ պայքարն ամբողջովին շաղկապված է պետականաշինարարության գործընթացի հետ: Նշված երկրներում կոռուպցիան կարող է արմատախիլ արվել միայն ամուր պետական ինստիտուտների կայացման դեպքում, որն առաջին հերթին ենթադրում է արդյունավետ պետական կառավարման համակարգի ձևավորում և ներդրում: Հաշվի առնելով կոռուպցիայի սահմանումն իբրև *անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահում* [11], կարելի է եզրակացնել, որ «վարչարարական կոռուպցիայի» նվազեցումը պետք է խարսխված լինի անձնական և հանրային (պետական) շահի նույնության վրա: Ակնհայտ է, որ այդպիսի նույնություն ամբողջական իմաստով հնարավոր չէ հաստատել, սակայն որպես պետական համակարգի ներքին դինամիկ պոտենցիա՝ պետք է հանդիսանա անընդհատորեն շահերի այդպիսի նույնության ապահովման ձգտումը: Այս պնդման հիմքում ընկած է այն գոյաբանական սկզբունքը, որ *կատարյալ համակարգեր չեն լինում, բայց որևէ համակարգ կենսունակ է, եթե այն ունի կատարելության ձգտման ներքին պոտենցիա*: Ակներևաբար, այսօրինակ ներուժի չափման միջոց կարող է հանդիսանալ պետական ծառայողների՝ համապետական որոշումների կայացմանը մասնակցության մակարդակի գնահատումը, իսկ դրան հասնելու հիմնական միջոցներից մեկը՝ պետության գործերում պետական ծառայողների ներգրավվածության աստիճանի բարձրացումը:

Ապրիլ, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. Эффективность государственного управления, М., изд-во АО «Консалтбанкир», 1998.
2. Волкова В.Н., Денисов А.А., Основы теории систем и системного анализа, СПб., изд-во СПбГТУ, 1997.
3. Денисов А.А., Информационные основы управления, Л., Энергоатомиздат, 1983.
4. ՀՀ ՖԷ նախարարի 28 մարտի 2007 թվականի թիվ 324-Ն հրաման:
5. «Значение государственного управления», Д.Кауфман, А.Краай, П.Зойдо-Лобатон, WBI 1999г.

6. «Aggregating governance indicators», Daniel Kaufmann, Aart Kraay, Pablo Zoido-Lobaton, WBI, 1999.
7. ՀՀ ԱՀՌԾ մոնիթորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ (սոցիալական մեկուսացվածության բաժին), Տնտեսական բարեփոխումների կենտրոն, Երևան, 2005թ.:
8. Ֆար, Սյուզան Ջեյ, «Պաշտոնյաների սխալ վարքագիծը և հանրային անվստահությունը Ճապոնիային և եռակողմ ժողովրդավարություններ», ներկայացված «Անբարյացակամ ժողովրդավարությունները. ինչն է խանգարում եռակողմ երկրներին» աշխատությունում, խմբագիր Սյուզան Ջեյ Ֆար և Ռոբերտ Դ. Պուտնամ, էջ 174-201, Փրինսթոնի համալսարանի տպարան, 2000թ.:
9. Governance matters VI: Aggregate and Individual Governance Indicators 1996-2006. էջ 76-93: <http://www.worldbank.org/wbi>.
10. «Բիզնես ոլորտի ուսումնասիրությունները և ձեռնարկությունների աշխատանքի արդյունքները 1999 թվականի համար». Համաշխարհային բանկ և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ:
11. Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիր, ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի թիվ 1522-Ն որոշում:

ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ: МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ И СОВРЕМЕННЫЕ РЕАЛИИ РА

Ваче Калашян

Резюме

Посредством сравнительного анализа экономической оценки эффективности государственного управления и информационного подхода предложена новая синтетическая модель оценки качества управления. Обсуждается также международный опыт оценки качества управления, и на основании определения управления, предложенного со стороны Института Всемирного банка, совмещены агрегированные индексы и критерии мониторинга частной эффективности государственного управления. Таким образом, выдвинута идея возможности достижения целей на макроуровне посредством целенаправленных действий на микроуровне. Отдельно рассмотрены индексы политической стабильности и контроля над коррупцией, в частности, реалии, существующие в Армении по этим двум направлениям. На основе оценок международных организаций предложены конкретные механизмы и меры для улучшения существующего положения.

ԼԵԶՎԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԴՐԲԵՉԱՆՈՒՄ

Լիլիթ Մովսիսյան

Աղբբեջանում անկախացումից հետո հասարակության առջև ծառայած ամենաբարդ խնդիրներից է պետական լեզվաքաղաքականությունը: Վերջինիս ուղղություններն ու բովանդակությունը լուրջ քաղաքական գործիք են ծառայել անկախ Աղբբեջանում դեռևս վերջնականապես չձևավորված աղբբեջանական ինքնությունը ցույց տալու համար: Մյուս կողմից՝ Աղբբեջանում պետական լեզվաքաղաքականությունն ուղղված է աղբբեջանական հասարակության միավորմանը՝ նաև աղբբեջաներեն լեզվի միջոցով փորձելով հիմնավորել աղբբեջանցիների ծագման՝ հաճախ իրարամերժ տեսությունները: Աղբբեջանական լեզվաքաղաքականության մեջ ակնհայտ է աշխարհաքաղաքական կողմնորոշման բարձրաձայնումը՝ ընդգծելով լեզվում թյուրքական տարրի առանցքային կշիռը: Նշենք նաև, որ լեզվաքաղաքականությունը մինչ օրս գտնվում է պետական ամենաբարձր աստիճանների ուշադրության կենտրոնում և վերահսկողության ներքո:

20-րդ դարն աղբբեջաներենի համար կայացման, զարգացման և կատարելագործման շրջան է համարվում: Այսպես, 1918թ. Աղբբեջանի Հանրապետությունը «թյուրքական լեզուն» հռչակում է որպես պետական: Նկատենք, որ դեռևս կազմավորված ազգ չունեցող պետությունը տարբեր թյուրքական ժողովուրդների նախալեզուն պետական է հռչակում: Փաստացի արդեն նկատվում է լեզվաքաղաքականության սկզբնավորումը:

Իսկ ի՞նչ է լեզվաքաղաքականությունը: Այն պետության, այլ քաղաքական ուժերի գործունեությունն է հասարակության մեջ լեզվի կարգավիճակի շուրջ¹: Պետությունը լեզվի գործառույթների համար ստեղծում է պայմաններ, որոշում տարածման ոլորտները, լայն հնարավորություններ է ստեղծում համապատասխան հետազոտությունների համար: Ավտորիտար ռեժիմի ժամանակ լեզվաքաղաքականությունն ուղեկցվում է պետական լեզվի բռնի պարտադրմամբ: Նման միտումներ նկատվում են ժամանակակից Աղբբեջանում, բայց այդ մասին կխոսենք ավելի ուշ:

Լեզվական հիմնախնդիրն Աղբբեջանում հենց 20-րդ դարի սկզբից դարձավ հասարակական-քաղաքական պայքարի բաղկացուցիչ մաս: ԽՍՀՄ տա-

¹ www.bse.sci-lib.com/article128134.html

րիներին ստեղծվեցին գրագետ և գիտական հենք ունեցող դասագրքեր, կատարվեցին թարգմանություններ: Խորհրդային շրջանում լեզվական փոփոխությունների մեծ մասը վերաբերում էր բառապաշարին, բայց պետք է նշել հատկապես այբուբենի փոփոխությունների մասին: 1928թ. Ադրբեջանում անցնում են լատինական այբուբենի, 1939թ.¹ կիրիլականի: Ադրբեջանի Գիտությունների ակադեմիային կից Լեզվագիտական ինստիտուտի ստեղծումից հետո լեզուն սկսում է արագորեն զարգանալ: Ադրբեջանն աստիճանաբար դառնում է ԽՍՀՄ-ում թյուրքագիտական խոշոր կենտրոններից մեկը: Զարգացումը շարունակվում է ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը:

Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումից հետո առաջին Սահմանադրության մեջ պետական լեզվի մասին ոչ մի հոդված չկար: Նման հոդված չկար նաև Ադրբեջանի՝ ԽՍՀՄ կազմի մեջ մտնելուց հետո 1937թ. ընդունված Ադրբեջանական ԽՍՀ Սահմանադրության մեջ: Եվ միայն 1956թ. Խորհրդային Ադրբեջանի Գերագույն խորհրդի որոշմամբ 1937թ. Սահմանադրության մեջ լրացում կատարվեց, համաձայն որի՝ ադրբեջաներենը համարվում էր պետական լեզու: Պետական լեզվի դերի ամրապնդմանն ուղղված ջանքերը մինչև վերջ հաջողությամբ չպսակվեցին: Ի վերջո, պետական լեզվի մասին հոդվածն ընդգրկվեց 1978թ. Սահմանադրության մեջ¹:

Անկախ Ադրբեջանի առաջին Սահմանադրության նախագծի քննարկման ժամանակ պետական լեզվի մասին դրույթը, ավելի ճիշտ՝ պետական լեզվի անվանման մասին դրույթը դառնում է բազմակողմանի քննարկումների առարկա: Լայն քննարկում է ծավալվում նաև ԶԼՄ-ում, գիտական շրջանակներում և այլուր: Լեզվաբան գիտնականների, գրողների և հասարակական-քաղաքական գործիչների մի մեծ խումբ, հենվելով երկրի «պատմական» անվանման վրա, պնդում էր «ադրբեջաներեն» անվանման վրա, իսկ երկրորդ խումբը կողմ էր «թյուրքական լեզու» անվանմանը՝ ելնելով այն մտքից, որ ադրբեջանցիները թյուրք են, իսկ իրենց լեզուն դարերի ընթացքում կոչվել է թյուրքական, թաթարական լեզու, թյուրք-թաթարական լեզու և այլն: Երկարատև և բուռն քննարկումներից հետո որոշվեց Սահմանադրության մեջ ամրագրել «ադրբեջաներեն» անվանումը: Ներկայացնենք Ադրբեջանի Հանրապետության 1995թ. ընդունված Սահմանադրության՝ լեզվին վերաբերող հոդվածները:

Սահմանադրության 21-րդ հոդվածն ամրագրում է, որ ադրբեջաներենը Ադրբեջանի Հանրապետության պետական լեզուն է: Ադրբեջանի Հանրապետությունը պետք է ապահովի ադրբեջաներենի զարգացումը, երաշխավորի բնակչության կողմից կիրառվող այլ լեզուների ազատ օգտագործումը և զարգացումը: 25-րդ հոդվածը բացառում է որևէ խտրականություն լեզվական ծագման հիմքով: Սահմանադրության 45-րդ հոդվածը փաստում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի գործածել իր մայրենի լեզուն, յուրաքանչյուր ոք իրա-

¹ latin.az:8101/Ru/ukaz1.htm

վունք ունի ստանալ կրթություն և ստեղծագործելու հնարավորություն իր մայրենի լեզվով: Ոչ ոք չի կարող գրկվել իր մայրենին կիրառելու իրավունքից: Համաձայն 127-րդ հոդվածի՝ Ադրբեջանի Հանրապետությունում դատական գործընթացներն իրականացվում են Ադրբեջանի Հանրապետության պետական լեզվով կամ երկրի տվյալ շրջանում մեծամասնություն կազմող բնակչության լեզվով¹:

Անկախացումից հետո Ադրբեջանում ազգային լեզվի համար պայքարը սկսվել է դեռ 1992թ., նախագահ Այազ Մուրադիբովի կառավարման տարիներին, երբ որոշում կայացվեց կիրիլական այբուբենից հրաժարվելու և լատինականին անցնելու մասին: Բայց լատինական այբուբենին անցման իրական հիմքեր ստեղծվեցին միայն 2001թ. հունիսի 18-ի «Պետական լեզվի կիրառման կատարելագործման մասին» Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի հրամանագրից հետո, ըստ որի՝ 2001թ. օգոստոսի 1-ից ադրբեջաներենով բոլոր հրապարակումները պետք է իրականացվեին միայն լատինական այբուբենով: Այս ընթացքում, բնականաբար, եղան նաև դժգոհություններ, լարվածություն հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչների կողմից: Ադրբեջանում կա մոտ 1 միլիոն կենսաթոշակառու, նրանց 10 տոկոսը հազիվ թե ծանոթ լինի լատինական գրին²: Ադրբեջանում այբուբենի փոփոխման մասին լուրն արձագանք գտավ նաև միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներում: Օրինակ, «Բի Բի Սի»-ն և «Ռոյթերս»-ը գրեցին. «Տառագրության փոփոխության ժամանակ նշանակալի դժվարություններ ծագեցին հատկապես ադրբեջանական թերթերի և ամսագրերի խմբագրություններում: Մի շարք խմբագիրներ բողոքում էին լատինական ստեղնաշարերի և տեխնիկական այլ միջոցների պակասից»:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանում տարածված է այն կարծիքը, թե լատինական գրին անցնելը շատ ցավազին չընդունվեց: Բայց չէ՞ որ դա ունի իր բացատրությունը: Նշենք, որ ադրբեջանական այբուբենը չունի հարյուրամյա պատմություն, ինչը կարող ենք հպարտությամբ ասել, օրինակ, մեր հայոց այբուբենի մասին: Անցումը նոր այբուբենի, բնականաբար, չէր ջնջում ժողովրդի պատմական հիշողությունը, այլ պարզապես խորհրդային շրջանում ծաղկում ապրած կիրիլական այբուբենին սովորած ադրբեջանցիների համար դժվար էր նոր տառագրության անցնելը:

Երկրի իշխանությունները փորձում էին այբուբենի հետ կապված խնդիրների լուծումը վերցնել իրենց վրա: Այսպես, 1990-ական թթ. կեսերից գործում է կառավարական հանձնաժողով պետական լեզվի կիրառման վերաբերյալ: Այս գործընթացն անմիջապես վերահսկվում էր երկրի նախագահի կողմից: 1992թ. սեպտեմբերի 16-ին Ադրբեջանի նախագահը ստորագրում է հրամանագիր «Ազգային փոքրամասնությունների, փոքրաթիվ այլ ազգային խմբերի իրավունքների, նրանց լեզվական ազատությունների մասին», բայց

¹ www.servat.unibe.ch/law/icl/aj00000_.html

² regionplus.az/artic/16/socium/s3.php

ազգային փոքրամասնությունների լեզվական խնդիրների մասին կխոսենք ավելի ուշ: Ներկայացնենք մի քանի հատված նախագահի հրամանագրից:

Համաձայն հրամանագրի 6-րդ կետի՝ կառավարությանը հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել ապահովելու համար ազգային փոքրամասնությունների լեզվի և գրականության ուսուցումը՝ վերջինների խիտ բնակեցման վայրերում բացելով դպրոցներ, ինչպես նաև կազմակերպելով դասընթացներ Բաքու և Սուվգայիթ քաղաքներում: 6-րդ կետում նաև հանձնարարականներ են տրված պատրաստելու մասնագետներ Դադաստանի թուրքերի համար, միջոցներ ձեռնարկել բուհերում և հատուկ դպրոցներում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կրթությունն ապահովելու համար: 10-րդ կետի համաձայն՝ պետական հեռուստառադիոընկերությանը հանձնարարվում է կազմակերպել հեռարձակումներ լեզգիների, թալիշների և քրդերի լեզուներով, տեղական ռադիոալիքներով այլ փոքրամասնությունների լեզուներով ամենօրյա հաղորդումներ հեռարձակել:

Անդրադառնալով բարեփոխումների արդյունքներին՝ Բաքվի պլավնական համալսարանի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու Էլմիրա Ախունդովան նշում է. «Այսօր անգլերեն և ադրբեջաներեն սովորող երեխաները ծանոթ չեն կիրիլական տառագրությանը, այսինքն՝ չեն կարողանում կարդալ խորհրդային շրջանում Ադրբեջանում ստեղծված հարուստ գրականությունը: Դա կարող ենք ասել Բաքվի մասին, իսկ շրջաններում լատինական այբուբենով գրված գրքեր գտնելը շատ դժվար է: Բնականաբար, ողջ գրականությունը կարճ ժամանակում լատինական գրով վերատպելը գրեթե անհնար է: Այո, տասը տարի հետո այս երեխաները կատարյալ կտիրապետեն ադրբեջաներենին և լատինական այբուբենին, նույնը չենք կարող ասել կիրիլականի մասին: Բայց չէ՞ որ հենց այս տառագրությամբ ռուսերենով են գրված հիմնարար գիտական աշխատությունները»¹: 2005թ. Ադրբեջանում լատինական տառագրությամբ մոտ 300 անուն գիրք է լույս տեսել: Այս ամենը, իհարկե, կապված է մեծ ֆինանսական միջոցների հետ: Խնդիրը մեծ մասամբ իր վրա է վերցրել պետությունը: Թեմայի շուրջ Ախունդովան շարունակում է. «Կարծում եմ, ավելի նպատակահարմար կլինի սովորել օտար լեզուներ և կարդալ այդ լեզուներով ստեղծված ահռելի գրականությունը: Խոսքը միայն ռուսերենի մասին չէ, այլև անգլերենի: Ադրբեջանի շրջաններում իրավիճակը շատ ավելի բարդ է: Այնտեղի գրադարաններում գրեթե անհնար է նոր գրքեր գտնելը: Ուստի, դպրոցներում անհրաժեշտ է վերականգնել ռուսերենի ուսուցման մակարդակը»:

Հայտնի է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ռուսերենը որպես միջազգային հաղորդակցության լեզու զիջեց իր դիրքերը: Խորհրդային շրջանում տարածված էր ռուսախոս բնակչություն հասկացությունը: Ադրբեջանում մայրենի լեզվի կիրառման գործառույթների ընդլայնման հետ կապված՝ ռուսերենը կորցնում

¹ regionplus.az/artic//16/socium/s3.php

էր երբեմնի հստակ քաղաքական նշանակությունը, որ ձեռք էր բերել նախաճառաջ պետական լեզու լինելու շնորհիվ: Դրանով հանդերձ, ռուսերենը մինչ օրս Ադրբեջանում շարունակում է լայնորեն կիրառվող լեզու մնալ: Ռուսերենով լույս են տեսնում թերթեր, ամսագրեր, դասագրքեր, հեռարձակվում են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ, գործում են ռուսական դպրոցներ:

Պետական անկախության կարևորագույն բաղկացուցիչը համարվող ադրբեջաներենի դերն ավելի մեծացնելու, ազդեցության ոլորտներն ընդլայնելու և ամրապնդելու, պետական հոգածությունը մեծացնելու, ինչպես նաև գիտական հետազոտություններն ակտիվացնելու նպատակով 2001թ. հունիսի 18-ին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը ստորագրում է հրամանագիր, որի կետերն աննշան կրճատումներով ներկայացնում ենք ստորև:

1. Ադրբեջանի Հանրապետության նախագահին կից ստեղծել լեզվի վերաբերյալ Պետական հանձնաժողով:
2. Ադրբեջանի Հանրապետության նախագահի աշխատակազմին հանձնարարել մեկ ամսվա ընթացքում պատրաստել և երկրի նախագահին ներկայացնել «Ադրբեջանի Հանրապետությունում պետական լեզվի մասին» օրինագիծը:
3. Ադրբեջանի Հանրապետության նախարարությունների, պետական կառույցների, կազմակերպությունների ղեկավարներին հանձնարարել իրականացնել երկարաժամկետ բազմակողմանի ծրագրեր՝ կապված պետական լեզվի և լատինական տառագրության կիրառման աշխատանքների բարելավման հետ և մինչև 2001թ. օգոստոսի 1-ը Ադրբեջանի նախագահին տեղեկացնել նախնական արդյունքների մասին:
4. Ադրբեջանի Հանրապետության կրթության նախարարությանը հանձնարարել միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում ադրբեջաներենի դասավանդումը բարելավելուն ուղղված վճռական քայլեր կատարել:
5. Ադրբեջանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիային և կրթության նախարարությանը հանձնարարել մեկ ամսվա ընթացքում Ադրբեջանի Հանրապետության նախագահին ներկայացնել այն գիտական և գեղարվեստական ստեղծագործությունների, բառարանների և դասագրքերի ցուցակը, որոնց լատինական այբուբենով վերատպումը տվյալ պահին նախընտրելի է:
6. Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիային հանձնարարել մեկ ամսվա ընթացքում վերանայել և հաստատել ադրբեջաներենի լեզվագիտության տարբեր ճյուղերում գիտական հետազոտությունների ընթացիկ և հեռանկարային պլանները:
7. Հանձնարարել հանրապետության քաղաքների և շրջանների գործադիր իշխանություններին քայլեր ձեռնարկել տեղերում ցուցանակները, գո-

վագդային վահանակները և այլ նյութերն ադրբեջաներենի գրական լեզվի նորմերին համապատասխանեցնելու ուղղությամբ:

8. Ադրբեջանի Հանրապետության մշակույթի նախարարությանը, հեռուստա- և ռադիոհեռարձակումների պետական ընկերությանը հանձնարարել մեկ ամսվա ընթացքում պատրաստել և երկրի նախագահին ներկայացնել այն առաջարկները, որոնք կապված են արտասահմանյան երկրներում արտադրված և Ադրբեջանում ցուցադրման համար նախատեսված ֆիլմերի և տարբեր հաղորդումների՝ ադրբեջաներենով բարձրամակարդակ թարգմանություններ կատարելու հետ¹:

Հրամանագրում հիշատակված լեզվի մասին օրենքն ընդունվեց 2002թ. սեպտեմբերի 30-ին: «Ադրբեջանի Հանրապետության պետական լեզվի մասին» օրենքը կարգավորում է ադրբեջաներենի իրավական կարգավիճակը՝ որպես Ադրբեջանի Հանրապետության պետական լեզու: Հետաքրքիր է նշել, որ օրենքում ամրագրված է ադրբեջանական այբուբենի լատինատառ բնույթը, միաժամանակ, հաշվի առնելով արաբատառ և կիրիլատառ այբուբենների՝ ադրբեջանական մշակույթում խաղացած կարևոր դերը, դրանք կարող են կիրառվել հատուկ դեպքերում (բառարաններում, գիտական հրատարակություններում և այլն):

Ազգային լեզվի դիրքերի ամրապնդմանն ուղղված օրենքի ընդունումն անհանգստացրեց ռուսախոս բնակչությանը: Նրանք հայտարարեցին, թե իրենց իրավունքները ոտնահարվում են: «Ռուսախոս բնակչությանը մնում է միայն սովորել մեր լեզուն, նրանց համար քաղաքացիության մեջ ոչ մի սահմանափակում չկա: Ռուսական դպրոցները գործում են մեր հարկատուների միջոցներով: Ստացվում է, որ ադրբեջանցիներն իրենց երկրում զբաղված են ռուսերենի դերի մեծացմամբ: Եթե Ռուսաստանը ցանկանում է ունենալ այստեղ դպրոցներ, թող ինքը հոգա այդ ծախսերը», - ասում է Ադրբեջանի Ժողովրդավարական կոնգրեսի ներկայացուցիչ, պատգամավոր Սաբիր Ռուստամխանլին:

Մասնավոր *ANS* հեռուստառադիոընկերության նախագահ Վահիդ Նախըլը առաջարկում է ռուսական *OPT*, *PTP* և *HTB* հեռուստաալիքների համար նախատեսված հաճախությունները տալ տեղական հեռուստաընկերություններին: «Ով ցանկանում է դիտել այս հաղորդումները, թող օգտվի արբանյակային ալեհավաքներից, ինչպես Վրաստանում է»:

Տարբեր տվյալներով՝ Ադրբեջանում ապրում է 30-50 հազ. ռուս: Սակայն «ռուսախոս բնակչություն» հասկացությունն ընդգրկում է նաև մի շարք այլ ազգությունների ներկայացուցիչներին²: Այնպես որ, հաղորդակցության մեջ ռուսերենը նախընտրողների թիվը հասնում է մինչև 2 միլիոնի: Այնուամենայն-

¹ mct.gov.az/?/ru/culturhistory/2655/148

² regionplus.az/artic//16/socium/s3.php

նիվ, օրենքի ընդունումից կարճ ժամանակ անց երկրում սկսվեցին կոնկրետ փոփոխություններ: Գրեթե բոլոր մեծ ձեռնարկությունների, հիմնարկների ղեկավարները հրաժարվում են աշխատանքի ընդունել այն աճանց, ում փաստաթղթերը լրացված են ռուսերենով:

Ուսանողների ընդունելությամբ զբաղվող պետական հանձնաժողովը հրաժարվում է նույնիսկ վերցնել այն դիմորդների գործերը, ովքեր իրենց փաստաթղթերը ռուսերենով են լրացրել: «Ադրբեջանի յուրաքանչյուր քաղաքացի, ավարտելով միջնակարգ դպրոցը, պարտավոր է գոնե դիմումը լրացնել մեր պետական լեզվով», - ասում են հանձնաժողովում¹: Այս ամենի հետ կապված՝ պատգամավոր Իբրահիմ Հասանը գրում է. «Ռուսերենը միջազգային լեզու է, և նրա կիրառությունը չպետք է սահմանափակել: Ռուսական դպրոցները փակելու փոխարեն ավելի լավ է մտածել ադրբեջանական դպրոցներում դասավանդման մակարդակի բարձրացման մասին»:

Այնուամենայնիվ, Ադրբեջանում կա լեզվական խնդիր: Բավական է նշել, որ գրական ադրբեջաներենով դասագրքերը դեռ լույս տեսնելու փուլում են: Այսինքն՝ մինչ օրս ժամանակակից գրական ադրբեջաներենի մասին չկա բավարար գրականություն: Լեզուն այս պահին էլ փոփոխվում և կատարելագործվում է: Փոփոխությունը հատկապես ակնհայտ է վերջին տասնամյակի ընթացքում, այսօրվա ադրբեջաներենի և խորհրդային շրջանի ադրբեջաներենի միջև արդեն կա որոշակի տարբերություն:

Ժամանակակից Ադրբեջանում կարևոր խնդիր է համարվում օտարերկրացիների համար ադրբեջաներեն սովորելու ձեռնարկների բացակայությունը: Արագացված տեմպերով լեզուն սովորելու ձեռնարկներ, նյութեր գրեթե չկան: Ախունդովան բերում է Ֆրանսիայի օրինակը, որտեղ արտերկրում ֆրանսերենի ուսուցման վրա ծախսվում է տարեկան մոտ 50 միլիոն եվրո: Նա նշում է, որ Ադրբեջանում չկա նման պետական քաղաքականություն, չկան անվճար դասընթացներ, օրինակ, ռուսախոս քաղաքացիների համար: Սակայն միանշանակ ասել, թե ռուսերենը բոլորովին ճնշված վիճակում է, սխալ կլինի: Հանրապետությունում գործում է Բաքվի Սլավոնական համալսարանը, որը բացվել է 2000թ.: Բացի այդ, Ադրբեջանում գործում է ռուսերենի զարգացման կենտրոն: Պարբերաբար Ադրբեջանում ռուսերենի դասավանդման և դերի մասին միջազգային խորհրդաժողովներ են անցկացվում²:

Ադրբեջանի Միլի մեջլիսը որոշել է նույնիսկ այն տուգանքի չափը, որ նախատեսված է ադրբեջաներենի կիրառման դեմ հակազդեցություն ցուցաբերելու, ինչպես նաև լատինական այբուբենի մասին օրենքը խախտողների համար: Այսպես, պաշտոնյաների համար տուգանքի չափը կազմում է մոտ \$50-

¹ www.zonakz.net/articles/1372

² Худиев Н., “Гейдар Алиев и азербайджанский язык”, Баку, 1997 (на азерб. языке).

90: Որոշ պետական կառույցներում նույնիսկ ավելի շատ կիրառվում է ռուսերենը: Մեկ այլ պատգամավոր էլ կարծում է, որ Ադրբեջանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչներն այնպիսի քայլեր են անում, որ իրենց համար ընդունելի չեն: Օրինակ, Իրանի դեսպանատան առջև կացուցանակ անգլերեն և պարսկերեն լեզուներով, բայց ոչ ադրբեջաներենով: Ըստ ադրբեջանցիների՝ կան որոշ կազմակերպություններ, որոնք զբաղվում են ադրբեջաներենի հակաքարոզչությամբ՝ նկատի ունենալով Ադրբեջանի հյուսիսային շրջաններում գործող լեզվի «Սադվալ» կազմակերպությունը, որը հովանավորվում է Ռուսաստանի որոշակի շրջանակների կողմից¹:

Այսօր լեզվի հիմնահարցն Ադրբեջանում ամենակարևոր հարցերից մեկն է՝ հատկապես հաշվի առնելով այն աշխատանքը, որն ընթանում է լատինատառ այբուբենով գրքերի տպագրության ուղղությամբ: Մի շարք փորձագետներ գտնում են, որ Ադրբեջանի համար անցումը նոր գրի դեռ վաղ էր: Այսպես, Բաքվի Սլավոնական համալսարանի ավագ գիտաշխատող Հեյդար Օրուջևի կարծիքով՝ անցումը լատինական գրի հետ շարտեց Ադրբեջանին. «Առաջադիմելու փոխարեն հետընթաց ենք ապրում: Մերունդների միջև սեպ է առաջացել: Ամենաքիչը երկու սերունդ է պետք, որ ամբողջական ադապտացիա կատարվի: Այդ փոփոխությունն Ադրբեջանի համար ճոխություն էր, բայց ոչ կիրիլական, ոչ էլ լատինական այբուբենները բուն ադրբեջանական չեն: Այսինքն՝ կա ադրբեջաներեն լեզու, բայց չկա ադրբեջանական այբուբեն»: Էլմիրա Ախունդովայի կարծիքով, այսօր ադրբեջաներենում առաջ է եկել մեկ այլ խնդիր՝ թուրքերենից, ռուսերենից և այլ լեզուներից նորաբանությունների զանգվածային կուտակումը²: Փորձագետների կարծիքով, այսօր նորաբանություններով հատկապես լի են հեռուստատեսությունները: Բայց այդ ի՞նչ նորաբանություններից են խոսում ադրբեջանցի փորձագետները: Եթե թուրքերենից վերցրած բառերը նրանք համարում են նորաբանություններ, իսկ լեզուն ինքնին բաղկացած է արաբա-պարսկական արմատներից, ռուսերեն և, իհարկե, թյուրքական ծագում ունեցող բառերից, ապա մի թե դրանք կարելի է անվանել նորաբանություններ: Այդ դեպքում որո՞նք են բուն ադրբեջանական բառերը, ի՞նչ մաքուր լեզվի մասին է խոսում ադրբեջանցի փորձագետը: Եվ նրանք խոսում են լեզվի՝ նորաբանություններից ազատվելու անհրաժեշտության մասին: Հետաքրքիր է, արդյունքում ի՞նչ լեզու է ստացվելու: Ինչևէ, շարունակենք ներկայացնել լեզվաքաղաքականությունը ներկայիս Ադրբեջանում:

Լեզվական խնդիրները ժամանակակից Ադրբեջանում ամենից շատ զգացվում են մամուլում: Այսպես, Ադրբեջանի մամուլի խորհրդի՝ երկրի թերթերի լեզուն քննարկելու նպատակով կազմակերպած խորհրդաժողովներից

¹ <http://news.aif.ru/news.php?id=7113>

² regionplus.az/artic//16/socium/s3.php

մեկում զեկուցողները խոսեցին քերականական սխալների, կետադրական նշանների ճիշտ տեղադրման և այլ խնդիրներից:

Ըստ «Ազատություն» (*“Azadliq”*) թերթի, Ադրբեջանում լեզուն մարդուն անհրաժեշտ է լռելու, երբեմն էլ շողոքորթելու համար: Իսկ ահա Ադրբեջանի Հումանիտար գիմնազիայի ուսուցիչներից մեկը, անդրադառնալով ադրբեջաներենի խնդիրներին, նշել է. «Ոմանք կարծում են, որ մեր լեզվում խնդիրներ կան: Իրականում հիմնահարցը լեզվում չէ, այլ այն հասարակությանը հասցնել կարողանալու մեջ: Այնուամենայնիվ, այսօր մամուլի լեզվում կան բազմաթիվ խնդիրներ: Մեր բառապաշարում տեղի ունեցող նորամուծությունները մամուլում ավելի արագ են արտացոլվում»: Ուսուցիչը, և ոչ միայն նա, դժգոհությամբ է արտահայտվում գովազդային վահանակներում, ինչպես նաև մամուլում և հեռուստատեսությունում, ռադիոյում գովազդային տեքստերի աղավաղումների մասին: Քննադատության են ենթարկվում անգամ շուրջիզնեսի ներկայացուցիչները, առաջին հերթին երգիչները, որոնց խոսքը երբեմն ընդհանրապես հասկանալի չի լինում¹: Հեռուստահաղորդումների լեզուն համարվում է գրագետ խոսքի օրինակ, նրանք պարտավոր են խոսել գրական լեզվով, բայց, ցավոք, այս կանոնները ևս խախտվում են: Ի՞նչ գրական լեզվի մասին է խոսքը, երբ այսօր հասարակության մեջ դեռ քննարկվում են լեզվի քերականական կանոնները, կետադրական նշանները, և մինչ օրս չկան միասնական համակարգեր: Այնպես որ, Ադրբեջանի հասարակության մեջ չկա այնպիսի մի շերտ, որի լեզուն կարելի է համարել գրական լեզվի և գրագետ խոսքի օրինակ²:

Այժմ անդրադառնանք մի թեմայի, որն այսօր շատ հաճախ է քննարկվում և արծարծվում ադրբեջանական հասարակության մեջ, հատկապես ընդդիմադիր գործիչների կողմից: Պաշտոնական տեսակետի համաձայն՝ ազգային և էթնիկ փոքրամասնությունների լեզվի կիրառման և զարգացման համար Ադրբեջանում առկա են բոլոր հնարավորությունները: Փորձենք մի փոքր տեղեկացնել պաշտոնական և իշխանամետ մամուլում տեղ գտած կարծիքներին ազգային փոքրամասնությունների լեզվի կիրառման մասին: Ադրբեջանում մի շարք էթնիկ փոքրամասնություններ ունեն երկու մայրենի լեզու: Այս փոքրամասնությունների մի մասը, համաձայն 1989թ. մարդահամարի տվյալների, ազատ խոսում է ռուսերեն և իրենց մայրենի լեզուներով: Նրանց թվում են ուկրաինացիները, թաթարները, թաթերը, ուղիները: Իսկ լեզգիները, ավարները, թալիշները, քրդերը ազատ խոսում են ադրբեջաներեն և իրենց մայրենի լեզուներով: Ազային փոքրամասնությունների լեզվի պաշտպանության գործընթացը սկսվել է դեռ 1992-ից³: Այսպես, 1992թ. սեպտեմբերին Ադրբեջանի նախագահը ստորագրեց հրամանագիր «Ազգային փոքրամասնությունների, փոքրաթիվ

¹ azadliq.org
² Նույն տեղում:
³ crc.aznet.org/crc/SLD001.HTM

խմբերի և էթնիկ խմբերի իրավունքների և ազատությունների պաշտպանության և նրանց ազգային լեզուների ու մշակույթների պետական հովանավորման մասին»: Վերոնշյալ՝ 1992թ. ընդունված «Պետական լեզվի մասին» օրենքը երաշխավորում է Ադրբեջանի բոլոր քաղաքացիների իրավունքը կիրառել որևէ ազգային փոքրամասնության լեզուն հանրապետության տարածքում: 1995թ. ընդունված Սահմանադրության մեջ ևս նշվում է, որ պետությունն ապահովում է այլ լեզուների ազատ կիրառումը: Օրինակ, 45-րդ հոդվածում կա դրույթ այն մասին, որ քաղաքացին իրավունք ունի կիրառել իր մայրենի լեզուն: Ոչ ոք չպետք է զրկվի իր մայրենի լեզուն կիրառելու իրավունքից:

Գիտությունների ակադեմիայում գործում է միջազգային հարաբերությունների ինստիտուտ, որը կոչված է լուծելու ազգային փոքրամասնությունների խնդիրները: Շարունակելով թեման՝ նշենք, որ Ադրբեջանում օրեցօր ավելանում է տարբեր էթնիկ խմբերի մշակութային և կրթական կենտրոնների թիվը: Փաստենք նաև, որ Ադրբեջանի պետական ռադիոյով հաղորդումներ են հեռարձակվում ադրբեջաներեն, ռուսերեն, վրացերեն, լեզգիերեն, քրդերեն և թալիշերեն լեզուներով¹: Այդ փոքրամասնությունների թվում են թալիշները, լեզգիները, ծախուրները, ավարները, ուղիները, խինգալիները²: Հիշեցնենք, որ վերոնշյալը պաշտոնական տեսակետն է:

Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների իրավունքների, ազատությունների հետ կապված իրական պատկերն ավելի ամբողջական դարձնելու համար անդրադառնանք նաև ոչ պաշտոնական տեսակետներին: Այսօր Ադրբեջանի ազգային փոքրամասնություններն իրենց իրավունքները համարում են ճնշված, չեն կարողանում ազատ կիրառել իրենց մայրենի լեզուները, առանց խոչընդոտների կազմակերպել ազգային մշակութային միջոցառումներ, ստանալ կրթություն իրենց մայրենի լեզվով և այլն: Այսպես, Ադրբեջանի Իրավապաշտպան կենտրոնի տնօրեն Էլնար Ձեյնալովը Բաքվի «Էխտ» թերթին հայտնել է, որ չնայած Ադրբեջանի՝ Եվրոպայի խորհուրդ մտնելուց հետո երեք տարվա մեջ Ադրբեջանը պետք է օրենք ընդուներ ազգային փոքրամասնությունների մասին, բայց «մինչ օրս չի ընդունել»³: Ըստ Ձեյնալովի՝ «Այսօր Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների լեզուներից միայն ռուսերենով կարելի է լիարժեք կրթություն ստանալ: Ոչ մի ուրիշ փոքրամասնության լեզվի մասին նույնը չենք կարող ասել: Օրինակ, երկրի հարավային շրջաններում թալիշերեն լեզվով դպրոցականների համար միայն շաբաթվա մեջ մեկ անգամ են պարապմունքներ անցկացվում, այն էլ ֆակուլտատիվ հիմունքով: Թալիշերեն լեզվով դասագրքեր ու ձեռնարկներ վերջին անգամ լույս են տեսել 1997թ.: Գրեթե նույն վիճակն է տիրում մյուս ազգային փոքրամասնությունների լեզվի

¹ Նույն տեղում:

² Geocities.com/CapitolHill/Lobby/9754/SLD001.HTM.

³ gipp.ru/opennews.php?id=4050&type=0

պարագայում»: Ձեյնալովը խոսում է նաև Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների լեզուներով մամուլի գրեթե բացակայության մասին: Օրինակ, հյուսիսային և հարավային շրջաններում չկան առանձին հաճախություններ, որոնցով հաղորդումներ հեռարձակվեն փոքրամասնությունների լեզուներով: Նրանց թերթերը տպագրվում են ոչ պարբերաբար, այն էլ խմբագիրների անձնական միջոցների հաշվին: Փաստորեն, կառավարությունն այս հարցերում նրանց չի աջակցում: «Նույնիսկ 1992-1993թթ., երբ Ադրբեջանի նախագահն Էլչիբեյն էր, ով նման հարցերում բավական կոշտ դիրքորոշում ուներ, փոքրամասնությունների թերթերի տպագրության համար որոշակի գումարներ էին հատկացվում: Նույնիսկ ԽՍՀՄ տարիներին, երբ սկսվեց կոլտնտեսային շարժումը, տասը տարվա ընթացքում թափշերենով լույս տեսավ 500 անուն գիրք: Խոսքն այն մասին է, որ Ադրբեջանի օրենսդրությամբ կա դրույթ այն մասին, որ ոչ պետական լեզվով լրատվամիջոցներն իրավունք ունեն հեռարձակվել միայն եթերաժամի 1/6 մասով: Այսինքն, եթե տվյալ ալիքը նախատեսված է միայն լեզգիների համար, ապա հաղորդման մոտ 80 տոկոսի ընթացքում պետք է հնչի միայն ադրբեջաներեն լեզուն», - նշում է իրավապաշտպանը:

Վերջերս Երևանում անցկացվեց մի խորհրդաժողով՝ նվիրված Կովկասյան Աղվանքին: Խորհրդաժողովի թեման էր «Կովկասյան Աղվանքի պետականությունը և նրա էթնիկ-մշակութային ժառանգությունը»: Խորհրդաժողովին մասնակցում էր նաև Դադստանի պետական համալսարանի պրոֆեսոր, «Շամիլի ֆոնդ» կազմակերպության անդամ, պատմական գիտությունների թեկնածու Թիմուր Այտբերովը: «Ռեզնում» գործակալությանը տված հարցազրույցում նա ասաց, որ ավարների հազարամյա պատմության ընթացքում, համաշխարհային կայսրություններից բացի, նրանց ոչ ոք չի կարողացել հաղթել: «Ուստի մենք մեր իրավունքները մինչև վերջ պիտի պաշտպանենք, աշխարհում ընդունված բոլոր մեթոդներով», - նշել է գիտնականը: Ադրբեջանում ավարների խնդիրներից խոսելով՝ Այտբերովը շեշտը դրեց լեզվական խնդիրների վրա: Նրա խոսքերով՝ ավարների լեզուն թույլ չեն տալիս կիրառել նույնիսկ փոքր կառույցների մակարդակով: «Ներկայումս ավարների կողմից հիմնված մասնավոր հեռուստաալիքները, որոնց հաղորդումները հեռարձակվում էին ադրբեջաներենով, բայց միաժամանակ հնչում էին ավարական երգեր, փակվեցին՝ պատճառաբանելով, որ հաղորդավարները «կոտրված» ադրբեջաներենով են խոսում¹: Պրոֆեսորի խոսքերով՝ Ադրբեջանում ընթանում է տեղի բուն դադստանյան ժողովուրդների ոչնչացման քաղաքականություն: «Դադստանալեզու ժողովուրդները, հատկապես ավարները, երբեք ինչ-որ ադրբեջանական պետության կազմում չեն եղել. ոչ խսաների, ոչ էլ շահերի

¹ www.regnum.ru/news/879285.html?

ժամանակ: Բայց խորհրդային շրջանի իրադարձությունների ազդեցությամբ և գաղտնի թուրքական քաղաքականության արդյունքում, երբ Քեմալ Աթաթուրքը խաբեց Լենինին, երկրորդ Ադվանից թագավորության տարածքը մտավ Ադրբեջանի կազմի մեջ: Այս երկրի իշխանություններն առաջին իսկ օրերից սկսած դադատանալեզու ժողովուրդների հանդեպ սկսեցին ցեղասպանության քաղաքականություն: Կովկասյան Ադվանքի հիմնահարցի գիտական ասպեկտը օգնում է Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի, հատկապես Դադատանի ժողովուրդներին, որպեսզի նրանք ճանաչեն իրենց անցյալը և հասկանան, թե ինչպես են վարվել իրենց նախնիները և ապագայում իրենք ինչպես պետք է վարվեն. ում հետ բարեկամական հարաբերություններ ունենալ, ում հետ էլ ավելի զգույշ վարվել», - նշել է Այտբերովը:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը, ինչպես նաև ժամանակակից Ադրբեջանում լեզվական ոլորտի հետ կապված իրավիճակը՝ փաստենք, որ ադրբեջաներենի կիրառման և ուսումնասիրման ոլորտում դեռ շատ խնդիրներ կան: Նախ դպրոցներում և բուհերում ադրբեջաներենի դասավանդումը չի համապատասխանում ժամանակակից միջազգային չափորոշիչներին: Մի շարք լրատվամիջոցներում, պաշտոնական գրագրության, գովազդային գործունեության մեջ և մի շարք այլ ոլորտներում գրական ադրբեջաներենի նորմերը չեն պահպանվում: Շատ հաճախ նշված ոլորտներում, ինչպես նաև առօրյա կյանքում նախապատվությունը տրվում է օտար լեզուներին: Ադրբեջանում կան հեռուստաընկերություններ և ռադիոալիքներ, որոնց որոշ հաղորդումներ ևս մինչ օրս հեռարձակվում են օտար լեզուներով, հատկապես ռուսերենով: Աշխատանք է տարվում արտասահմանյան ֆիլմերն ադրբեջաներենով թարգմանելու ուղղությամբ, բայց այդ թարգմանությունների որակը կարելի է լուրջ կասկածի տակ դնել. թարգմանիչները նույնիսկ հստակ չգիտեն, թե, օրինակ, տվյալ բառը բուն ադրբեջաներեն է, թե՞ ոչ, արդյո՞ք կարելի է դրա փոխարեն օգտագործել օրինակ թուրքերեն համարժեքը և թարգմանությունը ներկայացնել որպես գրական ադրբեջաներենով կատարված թարգմանություն:

Հոկտեմբեր, 2008թ.

ЯЗЫКОВАЯ ПОЛИТИКА В СОВРЕМЕННОМ АЗЕРБАЙДЖАНЕ

Лилит Мовсисян

Резюме

В статье представлена нынешняя ситуация в сфере языковой политики в Азербайджане, ее правовые и языковые основы, положение с языковыми правами и свободами национальных меньшинств, существующие проблемы. Показано, что азербайджанский язык пока полностью не сформировался, вследствие чего он не состоялся практически на всех структурных уровнях.

Государственная языковая политика является одной из сложнейших проблем, вставших перед обществом после суверенизации Азербайджана. Направления и содержание этой политики служили в этой стране серьезным политическим инструментом для демонстрации пока не окончательно сформировавшейся азербайджанской идентичности. С другой стороны, государственная языковая политика нацелена на консолидацию азербайджанского общества, дабы, в том числе посредством языка, обосновать зачастую взаимоисключающие теории возникновения азербайджанцев. В языковой политике Азербайджана, которая по сей день находится под контролем и в центре внимания самых высоких государственных инстанций, очевидно озвучивание геополитической ориентации за счет акцентирования ключевого значения турецкого элемента.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ԵՎ ՀԱԿԱՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Լեռն Հովսեփյան

Թուրքիան ծրագրել է հիմնովին արդիականացնել երկրի հակաօդային պաշտպանության համակարգը և զարգացնել սեփական հակահրթիռային պաշտպանությունը, ինչը պայմանավորված է տարածաշրջանային ու միջազգային ռազմաքաղաքական մի շարք գործոններով: Այդ երկրի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն որոշել է սկսել ՀՀՊ և ՀՕՊ արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը, ինչի շրջանակներում նախատեսվում է մեծ հեռահարության համալիրների ձեռքբերում: Ռազմավարական ծրագրի շրջանակներում նախատեսված է արդիականացնել փոքր և միջին հեռահարության հրթիռային համալիրները, որի շրջանակներում լուրջ դերակատարություն է վերապահված թուրքական տեղական ռազմարդյունաբերական ընկերություններին:

Թուրքիայի ռազմական ոլորտի արդիականացման հիմքերը դրվեցին հատկապես 1991թ. Պարսից ծոցի պատերազմից հետո, քանի որ Թուրքիայի զինվորական շրջանակները պարզ հասկացան, որ երկրի զինված ուժերը՝ իրենց թույլ և արդեն հնացած սպառազինությամբ, չեն կարող դիմագրավել 21-րդ դարի նոր մարտահրավերներին [1]: Զինված ուժերի արդիականացման գործընթացն սկսվեց հետսառաջադեմության նոր մարտահրավերներին դիմակայելու համար, քանի որ փոխվում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական դերը. այն արդեն հանդես էր գալիս որպես տարածաշրջանային տերություն, որը ներքին և արտաքին սպառնալիքներին դիմագրավելու համար ավելի շատ ռազմական ուժի կարիք էր զգում:

Այդ երկրի ԶՈՒ Գլխավոր շտաբի գլխավոր պլանավորման և սկզբունքների մշակման դեպարտամենտի ղեկավար, գեներալ-լեյտենանտ Հիլմի Աքըն Զորլուի բնորոշմամբ, Թուրքիան, իր գեոստրատեգիական դիրքով լինելով եզակի երկիր, գտնվելով երեք մայրցամաքների «խաչմերուկում», հանդիսանալով էներգետիկ տարանցիկ տարածք, միաժամանակ ապահովված չլինելով այդ տարածաշրջաններից եկող տարբեր մարտահրավերների ու սպառնալիքների հանդեպ, հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու քաղաքա-

կան պահանջներին համապատասխանող ՁՈՒ¹:

ՁՈՒ արդիականացման ռազմավարության հիմքում էական և հիմնական դերակատարություն է տրվում երկրի ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանը: 1996թ. թուրքական ռազմական արդյունաբերության ընկերությունների ներկայացուցիչների հետ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի անցկացրած խորհրդակցության ժամանակ մանրամասն ուսումնասիրվել են ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանն ուղղված հետագա պլանները, որի արդյունքում պաշտպանության նախարարության կողմից մշակվել է այդ ուղղությամբ իրականացվելիք քայլերի վերաբերյալ առանձին փաստաթուղթ [2]: Թուրքիայի պաշտպանական հայեցակարգի հիմքում է դրված այդ երկրի բանակի կարիքների ապահովման համար սեփական ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարությունը: Այդ երկրի ռազմական գերատեսչությունը ՁՈՒ արդիականացման գործում էական է համարում ռազմական տեխնոլոգիաների և գիտատար ուղղությունների ներդրման ու աջակցության վրա հիմնված բանակային ապահովման սեփական արդյունաբերական համալիրի գոյության ու զարգացման անհրաժեշտությունը: Թուրքիայի ՁՈՒ ԳՇ նախկին պետ Հիլմի Օզքյոքն իր վերջին ելույթներից մեկում անդրադարձել էր «համաչափ և անհամաչափ միասնության» պատերազմների՝ «Գիտության դարաշրջանի պատերազմ» նոր հայեցակարգի առանցքային նշանակությանը: Թուրքիայի զինվորական շրջանակների համար ռազմավարական խնդիր է դիտվում տարածաշրջանում առաջատար տերություն դառնալն ու առաջին հերթին ռազմական առումով գերակայություն ապահովելը: «Թուրքիան վերաձևվող քաղաքական աշխարհագրության կենտրոնում տեղ է գտնում որպես տարածաշրջանային ուժ, իսկ դրա առաջնային պայմաններից է հզոր և պատերազմի պատրաստ, ինչպես նաև տեխնոլոգիապես հարուստ և գիտության ազդեցությունը կրող ՁՈՒ գոյությունը»²:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության քաղաքականությունը, տեղականի հետ միասին, նախատեսում է նաև օտար հատվածի համար բաց, դինամիկ, արտահանման հնարավորություններ ունեցող և միջազգային շուկայում մրցունակ, նորագույն տեխնոլոգիական հնարավորություններով հագեցած, տեխնոլոգիաներ մշակող ու արտադրող, տեխնոլոգիական զարգացումներին համապատասխան ռազմական արդյունաբերական բազայի զարգացումը: Ռազմարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարու-

¹ Թուրքիայի ՁՈՒ ԳՇ գլխավոր պլանավորման և սկզբունքների մշակման դեպարտամենտի ղեկավար, գեներալ Հիլմի Աքըն Զորլուի ելույթը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված կոնֆերանսում: Տե՛ս Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության պաշտոնական կայքէջ՝ http://www.ssm.gov.tr/browser_tr.asp?srcURL=library/docs/tr/kurumsal/SSM_20_yil.htm&title=

² Özkök, Türkiye bölgesel güç olacak, <http://www.haber7.com>, 24.08.2006.

թյունը մշակվում է բանակի ներքին պահանջմունքների բավարարման, ինչպես նաև միջազգային պաշտպանական շուկայում ներմուծող երկրից սեփական ռազմական արտադրանքն արտահանող երկիր հանդես գալու և այդ ոլորտում առաջատար դիրքերի հասնելու տեսանկյունից¹:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության ոլորտում գործում են մի քանի ընկերություններ, որոնք մասնագիտացված են ռազմական տեխնիկայի, սպառազինության ու տարբեր զինատեսակների արտադրության ոլորտում: Հրթիռային տեխնոլոգիաների ու զենիթահրթիռային, հրետանային համալիրների արտադրության ոլորտում գործում են թուրքական *Roketsan* ու *Aselsan* ընկերությունները, ինչպես նաև մի քանի այլ ընկերություններ:

Հրթիռային արտադրության ոլորտում է մասնագիտացած 1988թ. հիմնադրված *Roketsan* թուրքական ընկերությունը, որն իր գործունեությունն սկսել է Եվրոպական կոնսորցիումի համար *Stinger* հրթիռների շարժիչների արտադրությամբ: Ընկերությունը հիմնականում գործում է հրթիռային համալիրների, ինչպես նաև առանձին բաղադրամասերի նախագծման ու արտադրության ոլորտում: Ընկերության բաժնետերերն են Թուրքիայի ԶՈՒ ամրապնդման հիմնադրամը, *ASELSAN* և *MKEK* ռազմարդյունաբերական ընկերությունները²: Այդ ընկերությանն է պատկանում փոքր հեռահարության հրթիռների, ինչպես նաև հրթիռների տարբեր բաղադրիչների՝ վեկտորային կառավարման մասերի, մարտագլխիկների, կառավարման համակարգերի արտադրությունը, ինչպես նաև Ռազմաօդային ուժերի (այսուհետ ՌՕՈՒ) համար *RAPIER Mk-2* հակաօդային պաշտպանության համակարգերի (այսուհետ ՀՕՊ), հրթիռների արտադրությունն ու արդիականացումը: Ընկերությունն այժմ աշխատանքներ է իրականացնում բարձր հեռահարության ՀՕՊ համալիրների ստեղծման համար: Հակատանկային հրթիռների ծրագրի շրջանակներում այն թուրքական բանակին տրամադրեց սեփական նախագծման *T-122 MBRL* և *T-107 MBRL* հակատանկային, համազարկային կրակի հրթիռային համալիրներ (այսուհետ ՀԿՀՀ), որոնց ընդհանուր թիվը ներկայումս սպառազինության մեջ կազմում է շուրջ 90 միավոր³:

Ընկերությունը վերջին տարիներին ստանձնել է փոքր և միջին հեռահարության հակատանկային հրթիռների նախագծման ու արտադրության պարտավորությունը, որ առաջադրվել էր Պաշտպանական արդյունաբերության խորհրդի նիստում: Փոքր հեռահարության հրթիռները նախատեսված են մարտական մեքենաների, իսկ միջին հեռահարության հրթիռները՝ արտադրու-

¹ *Roketsan* ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Սելչուկ Յաշարի զեկույցը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության հիմնադրման 20-ամյակին նվիրված կոնֆերանսի նյութեր. Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարության պաշտոնական կայքէջ, <http://www.ssm.gov.tr>

² <http://www.roketsan.com.tr>

³ <http://www.roketsan.com.tr/122eng.html>

թյան մեջ գտնվող *T-129 ATAK* հարվածային ուղղաթիռների համար¹:

Roketsan թուրքական ընկերության տնօրեն Հուսեյն Բայսաքը 2005թ. վերջին հայտարարեց, որ տարբեր տեսակի հեռահար գործողության հրթիռների արտադրության համար ընկերությունն ունի բոլոր անհրաժեշտ մարդկային, գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները: Սակայն մինչև հիմա թուրքական ռազմարդյունաբերությունը հեռահար ՀՕՊ և ՀՀՊ միջոցների արտադրության ոլորտում հաջողություն չի գրանցել և դրանց ձեռքբերման համար միջազգային մրցույթ է հայտարարել [3]:

2006թ. փետրվարին վարչապետ Էրդողանի նախագահությամբ գումարված Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց երկրի ՀՕՊ-ը ուժեղացնելու համար սկսել համալիրների ու պաշտպանական միջոցների արտադրությունը՝ գերակայությունը տալով տեղական ընկերություններին [4]:

Թուրքական աղբյուրների համաձայն, այժմ Թուրքիայում աշխատանքներ են ընթանում 1000 կմ հեռահարության հրթիռների նախագծման ուղղությամբ, որոնց արտադրությունը սկսվելու է առաջիկա տարիներին: Սակայն, ըստ թուրք մասնագետների, հնարավոր է այդ աշխատանքները ձգձգվեն, ինչը կապված է տեխնոլոգիական բարդությունների հետ: Հրթիռային նախագծերին ի պաշտոնե ավելի լավ ծանոթ պահեստի գեներալ Արմադան Քուլոլլուի համոզմամբ՝ չնայած Թուրքիան արդեն տիրապետում է հրթիռային տեխնոլոգիաների և կարող է ինքնուրույն աշխատանքներ իրականացնել, այնուամենայնիվ, դեռևս բարդություններ կան հեռահար հրթիռների արտադրության ոլորտում: Ըստ նրա՝ ներկայումս ավելի իրատեսական է մինչև 600 կմ հեռահարության հրթիռների արտադրությունը, որի ուղղությամբ տարվում են հստակ աշխատանքներ²:

Roketsan ընկերությունն առաջիկայում նպատակ ունի էլ ավելի մեծացնել արտադրության շրջանակները՝ դառնալով հրթիռաշինության առաջատար ընկերություն: Թուրքական արտադրության *Stinger* զենիթահրթիռային համալիրները դեռևս 2005թ. սկսել են վաճառել Նիդեռլանդներին և մի շարք այլ երկրների:

¹ 2008թ. գարնանը վերջնական որոշում կայացվեց *ATAK* նախագծի իրականացման վերաբերյալ: Որոշումը կայացվեց հոգուտ իտալական *Agusta Westland* ընկերության, որի հետ կնքված պայմանագրով նախատեսվում է Թուրքիայում սկսել 50 միավոր *T129* ռազմական ուղղաթիռների արտադրությունը, որի գործում որպես հիմնական կապալառու է ընտրվել թուրքական *TUSAŞ* Օդագնացության ու տիեզերական արդյունաբերության ընկերությունը: Նախագծի արժեքը կազմում է €1 մլրդ: Արտադրական գործընթացում մասնաբաժին կունենան նաև մի շարք թուրքական ռազմարդյունաբերական ընկերություններ, ինչպես, օրինակ, *Aselesan-ը*՝ ծրագրային ապահովման ու տարբեր սարքավորումների արտադրության գործում: Իտալական ընկերությունն ապահովելու է թուրքական արտադրողներին տեխնոլոգիաներով ու անհրաժեշտ գիտատեխնիկական բազայով: *T129* ռազմական ուղղաթիռների արտադրության ու արտահանման իրավասությունները, ինչպես նաև սեփականության իրավունքը պատկանում են Թուրքիային: Իտալական ընկերությունը նույնիսկ տարածաշրջանային կենտրոն հիմնեց Թուրքիայում՝ շուրջ 20 ինժեներների մշտական աշխատանքային ներգրավվածությամբ: *Hürriyet*, 07.05.2008; <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080505.aspx>

² Türkiye 1000 kilometrelik füzeler üretecek, <http://www.habertürk.com>, 2008-09-03.

Ընկերության կողմից արտադրված համագարկային կրակի ռեակտիվ համալիրները (այսուհետ ՀԿՌՀ) թուրքական արտադրության առաջին նման արտադրանքն էին, որ արտահանվեցին մի շարք երկրներ: Մասնավորապես Միացյալ Արաբական Էմիրությունների հետ ստորագրված համաձայնագրի շրջանակներում ընկերությունը վաճառեց *T-122* ՀԿՌՀ-ներ, ինչպես նաև ստանձնեց այդ երկրի ԶՈՒ-ում գտնվող 122 մմ տրամաչափի ՀԿՌՀ-ների արդիականացման աշխատանքները: Մինչև 2008թ. ընկերության արտահանման ծավալները կազմել են շուրջ \$500 մլն¹:

Ընկերությունը երկար ժամանակ աշխատանքներ է իրականացնում 70 մմ *Cirit 2.75* լազերային կառավարման հրթիռի ստեղծման ուղղությամբ, որոնք պետք է օգտագործվեն *T-129 ATAK* հարվածային ուղղաթիռների կողմից: Այժմ արդեն աշխատանքներ են իրականացվում դրանց խմբաքանակային արտադրության ուղղությամբ²:

Թուրքիան 80-ականների վերջից տարբեր նախագծեր մշակեց զենիթահրթիռային ու հրետանային նոր համալիրների ձեռքբերման, համատեղ արտադրության ու տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ: Թեև թուրքական կողմը նախապատվությունը տալիս էր այդ ոլորտում ԱՄՆ-ի հետ համագործակցությանը, այնուամենայնիվ, տեխնոլոգիաների տրամադրման շուրջ ստեղծված անհամաձայնությունների պատճառով Թուրքիան, որպես այլընտրանք, պայմանագիր ստորագրեց չինական ընկերության հետ՝ *WS-1* հրթիռահրետանային համալիրի համատեղ արտադրության շուրջ: 1996թ. ստորագրված թուրք-չինական ռազմական պայմանագրով չինական կողմի աջակցությամբ Թուրքիայում *Roketsan* և *KALEKALIP* ընկերությունների բազայի հիման վրա 1997թ. սկսվեց չինական *WS-1B* ՀԿՌՀ-ների նմանօրինակը հանդիսացող 100 կմ հեռահարությամբ և 150 կգ մարտագլխիկով *T-300 KASIRGA* համալիրների արտադրությունը՝ \$250 մլն ընդհանուր բյուջեով: Ներկայումս թուրքական բանակն ունի մոտ 30 միավոր *WS-1A/B (Kasirga)* ՀԿՌՀ³:

2002թ. հունվարի 14-ին թուրքական *Milliyet* թերթը հրապարակեց մի հոդված, որում նշվում էր, որ Թուրքիայում արտադրված առաջին բալիստիկ հրթիռի փորձարկումն անցել է հաջող: Թերթի տեղեկատվության համաձայն, «*J missile*» կոչվող հրթիռը չինական տեխնոլոգիաների հիման վրա թուրքական *Roketsan* ընկերության նման առաջին արտադրանքն էր: Դրա առաջին փորձնական արձակումը կատարվել է 2001թ. դեկտեմբերին՝ Ստամբուլի ավիամերձ շրջակայքում: Ըստ թերթի հաղորդման՝ փորձարկված հրթիռը չինական *M-7* հրթիռի կառավարման և ուղղորդման համակարգով ավելի կա-

¹ http://www.tskgv.org.tr/index.php?option=com_content&task=view&id=62&Itemid=70

² Jereed (Cirit), Air-launched rockets, <http://www.janes.com/extracts/extract/jalw/jalwa052.html>

³ <http://theasiandefence.blogspot.com/2009/02/roketan-t-300-kasirga-hurricane.html>

տարելագործված նախատիպն էր՝ 150 կմ գործողության շառավղով [5]: Մինչև 2007թ. այդ նախագծի մասին գրեթե հստակ տեղեկատվություն չկար, միայն նույն թվականին տեղի ունեցած շքերթի ժամանակ պարզ դարձավ, որ նույն՝ «J missile» անվանումը կրող հրթիռը մարտավարական YILDIRIM հրթիռային համալիրն է: Չնայած հիշյալ համալիրի մասին չկան լիարժեք տեղեկություններ, հայտնի է, որ Roketsan ընկերությունը աշխատանքներ է իրականացնում դրանց կատարելագործման ուղղությամբ [6]:

Թուրք-չինական համագործակցության արդյունքում ստացված տեխնոլոգիաների շնորհիվ Թուրքիայում 2002թ. հաջողությամբ սկսվեց մեծ հեռահարության զենիթահրթիռային համալիրների արտադրությունը, որն իրականացվում էր խիստ գաղտնիության պայմաններում, որի մասին հայտարարվեց միայն մի քանի տարի հետո: YILDIRIM B-611 անվանումն ստացած հրթիռային համալիրի հեռահարությունը հասնում է մինչև 250 կմ, իսկ բալիստիկ հրթիռի քաշը՝ 1200 կգ: Ներկայումս այն Թուրքիայի ցամաքային ուժերում գտնվող ամենամեծ հեռահարության զենիթահրթիռային համալիրն է¹: Հարկ է նշել, որ որոշ մասնագետներ կասկածի տակ են դնում նման բնութագրերով համալիրների արդյունավետությունը:

Հրթիռների արտադրության ոլորտում 90-ականների կեսից լուրջ համագործակցություն սկսեց ծավալվել հատկապես Իսրայելի ռազմարդյունաբերական ընկերությունների հետ: 2003թ. սկսեցին քայլեր ձեռնարկվել Իսրայելի հետ ՀՕՊ հրթիռների համատեղ արտադրության ուղղությամբ: Էլմադադում (Թուրքիա) տեղակայված Roketsan ընկերությունը սկսեց համագործակցել իսրայելական Rafael ընկերության հետ՝ Popeye հրթիռների համատեղ արտադրության ոլորտում: Թուրքական կողմը հետագայում էլ շահագրգռություն էր հայտնում Իսրայելի ավիացիոն արդյունաբերության (Israeli Aviation Industry) հետ համատեղ միջին հեռահարության «երկինք-երկիր» հրթիռների, ինչպես նաև Arrow-2 հակաբալիստիկ հրթիռային համալիրների (ATBMs) և AGM-142 Popeye-2 միջին հեռահարության հրթիռների համատեղ արտադրության վերաբերյալ [7]:

2009թ. փետրվարի 22-26-ը Արաբական Միացյալ Էմիրություններում անցկացված պաշտպանական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսին մասնակցող թուրքական Roketsan ընկերությունը \$90 մլն արժողության պայմանագիր ստորագրեց Ալ-Ջաբեր ընկերության հետ՝ հրթիռային համակարգերի արտադրության վերաբերյալ, որոնք ՋՈԻ-ին կհանձնվեն 2010թ.: Համակարգի հիմնական մասը կարտադրվի Թուրքիայում, իսկ որոշ բաղադրամասեր՝ ԱՄԷ-ում: Roketsan ընկերությունը պատրաստվում է առաջիկայում հրթիռների արտադրության վերաբերյալ պայմանագիր ստորագրել Burkan ընկերության հետ [8]:

¹Operasyonda Yeni Füzele de Denendi, <http://www.etikhaber.com>, 17.12.2007; "Türk füzeleleri Yunanistan'ı vurabilir!", <http://www.ajansege.com>, 15.07.2008.

Էլեկտրոնային սարքավորումների ու հրամանատարական հսկողության միջոցների արտադրության ոլորտում գործում է *Aselsan Military Electronics Industries* պետական ընկերությունը: Ընկերության հիմնական արտադրատեսակներն են ռազմական կապի միջոցները, տեղեկատվական, ռադարային, էլեկտրասպտիկական, ինչպես նաև հրթիռային տարբեր բաղադրամասերը, մարտագլխիկներն ու կառավարման համակարգերը: Ընկերության արտադրատեսակներին են պատկանում ներկայումս թուրքական բանակի սպառազինության մեջ գտնվող *ATILGAN Kaideye Monteli Stinger*, *ZIPKIN Kaideye Monteli Stinger* ցամաքային շարժական և *BORA* ծովային զենիթահրթիռային համալիրները¹:

Aselsan ընկերությունն արտադրական ոլորտում արդեն դուրս է եկել սպառազինության միջազգային շուկա՝ մեծացնելով արտահանման տեսակներն ու ծավալները: 2006թ. ընկերությունը հաջողություն գրանցեց էլեկտրասպտիկական նորագույն գիշեր-ցերեկ դիտարկման և թիրախի հայտնաբերման *ASELFLIR-300T* համակարգի ստեղծման գործում, որը կարող է տեղադրվել օդային և ծովային միջոցների վրա: Նախնական փուլում նախատեսվում է 10 նման համակարգով զինել անօդաչու ինքնաթիռները, այնուհետև նաև 50 համակարգ տեղադրել մարտավարական-հարվածային ուղղաթիռների վրա²:

Նշենք, որ վերջին տարիներին Թուրքիան ծրագրել է հիմնովին արդիականացնել երկրի ՀՕՊ համակարգը և զարգացնել ռազմական գործողությունների սեփական ՀՀՊ-ն: Մասնավորապես 2006թ. հունիսին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում պաշտոնապես որոշվեց սկսել ՀՀՊ և ՀՕՊ արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը, ինչի շրջանակներում նախատեսվում է մեծ հեռահարության համալիրների ձեռքբերում: Մինչև հիմա թուրքական բանակում մարտական հերթապահության մեջ չկան մեծ հեռահարության ՀՕՊ համակարգեր: Ներկայումս Թուրքիայի օդային տարածքը հսկում են փոքր հեռահարության *Rapier* և *Stinger*, ինչպես նաև միջին հեռահարության *I-Hawk* արդիականացված զենիթահրթիռային համալիրները³:

2006թ. դեկտեմբերին Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց առաջիկա 10 տարիների պաշտպանական արդյունաբերության նախագծերում առաջնային դերակատարություն հանձնել *Aselsan* ընկերությանը: Հատկապես այդ ընկերությունը ստանձնեց երկրի ՌՕՈՒԻ ինքնաթիռների մի մասի և Ժանդարմական հրամանատարությանը պատկանող ուղղաթիռների ավիացիոն համակարգերի արդիականացման

¹ <http://www.aselsan.com.tr>

² <http://www.gbulten.ssm.gov.tr>, 17.09.2006

³ <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080501.aspx>

աշխատանքներն իրականացնելու պարտավորությունը¹: Չենիթահրթիռային ու հրետանային համալիրների արտադրության ոլորտում գիտական և տեխնոլոգիական մշակումներն իրականացնում է Թուրքիայի գիտական ու տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը (*TUBITAK*), որը կատարում է նաև հետազոտություններ ու զարգացման նախագծեր տարբեր բնագավառներում²:

Փոքր հեռահարության հրթիռահրետանային համակարգերի արտադրության մշակումներն սկսել են իրականացվել 80-ականների կեսերին, Թուրքիայի Ռազմական արդյունաբերության հետազոտական ինստիտուտի (*SAGE*)-ի կողմից, սեփական բյուջեով, որի առաջին արդյունքը եղան *G-67* և *SAGE-71* փոքր հեռահարության հակատանկային հրթիռների մշակումներն ու նախագծման աշխատանքները: Հետագայում ցամաքային ուժերի կարիքներն ապահովելու նպատակով ինստիտուտը *MKEK* ընկերության հետ համագործակցությամբ սկսեց աշխատանքներ իրականացնել միջին ու մեծ հեռահարության հրթիռների արտադրության ոլորտում, ինչի արդյունքը եղավ 107 մմ *Anadolu* և 122 մմ *Mizrak* հրթիռների արտադրությունը [9]:

Թուրքիայի Ռազմական արդյունաբերության հետազոտական ինստիտուտի (*SAGE*), որը գտնվում է *TUBITAK*-ի կազմում, աջակցության ու մշակումների արդյունքում հնարավոր դարձավ Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատարության հետ համագործակցությամբ իրականացնել մի շարք ծրագրեր, որոնցից նշանավորներն են *TOROS 230A* միջին հեռահարության, *TOROS 260A* մեծ հեռահարության հրետանային, հակատանկային համալիրների ու «երկիր-երկիր» դասի հրթիռները³:

Հրետանային զենքերի, պայթուցիկ սարքավորումների, թեթև սպառազինության ու տարբեր զինատեսակների արտադրության մեջ ամենամեծ ընկերությունը Մեքենաշինական և քիմիական արդյունաբերական պետական ընկերությունն է (թուրք. *Makina ve Kimya Endustrisi Kurumu-MKEK*): Սպառազինության արտադրությունն իրականացվում է ընկերության՝ Անկարայում, Քըրքքալեի և Չանքըրըի նահանգներում գտնվող 12 գործարաններում⁴:

Հրետանային, հրաձգային զինատեսակների ու զենիթահրթիռային համալիրների արտադրությունը կենտրոնացված է Քըրքքալեի և Չանքըրըի գործարաններում: *TUBITAK-SAGE*-ի ու *MKEK* ընկերության ստորագրած հա-

¹ <http://www.gbulten.ssm.gov.tr>, 18.12.2006

² 1963թ. հիմնադրված այդ պետական գործակալությունը հիմնականում տնտեսական և տեխնոլոգիական զարգացման ուղղված ծրագրեր է իրականացնում և գործում է որպես թուրքական կառավարությանը կից խորհրդակցական մարմին գիտատեխնոլոգիական ոլորտում: Խորհրդին պատկանող 15 տարբեր հետազոտական ինստիտուտներում աշխատում են շուրջ 1000 մասնագետներ: Տե՛ս Թուրքիայի գիտական և տեխնոլոգիական հետազոտությունների խորհրդի կայքէջ; <http://www.tubitak.gov.tr>

³ *TOROS 230*-ը ունի մինչև 65 կմ, իսկ *TOROS 260*-ը՝ մինչև 110 կմ հեռահարություն, համապատասխանաբար 120 և 145 կգ մարտավառիկներով: Տե՛ս <http://www.sage.tubitak.gov.tr>; Türk füzelerin özelliikleri, <http://www.internethaber.com>, 17.12.2007; http://www.janes.com/extracts/extract/jaa/jaa_1138.html

⁴ <http://www.mkek.gov.tr/english/hakkimizda.aspx>

մաձայնագրով դեռևս 90-ականների կեսին սկսվեց *T-107* և *T-122* ՌԿՀԿ-ների խմբաքանակային արտադրությունը [10]: *T-122 Sakarya* ՀԿՌՀ հետագա կատարելագործման արդյունքում հնարավոր եղավ ապահովել *Roketsan* ընկերության կողմից արտադրված *TR-122*, *TRB-122*, *TRK-122*, *SR-122*, *SRB-122*, *SRK-122* և այլ 122 մմ տրամաչափի հրթիռների կիրառումը: Համալիրի արտադրությունը շարունակվել է մինչև 2008 թվականը, ցամաքային ուժերին է հանձնվել շուրջ 70 համալիր¹:

Ընդհանուր առմամբ, ինչպես հրթիռային արտադրությունը, այնպես էլ ռազմական արդյունաբերությունը², գրանցում են լուրջ հաջողություններ, ինչը հնարավորություն է տալիս, բացի սեփական կարիքներն ապահովելուց, դուրս գալ նաև միջազգային շուկա:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության զարգացումը ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական նպատակներ է հետապնդում, քանի որ թուրքական ընկերությունների ներգրավումը արդյունաբերության մեջ լուրջ խթան կհանդիսանա ընդհանրապես երկրի արդյունաբերական զարգացման համար, կնպաստի այդ ոլորտում զիտական և տեխնոլոգիական նորագույն մշակումներին: Ռազմաքաղաքական առումով այն հնարավորություն կտա Թուրքիային դառնալ տարածաշրջանային ռազմական տերություն և բարձրացնել միջազգային հեղինակությունը³:

Ռազմական արտադրանքի արտահանումը ոչ միայն ֆինանսական եկամուտներ կապահովի, այլև ավելի շատ ռազմավարական, ռազմաքաղաքական առավելություն կունենա Թուրքիայի համար:

Դեռևս 2004թ. մայիսին հրապարակված Պաշտպանական կարիքների ապահովման նոր ռազմավարության համաձայն, Թուրքիան պետք է մեծացներ իր սեփական ռեսուրսների, տեխնոլոգիաների օգտագործումն ու թուրքական ընկերությունների մասնակցությունը պաշտպանական նախագծերում՝ նպատակ ունենալով բարձրացնել տեղական ներդրումների աստիճանը պաշտպանական ծրագրերում՝ այդ նույն թվականի 25% ցուցանիշը մինչև 2010թ. հասցնելով 50%-ի: Հետագա 4 տարիների ընթացքում թուրքական ռազմարդյունաբերական համալիրը լուրջ հաջողություններ գրանցեց՝ ավել-

¹ 40 կմ հեռահարության այդ համակարգը կարող է 80 վայրկյանի ընթացքում արձակել 40 հրթիռ, որոնք ավերածություններ են առաջացնում 500մx500մ տարածությունում: Տե՛ս <http://theasiandefence.blogspot.com/2009/01/roketan-t-122-sakarya-system.html>, 29.01.2009.

² Թուրքիայի ռազմական արդյունաբերության մասին ավելի մանրամասն տե՛ս Լևոն Հովսեփյան, Թուրքիայի ռազմարդյունաբերական համալիրի զարգացման և զինված ուժերի արդիականացման ռազմավարությունը, Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Վերլուծական նյութեր 1, Երևան 2007:

³ Vizyon 2023 Projesi. Savunma, Havacılık ve Uzay Paneli ÖN RAPORU. Ek-4. Savunma Sanayii Hedefleri, http://www.vizyon2023.tubitak.gov.tr/teknolojiongorusu/paneller/savunmauzayvehavacilik/raporlar/SHU_EK4.pdf

լացնելով տեղական արտադրության մասնաբաժինը՝ այն հասցնելով ավելի քան 42%-ի¹:

Վերջին տարիներին Թուրքիայի ռազմական արդյունաբերությունը գրանցել է հաջողություններ նաև ռազմական արտադրանքի արտահանման ծավալների առումով: Պաշտպանական արդյունաբերության ղեկավար Մ.Բայարը հայտարարեց, որ մինչև 2011 թվականը նախատեսվում է թուրքական ռազմարդյունաբերական արտադրանքի արտահանման ընդհանուր ծավալը հասցնել \$1 մլրդ-ի: 2007 թվականի դրությամբ այն կազմել է շուրջ \$400 մլն²:

Թուրքիան ծրագրել է հիմնովին արդիականացնել երկրի ՀՕՊ համակարգը և զարգացնել ռազմական գործողությունների սեփական հակահրթիռային պաշտպանությունը, ինչը շատ բանով կապված է սպառազինությունների աճող մրցավազքի և Մերձավոր Արևելքում զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈՁ) ու հրթիռային տեխնոլոգիաների տարածման խնդիրների հետ [11]:

Մասնավորապես, 2006թ. հունիսին Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում պաշտոնապես որոշվեց սկսել ՀՀՊ և ՀՕՊ արդիականացման լայնածավալ ծրագրի իրագործումը [12]:

Թուրքիայի վարչապետ Ռ.Թ.Էրդողանի գլխավորությամբ պաշտպանական արդյունաբերության քարտուղարության գործադիր կոմիտեն որոշում կայացրեց հեռահար ՀՕՊ համակարգեր ձեռք բերելու մասին: Մրցույթին մասնակցության հայտ ներկայացրին ամերիկյան *Patriot-ը*, ռուսական *C-300ИМУ-2 Фаворит-ը* և ամերիկա-իսրայելյան համատեղ արտադրության *Arrow-2* զենիթահրթիռային համալիրները: Թուրքիան պլանավորում է 2006-2009թթ. ընթացքում գնել մեծ հեռահարության 4 համակարգ՝ \$800 մլն ընդհանուր արժողությամբ, իսկ 2010-2014թթ. գրեթե նույն արժողությամբ ձեռք բերել հակահրթիռային պաշտպանության հեռանկարային 4 համակարգեր: Ռուսական գործարան կատարած այցի ընթացքում Թուրքիայի ռազմական ներկայացուցիչները ռուսական կողմի հետ քննարկել են նաև պաշտպանական տեխնոլոգիաների ոլորտում երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր³: Երկար ժամանակ վերջնական որոշում չէր կայացվում, և 2008թ. մայիսին պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեն վերջնականապես վերահաստատեց ՀՕՊ հեռահար համակարգերի ձեռքբերման անհրաժեշտությունը, որի ընթացքում հաստատվեց նաև չինական համակարգի մասնակցությունը մրցույթին: Մինչև հիմա թուրքական բանակում մարտական հերթապահության մեջ չկան մեծ հեռահարության ՀՕՊ համակարգեր, իսկ օդային տարածքը հսկվում է փոքր և միջին հեռահարության հրթիռներով: Թուրքա-

¹ <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080506.aspx>

² <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20081121.aspx>

³ Правительство Турции приняло решение о проведении тендера на закупку средств ПВО большой дальности; <http://www.arms-tass.su; 21.02.2006>.

կան աղբյուրների համաձայն, որոշ առումներով նախապատվությունը տրվում է ռուսական համալիրներին, սակայն այդ խնդրի շուրջ դեռևս վերջնական մոտեցում չկա: Ձեռք բերվելիք ՀՕՊ համալիրներից երկուսը նախատեսվում է մարտական հերթապահության դնել Անկարայի և Ստամբուլի օդային տարածքները հսկելու համար¹:

2006թ. օգոստոսին Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլը հայտարարեց, որ պատրաստվում են ԱՄՆ-ից \$139 մլն արժողությամբ *SLAM-ER Cruise* տիպի 50 հրթիռներ գնել: Ըստ տեղեկությունների՝ Գյոնուլը հաստատել է այն լուրը, ըստ որի՝ Թուրքիային այդ քանակի հրթիռներ վաճառելու հարցով ԱՄՆ պաշտպանության և անվտանգության համագործակցության վարչությունը դիմել է ԱՄՆ Կոնգրես [13]: Արդեն իսկ ձեռք բերված հրթիռները նախատեսված են հեռահար գործողության և օդից ցամաք հարվածներ հասցնելու համար:

Մինչև վերջերս ԱՄՆ-ը առանձին բանակցություններ էր վարում Թուրքիայի հետ՝ *Patriot Advanced Capability-3* մակնիշի կատարելագործված 6 զենիթահրթիռային կայանքների վաճառքի շուրջ, որի արժեքը կազմում է շուրջ \$1 մլրդ²:

Ամերիկյան առաջատար *Lokheed Martin* ընկերությունը բանակցություններ էր վարում թուրքական *Aselsan* և *Roketsan* ռազմարդյունաբերական ընկերությունների հետ՝ տեխնոլոգիաների տրամադրման շուրջ: Սպասվում էր, որ Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը կհրապարակի փոքր հեռահարության հրթիռային պաշտպանության համակարգերի ծրագրի վերաբերյալ իր պայման-առաջարկությունները՝ նախագծի հանդեպ հետաքրքրություն դրսևորող օտարերկրյա ընկերությունների համար: Պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը փորձում էր պարզել, թե որտեղ և ինչպես կարող են տեղական ընկերություններն աջակցել ծրագրին, քանի որ նախատեսվում էր արտադրության մեջ զգալի մասնաբաժին հատկացնել տեղական ռազմական արդյունաբերության ընկերություններին: *Patriot-ը* նախատեսված է ինքնաթիռների և թևավոր հրթիռների դեմ օգտագործելու համար, բայց կարող է վնասագերծել նաև հեռահար բալիստիկ հրթիռները: Ըստ ռազմական վերլուծաբանների՝ վերոնշյալ համալիրը կարող է մրցել ռուսական *S-300* ՀՕՊ համակարգի հետ: *PAC-3* համալիրն ամերիկյան խոշոր հրթիռաշինական *Raytheon* ընկերության *MIM-104 Patriot* միջին հեռա-

¹ <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080501.aspx>

² Թուրքական մամուլի հաղորդմամբ՝ ԱՄՆ հայկական և հունական լրբիները ձեռնարկումներ էին սկսել ռազմական այդ գործարքը խոչընդոտելու համար: Նրանք նամակ էին հղել Կոնգրեսի ռազմական ծառայությունների և միջազգային հարաբերությունների հանձնաժողովներին և առանձին կոնգրեսականների, որտեղ ասվում էր, որ զենքերի վաճառքով ռազմական հավասարակշռությունը Կիպրոսում կխախտվի, և որ այդ զենքերով հնարավոր է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում Ադրբեջանին աջակցող Թուրքիան սպառնա Հայաստանին: Ասվում էր, որ այդ վաճառքը չի կարող ծառայել ԱՄՆ շահերին և արժեքներին, և որ հրթիռների վաճառքի հետ կապված ծրագիրը պետք է վերանայվի: *Milliyet*, 15.05.2006.

հարության «երկիր-երկինք» դասի հրթիռներով *PAC-2-ի* արդիականացված տարբերակն է: Այն դարձավ աշխարհի ռազմական առումով երաշխավորված միակ հակաբալիստիկ հրթիռային պաշտպանության համակարգը 1991թ. Պարսից ծոցի պատերազմի ժամանակ [12]:

Թուրքիայի հրթիռային համակարգերի արդիականացման ծրագրի շրջանակներում պաշտպանական արդյունաբերության քարտուղարության առաջարկ-փաթեթ ներկայացվեց հարավաֆրիկյան *Denel* ընկերության կողմից, որն առաջարկում էր «երկիր-երկինք» դասի *Umkhonto* կոչվող հրթիռներ վաճառել այդ երկրին: Նման առաջարկի հետ կապված տեխնոլոգիական հնարավորություններն ու պայմաններն ուսումնասիրվել են *Roketsan* ընկերության մասնագետների՝ Հարավաֆրիկյան Հանրապետություն կատարած այցի ընթացքում: Շուրջ 130 կգ ընդհանուր քաշով, 23 կգ ծանրությամբ մարտական մաս կրող և 12 կմ հեռահարության այդ հրթիռը կարող է միաժամանակ 8 թիրախի հարվածել¹: Չնայած վերջնական որոշում այդ հարցում չկա, այնուամենայնիվ, թուրքական ընկերությունը պատրաստակամություն է հայտնել համատեղ արտադրության շուրջ ծրագրեր մշակելու վերաբերյալ:

Գրեթե նույն ժամանակահատվածում տեղեկատվություն եղավ, որ ամերիկյան *Textron Systems* ընկերությունը, որն ակտիվորեն համագործակցում է ԱՄՆ ռազմաօդային ուժերի հետ, Թուրքիային է վաճառել ցամաքային և հատկապես ծովային ռազմական գործողությունների համար նախատեսված *CBU-105* տիպի կառավարվող «երկինք-երկիր» դասի հրթիռներ՝ այդ երկրի ռազմաօդային ուժերի *F-16* ուժակոծիչների վրա տեղադրելու համար²:

2007թ. հունվարին Պաշտպանական արդյունաբերության քարտուղարությունը ցամաքային ուժերի հրամանատարության սպառազինության ուժեղացման շրջանակներում 80 հատ միջին հեռահարության հակատանկային հրթիռային համալիրների (յուրաքանչյուր այդ զենքի համակարգի գլխին 10 արձակվող հրթիռ, ընդհանուր առմամբ 800 հրթիռ - *OMTAS*) ձեռքբերման նպատակով մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունները³: Երկար ձգձգումներից հետո թուրքական կողմը կատարեց իր վերջնական ընտրությունը և չնայած թուրքական սպառազինության հիմնական մասն ամերիկյան և իսրայելական արտադրության է, այնուամենայնիվ, նախապատվությունը տրվեց ռուսականին: 2008թ. ապրիլին Թուրքիայի Ռազմական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հաստատվեց միջին հեռահարության հակատանկային հրթիռային համալիրների ձեռքբերման \$200 մլն արժողության ծրագիրը, որով թուրք զինվորականները նախապատվությունը տվեցին ռուսական Ռոստրոնոնէքսպորտին պատկանող *Корнет* համակարգին: Ըստ նախատեսվածի՝

¹ [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 10.10.2006

² [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 05.11.2006

³ [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 05.02.2007

Թուրքիան գնել է 80 այդպիսի համակարգ և 800 հրթիռ¹: Մրցույթին մասնակցում էին ամերիկյան *Raytheon Tow* կոնսորցիումը և իսրայելական *Rafael* պետական արդյունաբերական ընկերությունը, որոնց մերժումը կապված է ավելի շատ այդ երկրների նկատմամբ քաղաքական ճնշում գործադրելու Թուրքիայի մարտավարական քայլի հետ:

2007թ. հուլիսին ԱՄՆ Կոնգրեսը հավանություն տվեց Պենտագոնին՝ Թուրքիային վաճառել շուրջ 51 *Block II Tactical Harpoon* հականավային հրթիռներ, ինչպես նաև առանձին սարքավորումներ և անհրաժեշտ ծառայություններ տրամադրել՝ \$159 մլն ընդհանուր արժողությամբ: Ձեռք բերված հրթիռներն օգտագործվելու են երկրի ռազմածովային ուժերի (այսուհետ ՌԾՌԻ) կողմից՝ թարմացնելով և ավելի ուժեղացնելով ՌԾՌԻ գոյություն ունեցող հրթիռային զինանոցը²:

Թուրքական կառավարությունը նաև դիմել էր ԱՄՆ-ին «երկինք-երկինք» դասի միջին հեռահարության կատարելագործված *AIM-120C-7 AMRAAM* հրթիռներ, ինչպես նաև 2 հրթիռային կառավարման-ուղղորդման համակարգ, առանձին բաղադրամասեր ու ծառայություններ գնելու վերաբերյալ (\$157 մլն ընդհանուր արժեքով): 2008թ. սեպտեմբերին պարզ դարձավ, որ ԱՄՆ Պաշտպանական անվտանգության համագործակցության գործակալությունը տեղեկացրել է Կոնգրեսին այդ վաճառքի հնարավորության մասին [15]:

Չնայած Թուրքիան իր ՋՌԻ նորագույն սպառազինության կարիքներն ապահովելու համար օգտվել է իր արևմտյան դաշնակիցներից, ինչպես նաև Իսրայելից, վերջին տարիներին լուրջ ծրագրեր է իրականացնում տեղական բազայի վրա ռազմական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ: Պաշտպանական արդյունաբերության ռազմավարության հիմնադրույթներն են՝ ՋՌԻ կարիքների կայուն ապահովումը, այդ նպատակով բարձր տեխնոլոգիական սպառազինության տեղական արտադրության ապահովումը, ազգային ռազմարդյունաբերական ենթակառուցվածքների ընդլայնումը, տեղական հիմքի վրա սեփական ռազմական տեխնոլոգիաների զարգացումը, արտասահմանյան առաջատար ընկերությունների հետ համատեղ նախագծերի մշակումը:

Ռազմարդյունաբերության ոլորտում գրանցած հաջողություններով հանդերձ՝ Թուրքիայում դեռևս անհրատեսական է համարվում միջին և առավելապես մեծ հեռահարության արդյունավետ ՀՕՊ համալիրների արտադրությունը, ինչը կապված է այդ ոլորտում Թուրքիայում անհրաժեշտ տեխնոլոգիաների ու փորձի պակասի, ինչպես նաև համապատասխան փորձառու ինժեներական ստրուկտուրական բազա չունենալու հետ:

¹ [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 11.04.2008

² <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070702.aspx>

Անվտանգության նոր մարտահրավերները, քրդական հիմնախնդրի առկայությունը, մերձավորարևելյան տարածաշրջանում վտանգավոր և անկանխատեսելի զարգացումները, Իրանի միջուկային ծրագիրն ու դրա շուրջ ստեղծված միջազգային իրադրությունը, Մերձավոր Արևելքում սպառազինությունների աճող մրցավազքն ու հրթիռային տեխնոլոգիաների զարգացումն, այսպիսով, այդ երկրի համար առաջնահերթ են դարձնում տարածաշրջանում ռազմական գերակայության ապահովումը, զարգացած ՀՕՊ և ՀՀՊ համակարգերի առկայությունը:

Ապրիլ, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Elliot Hen-Tov*, The Political Economy of Turkish Military Modernization, Middle East Review of International Affairs, Vol.8, No 4, (December 2004), p 50.
2. *Косиков С.*, Военно-политический потенциал Турции, Востокоевденный сборник (выпуск второй) М., 2001, стр. 212-217, <http://www.middleeast.org.ua>
3. Yeni Şafak, 03.10.2005.
4. Zaman, 18.02.2006.
5. *Сардановский С.Л.*, Аспекты политической безопасности Черноморья, <http://www.bsarg.crimeainfo.com/03-Sardanovsky.rtf>
6. *Arda Mevlutoglu*, Turkish Surface to Surface Rocket and Missile Systems – III, Air Combat Information Group (ACIG), http://s188567700.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=192&Itemid=47, 21.07.2008.
7. *Eugene Kogan*, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry; Conflict Studies Research Centre; Middle East Series 05/43; [http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05\(43\)-EK](http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05(43)-EK), p. 10-11.
8. Hürriyet, 23.02.2009.
9. *Arda Mevlutoglu*, Turkish Surface to Surface Rocket and Missile Systems – II, Air Combat Information Group (ACIG), http://s188567700.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=191&Itemid=47
10. Вооруженные силы и военная экономика стран Азии, информационно-аналитический справочник, 2000, с. 77-78.
11. *Մինասյան Ս.*, Իսրայելա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցությունը քրդական հիմնախնդրի համատեքստում, 21-րդ ԴԱԸ, N 4, Երևան, 2006, էջ 86:
12. Turkish Daily News, 01.04.2007.
13. Milliyet, 10.08.2006.
14. Zaman, 29.09.2008.

СИСТЕМЫ ПВО И ПРО ТУРЦИИ

Левон Овсепян

Резюме

В рамках широкомасштабной стратегии по модернизации ВС Турции планируется основательное модернизирование системы ПВО страны и развитие системы противоракетной обороны, что обусловлено рядом региональных и международных военно-политических факторов. Исполнительный комитет оборонной промышленности Турции окончательно утвердил необходимость приобретения комплексов ПВО большой дальности, так как на боевом дежурстве в турецких ВС не имеется подобного типа комплексов. До сегодняшнего дня воздушное пространство страны контролируется ЗРК малой и средней дальности. В сфере оборонной промышленности Турции реализовывались и продолжают реализовываться работы по проектированию и производству ЗРК малой и средней дальности и ракетно-артиллерийских систем различных типов в рамках сотрудничества как с местными, так и иностранными компаниями. На сегодняшний день, осуществляются активные работы, нацеленные на обеспечение достижения нового качества в данной сфере.

Հուշագիր հեղինակին

«21-րդ դար» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ դար» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ դար» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*):
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), շ. (ռուսերեն), բ. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, շ. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝
 1. *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
 2. *Շարիպովա Ք.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
 3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԲ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 27.05.2009թ.
Թիվ 3 (25), 2009թ.
Տպաքանակը՝ 300:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում